



Implemented by  
**giz** Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH



**EU4Business**



## Իրավաբանների հայկական ասոցիացիա

Բարենպաստ բիզնես միջավայր. մարտահրավերներ և առաջարկություններ  
Զեկույց

Երևան,  
2017թ.

Սույն զեկույցը պատրաստվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագետների կողմից՝ «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի շրջանակներում: Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագիտական թիմը իր երախտագիտություն է հայտնում ՀՀ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին համագործակցության համար:

*«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից: Այն իրականացվում է ԳՄՀՀ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում:*

*«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը հանդիսանում է Եվրոպական միության «ԵՄ-ն՝ Բիզնեսի համար» և «ԵՄ-ն՝ Նորարարության համար» նախաձեռնությունների մաս:*

Սույն զեկույցը պատրաստվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագետների կողմից՝ «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի շրջանակներում: Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագիտական թիմն իր երախտագիտություն է հայտնում ՀՀ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների և տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներին համագործակցության համար: «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում: «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը հանդիսանում է Եվրոպական միության «ԵՄ-ն՝ Բիզնեսի համար» և «ԵՄ-ն՝ Նորարարության համար» նախաձեռնությունների մաս:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության, Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կամ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության տեսակետները:

© Իրավաբանների հայկական ասոցիացիա, 2017 թ.

Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:

«Բարենպաստ բիզնես միջավայր. մարտահրավերներ և առաջարկություններ» զեկույցը պատրաստել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձագիտական խումբը՝ հետևյալ կազմով.

1. **Կարեն Զադոյան**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ,
2. **Քարլ Ուլբրիխտ**, «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի միջազգային փորձագետ,
3. **Սյուզաննա Սողոմոնյան**, «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի ազգային փորձագետ,
4. **Մարատ Ատովյան**, «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի ազգային փորձագետ,
5. **Մարիամ Զադոյան**, «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի գլխավոր իրավաբան:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Ջեկույցի կազմման մեթոդաբանություն	5
ՄԱՍ 1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ	7
1. ՀԱՐԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ	7
A. Եկամտային հարկ	7
B. Շրջանառության հարկ	17
C. Կայունություն	22
D. Ինքնազբաղված անձանց հարկային արտոնություններ	23
E. Գերավճարներ	26
2. ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏ	27
A. Գործարքի գնի մեթոդ	27
B. ՀՀ տարածք տրանսպորտային միջոցների ներկրում	31
C. Հետքացթողումային հսկողության բարելավում	34
3. ԱԶՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	36
A. Մենաշնորհ և բիզնեսի ու քաղաքականության սերտաձում	36
B. Հակամրցակցային համաձայնություններ	41
C. Պետական օժանդակության տրամադրում	45
D. Պատասխանատվություն տնտեսական մրցակցության բնագավառի իրավախախտումների համար	46
4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ	48
A. Գնումների բողոքարկում	48
B. Գնումների գնահատում	55
C. ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի շահագործում	56
D. Հայտի ապահովում	57
5. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ՝ ԲԻԶՆԵՍ ՈԼՈՐՏ	58
A. Գործարար շահերի պաշտպան	58
B. Բիզնեսների քրեական պատասխանատվություն	61
C. Բիզնեսին մասնավոր դետեկտիվների աջակցություն	66
D. Կոռուպտիվների կողմից բիզնեսի իրականացում	74
ՄԱՍ 2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	85
1. Հարկային ոլորտ	85
2. Մաքսային ոլորտ	87
3. Ազատ տնտեսական մրցակցության ոլորտ	88
4. Պետական գնումների ոլորտ	90
5. Համակարգային՝ բիզնես ոլորտ	92
Աղյուսակների և գծապատկերների ցանկ	95

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ֆինանսավորմամբ գործարկվող «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագիրն իրականացվել է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Եվրոպական բիզնես ասոցիացիայի հետ համատեղ կոնսուրցիումի հետ համագործակցությամբ:

Օրագրի հիմնական նպատակն էր մեծացնել գործարար անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների և բիզնես ասոցիացիաների ազդեցությունը՝ ՓՄՁ ոլորտի բարեփոխումները խթանելու համար:

Բացի այդ, ծրագրով ուժեղացել է կառավարություն-մասնավոր հատված երկխոսությունը, գործարկվել է նորարարական կայք՝ Բիզպաշտպան ([www.bizprotect.am](http://www.bizprotect.am) / [www.bizpashtpan.am](http://www.bizpashtpan.am)), որն ապահովում է բիզնես ոլորտի ազդարարների (whistleblowers) կողմից տեղեկատվության հայտնումն ու նրանց գաղտնիության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի հատկորոշումը՝ իրավիճակը գնահատելու և համապատասխան բարեփոխումների առաջարկներ մշակելու համար:

Օրագրի շրջանակներում կազմվել է նաև «Բարենպաստ բիզնես միջավայր. մարտահրավերներ և առաջարկություններ» զեկույցը:

### Զեկույցի կազմման մեթոդաբանություն

Զեկույցը կազմվել է՝ համատեղելով հետևյալ մեթոդները.

- Ուսումնասիրվել են հարկային, մաքսային, պետական գնումների և ազատ մրցակցության և առհասարակ բիզնես ոլորտում մի շարք միջազգային կոնվենցիաներ, ՀՀ և միջազգային իրավական ակտեր:
- Ուսումնասիրվել են մի շարք ոլորտային ՀՀ և միջազգային զեկույցներ:
- Անցկացվել են մի շարք սեմինարներ, կլոր սեղաններ և առանց փողկապի հանդիպումներ Երևանում և 4 մարզերում (Շիրակ, Լոռի, Սյունիք և Գեղարքունիք) վերոնշյալ ոլորտների պետական, մասնավոր և հասարակական սեկտորների շահագրգիռ կողմերի հետ (ընդհանուր թվով՝ շուրջ 335) և հաշվի են առնվել մասնակիցների կողմից ներկայացված առաջարկությունները:

- Երևանում և 4 մարզերում (Շիրակ, Լոռի, Սյունիք և Գեղարքունիք) իրավաբանական խորհրդատվություն է մատուցվել բիզնեսի, մասնավորապես՝ ՓՄՁ-ների **1134 ներկայացուցչի**, որոնք ևս վեր են հանել խնդիրներ
- **Թվով 46** հայտեր են ներկայացվել Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գործարկվող՝ բիզնես ոլորտի ազդարարման ԲիզՊաշտպան հարթակի միջոցով:
- Իրավաբանական խորհրդատվության մատուցման և Բիզպաշտպան կայքով ստացված հայտերի վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գրություններ են ներկայացվել համապատասխան պետական մարմիններ, և ստացվել են պատասխաններ:
- Իրականացվել են **թվով 6** լրագրողական հետաքննություններ բիզնես ոլորտի խնդիրների վերաբերյալ:

# ՄԱՍ 1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

## 1. ՀԱՐԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ

### A. Եկամտային հարկ

Ծրագրի իրականացման շրջանակներում շահառուները առաջ են քաշել ռիսկեր եկամտային հարկի դրույքաչափերի հարկման բնույթի և փոփոխության վերաբերյալ: Հարկ է նշել, որ ըստ հարկման բնույթի հարկի դրույքաչափերը լինում են՝

- **պրոգրեսիվ**, երբ եկամտի աճին գուզընթաց մեծանում է հարկի դրույքաչափը,
- **ռեգրեսիվ**, երբ եկամտի աճին գուզընթաց նվազում է հարկի դրույքաչափը,
- **համամասնական**՝ անկախ եկամտի աճից հարկի դրույքաչափը մնում է նույնը:

2016թ.-ի հոկտեմբերի 10-ին ընդունվել է ՀՀ հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), որն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ից: Նախկին կարգավորումները եկամտային հարկի ամսական հարկվող եկամտի չափի և հարկի գումարի վերաբերյալ արտացոլված են Աղյուսակ 1-ում, որոնք կարգավորվում են «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով:

**Աղյուսակ 1. Եկամտային հարկի ամսական հարկվող եկամտի չափը և հարկի գումարը ըստ նախկին կարգավորումների**

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 120000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
120000-2000000 դրամ	29280 դրամին գումարած 120000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2000000-ից ավելի դրամ	518080 դրամին գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Օրենսգրքով նախատեսված փոփոխությունների համաձայն հարկման բազայի ամսական մեծությունը և եկամտային հարկի դրույքաչափն ունի հետևյալ տեսքը, որն արտացոլված է Աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Եկամտային հարկի ամսական հարկվող եկամտի չափը և հարկի գումարը ըստ ներկա կարգավորումների**

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչև 150000 դրամը ներառյալ	23 տոկոս

150000-ից մինչև 2000000 դրամը ներառյալ	34500 դրամ՝ գումարած 150000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը
2000000-ից ավելի դրամ	552500 դրամ՝ գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Սույն աղյուսակների վերլուծությունից պարզ է դառնում, որ, թեև նվազագույն հարկի դրույքաչափը 24.4%-ից դառնում է 23%, սակայն հաջորդ դրույքաչափը բարձրանում է՝ դառնալով 28%: Բացի Աղյուսակ 1-ում արտացոլված եկամտային հարկի ընդհանուր կարգավորումներից, ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված են նաև այլ դրույքաչափեր:

Օրենսգրքի նախագծի **հիմնավորումում** անդրադարձ է կատարվել վերոնշյալ փոփոխություններին. *«վերանայել եկամտային հարկի դրույքաչափերը՝ հարկման համակարգը դարձնելով իրապես պրոգրեսիվ: Եկամտային հարկի դրույքաչափերի վերանայումը անհրաժեշտ է հարկման արդարացիության սկզբունքի, ինչպես նաև պետության վերաբաշխողական գործառույթի կատարելագործման տեսանկյունից, քանի որ դրանց կիրառությունը ենթադրում է, որ մինչև միջին աշխատավարձի մակարդակում գտնվող եկամուտների համար հարկային բեռը իջեցվում է, իսկ դրանից բարձր եկամուտների համար՝ բարձրացվում: Ընդ որում, եկամտային հարկի դրույքաչափերի վերանայման առաջարկությունը կատարվել է տարբեր եկամտային խմբերում գտնվող անձանց թվաքանակի ու եկամուտների բաշխվածության վրա դրա ազդեցության մանրամասն վերլուծության արդյունքների հիման վրա»:* Հարկ է նշել, որ հարկային օրենսգրքի հոկտեմբերի նախագծում առաջարկվում էր հակառակը՝ նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափը և պրոգրեսիվ հարկման մեխանիզմի փոխարեն ներդնել միասնական 20% դրույքաչափ: Հիմնավորումների մեջ նշվում էր, որ *եկամտային հարկի ներկայիս դրույքաչափը բարձր է, ինչը հանգեցնում է եկամուտների թերհայտարարագրման, աղքատության ու արտագաղթի աճի:*

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) **դիրքորոշումը** վերոնշյալի վերաբերյալ հետևյալն է. *«Չեմ ասում, թե սա շատ լավ մեխանիզմ է: Բայց մենք այլ մեխանիզմներ առաջարկելու համար պետք է հասկանանք նաև, թե ինչ աղբյուրների հաշվին ենք կարողանում ապահովել հարկաբյուջետային կայունությունը»<sup>1</sup> «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները Հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ» վերլուծությունում ևս նշված է, որ նախագծով առաջարկվող տարբերակն **հետընթաց է:***

<sup>1</sup>Վ. Միրումյան , <http://www.azatutyun.am/a/27795623.html>



Աժ **տնտեսագիտական** վարչությունը ևս բավականին կոշտ է արձագանքել այս հիմնավորմանը. Մասնավորապես, եզրակացության մեջ մատնանշված են նախագծի հոդվածներ, որոնք «ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր» են պարունակում: Հանձնաժողովի կարծիքով եկամտային հարկի դրույքաչափերի առաջարկվող «փոփոխությունները հետապնդում են գլխավորապես ֆիսկալ նպատակներ՝ ծանրացնելով եկամտային հարկ վճարողների գերակշիռ մեծամասնության հարկային բեռը: Սրա արդյունքում, կարծում ենք, զգալիորեն կնվազի վարձու աշխատողների հիմնական զանգվածի փաստացի գնողունակությունը» և կնպաստի «աշխատուժի արտահոսքի մեծացմանը (հատկապես՝ դեպի Ռուսաստանի Դաշնություն, որտեղ այս հարկի դրույքաչափը կազմում է 13-15 տոկոս):<sup>2</sup> Այլ տնտեսագետներ և տնտեսագետ-գիտնականներ ևս անդրադարձել են այս խնդրին: Մասնավորապես, Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի ավագ տնտեսագետ Գոհար Գյուլումյանը նշել է,<sup>3</sup> որ եթե եկամտային հարկի ընդգրկվածության խնդիրը լուծվի՝ եկամտային հարկի մեջ ներառվեն թե այլ եկամուտները, և թե բոլոր հարկատուները, բազան ընդլայնվի, այդ դեպքում կարելի է վերանայել դրույքաչափը: Վերոնշյալ խնդիրը չի վրիպել նաև **գործարարների և բիզնեսի շահերի պաշտպանությամբ զբաղվող ասոցիացիաների** ուշադրության կենտրոնից:

Այժմ, անցնենք սույն հարցի վերաբերյալ **միջազգային փորձի ուսումնասիրմանը: Նախ, անհրաժեշտ է վերլուծել Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) կարգավորումները խնդրո առարկայի վերաբերյալ:**

Այսպես, **Ռուսաստանի Դաշնության**<sup>4</sup> հարկային օրենսգրքով նախատեսված են ֆիզիկական անձանց եկամտային հարկի 5 դրույքաչափեր: Հարկային տարբեր դրույքաչափերը սահմանված են՝ կախված ինչպես եկամուտների տեսակներից, այնպես էլ՝ հարկ վճարողների տարատեսակներից: Այսպիսով, նախատեսված են հետևյալ դրույքաչափերը՝ 9%, 13%, 15%, 30%, 35%: Առավել մանրամասներն արտահայտված են Աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Եկամտային հարկի դրույքաչափերը Ռուսաստանի Դաշնությունում**

Դրույքաչափ	Կիրառելիություն
<b>9%</b>	Սույն դրույքաչափով եկամտային հարկով հարկման է ենթակա հետևյալը. <ul style="list-style-type: none"> <li>մինչև 2015թ. ստացված շահաբաժինները,</li> </ul>

<sup>2</sup><http://www.armtimes.com/hy/article/87049>

<sup>3</sup><http://b4b.am/archives/news/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D6%82-%D5%A7-%D6%83%D5%B8%D5%AD%D5%BE%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B4%D5%BF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B0%D5%A1%D6%80%D5%AF%D5%AB-%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%B5>

<sup>4</sup><https://www.nalox.ru/rn77/taxation/taxes/ndfl/>

	<ul style="list-style-type: none"> <li>• մինչև 2007թ. հունվարի 1-ը թողարկված՝ գրավով ապահովված պարտատուների տոկոսները,</li> <li>• գրավով ապահովված հավատարմագրային կառավարիչների կողմից ստացված եկամուտները: Նման եկամուտներ կարող էին ստացվել մինչև 2007թ. հունվարի 1-ը գրավով ապահովման կառավարչի կողմից տրված գրավի ապահովման սերտիֆիկատների ձեռք բերման հիմքով:</li> </ul>
13%	<p>Եթե անձը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության հարկային ռեզիդենտ, նրա եկամտի մեծ մասը կհարկվի սույն դրույքաչափով: Նման եկամուտների թվին են դասվում, օրինակ, աշխատավարձը, քաղաքացիաիրավական պայմանագրերով վարձատրությունը, գույքի վաճառքից ստացված եկամուտները, ինչպես նաև որոշ այլ եկամուտներ:<sup>5</sup></p> <p>Բացի այդ, սույն դրույքաչափով եկամտային հարկ գանձվում է Ռուսաստանի Դաշնության հարկային ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանցից հետևյալ դեպքերում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքների կատարումից,</li> <li>• «ՌԴ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի համաձայն՝ բարձր որակավորում ունեցող մասնագետի կողմից աշխատանքների կատարումից,</li> <li>• «Ռուսաստանի Դաշնությունում՝ արտերկրում ապրող հայրենակիցների կամավոր վերաբնակեցման խթանում» պետական ծրագրի մասնակիցների, ինչպես նաև նրանց այն ընտանիքների անդամների, որոնք միասին տեղափոխվել են Ռուսաստանի Դաշնություն՝ որպես մշտական բնակության վայր, կողմից աշխատանքների կատարումից,</li> <li>• Ռուսաստանի Դաշնության պետական դրոշի ներքո նավարկող նավերի անձնակազմի անդամների աշխատանքային պարտականությունների կատարումից:</li> </ul>
15%	<p>Սույն դրույքաչափով եկամտային հարկով հարկվում են այն շահաբաժինները, որոնք ստացվել են ռուսաստանյան</p>

<sup>5</sup>Ի սկզբանե շահաբաժինները հարկվել են 9% դրույքաչափով, սակայն 2015թ. հունվարի 1-ից վերջիններս ևս հարկվում են 13% դրույքաչափով:

	կազմակերպությունների այն ֆիզիկական անձանց կողմից, որոնք Ռուսաստանի Դաշնության հարկային ռեզիդենտներ չեն համարվում:
<b>30%</b>	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բոլոր այլ եկամուտները հարկվում են սույն դրույքաչափով:
<b>35%</b>	<p>Սույն դրույքաչափը առավելագույնն է և կիրառվում է հետևյալ եկամուտների նկատմամբ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանված չափերը գերազանցող ցանկացած շահումների և մրցանակների արժեքներ, որոնք ստացվում են մրցույթների, խաղերի և այլ միջոցառումների անցկացման ժամանակ, որոնց նպատակն է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գովազդումը,</li> <li>• բանկերի ավանդներից ստացված՝ սահմանված չափերը գերազանցող եկամուտների տոկոսները,</li> <li>• հարկ վճարողների կողմից ստացված սահմանված չափերը գերազանցող փոխառության (վարկային) միջոցների տոկոսների խնայողությունների գումարը,</li> <li>• վարկային սպառողական կոոպերատիվի անդամների (փայտերերի) դրամական միջոցների օգտագործման դիմաց տրված վճարները, ինչպես նաև գյուղատնտեսական վարկային սպառողական կոոպերատիվի անդամների կամ ասոցացված անդամների կողմից տրամադրված վարկի տեսքով ստացված՝ գյուղատնտեսական վարկային սպառողական կոոպերատիվի միջոցների օգտագործման սահմանված չափը գերազանցող տոկոսները:</li> </ul>

**Բեկառուսում**<sup>6</sup> 2017թ.-ի դրությամբ եկամտային հարկի հաշվարկման սկզբունքները մնացել են նույնը, ինչ 2015 և 2016 թվականներին էին: Բարձր տեխնոլոգիաների պարկի (Парк высоких технологий) ռեզիդենտների եկամտային հարկը կազմում է 9%: Ֆիզիկական անձանց համար կիրառվում է եկամտային հարկի միասնական դրույքաչափը՝ 13%, անհատ ձեռնարկատերերի և մասնավոր նոտարների համար՝ 16%: Ստացված շահաբաժինների գծով եկամտային հարկի չափը կազմում է 13%, ֆիզիկական անձանց համար ավելացվել են հարկեր

<sup>6</sup>[https://www.femida.by/index.php?page=se\\_nalog1](https://www.femida.by/index.php?page=se_nalog1)

բանկային ավանդների տոկոսներից ավելացված հարկերը, սակայն դա չի փոխում Բելառուսում հարկման ընդհանուր պատկերը: Առավել մանրամասներն արտահայտված են Աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. Եկամտային հարկի դրույքաչափերը Բելառուսում**

Եկամուտները, որոնք ենթակա են հարկման եկամտային հարկով	Հարկային դրույքաչափ
Ցանկացած եկամուտ, բացառությամբ ներքոշարադրյալի	<b>13%</b>
Շահաբաժինների տեսքով ստացված եկամուտ	<b>13%</b>
Բելառուսի Հանրապետության հարկային ռեզիդենտներ չճանաչված և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող հարկատու ֆիզիկական անձանց կողմից ապրանքների, այլ գույքի վաճառքից (աշխատանքների, ծառայությունների մատուցումից) ստացված եկամուտ	<b>16%</b>
Բարձր տեխնոլոգիաների պարկի ռեզիդենտներից աշխատանքային պայմանագրերի հիման վրա ֆիզիկական անձանց կողմից ստացված եկամուտներ (բացառությամբ այն աշխատողների, ովքեր իրականացնում են շենքերի, շինությունների, հողերի սպասարկման և անվտանգության աշխատանքներ)	<b>9%</b>
Բարձր տեխնոլոգիաների պարկի ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի կողմից ստացված եկամուտներ	<b>9%</b>
Բարձր տեխնոլոգիաների պարկի ռեզիդենտներ չհամարվող և նոր և բարձր տեխնոլոգիաների ոլորտում սահմանված կարգով գրանցված բիզնես-ձրագրերի իրականացման մեջ ներգրավված ֆիզիկական անձանց կողմից, աշխատանքային պայմանագրերի հիման վրա, ստացված եկամուտներ	<b>9%</b>
Ձեռնարկատիրական և մասնավոր նոտարական գործունեության իրականացումից ստացված եկամուտներ	<b>16%</b>

**Ղրղզըստանում**<sup>7</sup> եկամտային հարկը դասվում է համապետական հարկատեսակների շարքին: Եկամտային հարկի դրույքաչափը սահմանված է **10%**: Եկամտային հարկ վճարող են հանդիսանում հետևյալը.

- 1) եկամուտ ստացող Ղրղզստանի քաղաքացի հանդիսացող անձ,
- 2) եկամուտ ստացող Ղրղզստանի քաղաքացի չհանդիսացող, սակայն ռեզիդենտ անձ,
- 3) Ղրղզստանի քաղաքացի և ռեզիդենտ անձ չհանդիսացող, ով եկամուտ է ստանում Ղրղզստանում գտնվող աղբյուրից,
- 4) հարկային գործակալ, ով Ղրղզստանում գտնվող աղբյուրից եկամուտ է վճարում ֆիզիկական անձին:

Ղրղզստանի հանրապետության աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների առաջացման դեպքում ամսական եկամուտը, որը ենթակա է հարկման եկամտային հարկով, չի կարող պակաս լինել Ղրղզստանի հանրապետության կառավարության կողմից սահմանված նվազագույն գնահատվող եկամտից (минимальный расчетный доход):

Նվազագույն գնահատվող եկամուտը չի կիրառվում աշխատողների եկամուտների վրա, որոնք ստացվում են աշխատանքի վարձատրության տեսքով հետևյալ դեպքերում.

- բյուջետային միջոցների հաշվին կատարված աշխատանք,
- համատեղությամբ կատարված աշխատանք,
- կրտսեր սպասարկող անձնակազմի կողմից կատարված աշխատանք,
- բնակարանատերերի ընկերակցության (товарищество собственников жилья), համատիրությունների, բնակարանա-շինարական, ավտոտնակային, գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների և այգեգործական կոոպերատիվների աշխատողների կողմից կատարված աշխատանք,
- 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամների կողմից կատարված աշխատանք,
- այն անձանց կողմից կատարված աշխատանք, որոնք աշխատում են պատժի կրման ընթացքում ազատագրվման և բնակեցման վայրերում:

**Ղազախստանում**<sup>8</sup> ռեզիդենտների համար եկամտային հարկը կազմում է **10%**, իսկ ոչ ռեզիդենտների համար՝ 20%: Բացի այդ, գործում է 5% եկամտային հարկի դրույքաչափ շահաբաժինների հարկման դեպքում: Եկամտային հարկով հարկման ենթակա չեն հասցեագրված սոցիալական օգնությունը, բանկերի ավանդներից ստացված տոկոսները,

<sup>7</sup>[http://www.sti.gov.kg/%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8/%D0%BF%D0%BE%D0%B4%D0%BE%D1%85%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3-%D0%9D%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B1%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5\\_%D0%B2\\_%D0%9A%D0%B0%D0%B7%D0%B0%D1%85%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%B5](http://www.sti.gov.kg/%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8/%D0%BF%D0%BE%D0%B4%D0%BE%D1%85%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3-%D0%9D%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B1%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%B2_%D0%9A%D0%B0%D0%B7%D0%B0%D1%85%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%B5)

<sup>8</sup>[https://ru.wikipedia.org/wiki/%D0%9D%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B1%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5\\_%D0%B2\\_%D0%9A%D0%B0%D0%B7%D0%B0%D1%85%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%B5](https://ru.wikipedia.org/wiki/%D0%9D%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B1%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%B2_%D0%9A%D0%B0%D0%B7%D0%B0%D1%85%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%B5), <http://www.karazhat.kz/articles/individualniy-podohodniy-nalog>

ալիմենտները, պետական արժեթղթերի գործածությունից ստացված եկամուտները, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ զինվորական ծառայողների բոլոր տեսակի վարձատրությունները, վիճակախաղերով շահումները՝ նվազագույն աշխատավարձի 50%-ի սահմաններում, բժշկական ծառայությունների դիմաց վարձատրությունները, նախատեսված նորմերի սահմաններում ծառայողական գործուղումների փոխհատուցումները և որոշ այլ եկամուտներ:

Այսպիսով, վերոնշյալ երկրների եկամտային հարկի դրույքաչափերի համեմատական վերլուծությունից ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտացոլված է Աղյուսակ 4-ում: Մասնավորապես տեսնում ենք, որ **ԵՍՏՄ երկրները չեն կիրառում պրոգրեսիվ հարկման համակարգ: ԵՍՏՄ երկրներում առկա է եկամտային հարկի համամասնական դրույքաչափ, ինչպիսիք են 13%-ը Ռուսաստանում, 13%-ը Բելառուսում, 10%-ը Ղազախստանում և 10%-ը Ղրղըստանում: Միայն Հայաստանում է, որ կիրառվում է եկամտային հարկով հարկման պրոգրեսիվ համակարգ՝ համապատասխանաբար սահմանվելով 23%, 28% և 36% դրույքաչափեր:** Այսինքն, ակնհայտորեն երևում է, թե որքան ավելի մեծ բեռ է դրված Հայաստանում եկամտային հարկի տեսանկյունից՝ նույնիսկ նվազագույն դրույքաչափի դեպքում: Վերոնշյալը արտահայտված է առավել մանրամասնորեն Աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Եկամտային հարկի դրույքաչափերը ԵՍՏՄ երկրներում**

Երկիր	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղըստան	Հայաստան
Եկամտային հարկի ստանդարտ դրույքաչափ	13%	13%	10%	10%	24.4% (23%) 26% (28%) 36%
Այլ դրույքաչափեր	9%, 15%, 30%, 35%	9%, 16%	5%, 20%		10%, 13%,

Այժմ, անդրադարձ կատարենք Եվրոպայի 15 երկրների եկամտային հարկի նվազագույն և առավելագույն դրույքաչափերին, որոնք պատկերված են Աղյուսակ 6-ում: Ինչպես տեսնում ենք, մի շարք երկրներում առկա են չհարկվող եկամտի շեմեր:

**Աղյուսակ 6. Եկամտային հարկի դրույքաչափերը Եվրոպայում**

Երկիր	Եկամտային հարկի գրոյական դրույքաչափը (EUR)	Եկամտային հարկի նվազագույն դրույքաչափը (%)	Եկամտային հարկի առավելագույն դրույքաչափը (%)
Գերմանիա	8354	14	45
Ֆրանսիա	9700	14	45
Իսպանիա	5151	19	45

Իտալիա	800	23	43
Մեծ Բրիտանիա	12760	20	45
Ալբանիա	2640	13	23
Ավստրիա	11000	25	55
Բելգիա	7270	25	50
Բոսնիա		10	10
Բուլղարիա		10	10
Խորվաթիա		12	40
Կիպրոս	19500	20	35
Չեխիա		15	15
Դանիա			52
Էստոնիա	2160	20	20
Ֆինլանդիա	16900	6.25	31.5
Հունաստան		22	45
Հունգարիա		16	16
Իսլանդիա	14000	22.5	46.24
Իռլանդիա		20	40
Լատվիա		23	23
Լիտվա		15	15
Մակեդոնիա	1450	10	10
Մալթա	9100	15	35
Մոնտենեգրո		9	11
Հոլանդիա		8.9	52
Նորվեգիա		36	39
Լեհաստան		18	32
Ռումինիա		16	16
Սերբիա	7833	10	15
Սլովակիա	3803	19	25
Սլովենիա		16	50
Շվեդիա	45047	20	25
Շվեյցարիա		2	20





## **B. Շրջանառության հարկ**

Շահառուների կողմից վեր են հանվել խնդիրներ **շրջանառության հարկի շեմի փոփոխության վերաբերյալ: Նախկին** օրենսդրական կարգավորումները հետևյալն են. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *շրջանառության հարկ վճարող կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցել 115.0 մլն դրամը:*

**Գործող** օրենսդրական կարգավորումները հետևյալն են. ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ *շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:*

Սույն իրավանքների վերլուծությունից պարզ է դառնում, որ գործող կարգավորումների պարագայում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների 115.0 մլն դրամը չգերազանցելու պարագայում հարկվում են ավելի ցածր դրույքաչափ ունեցող շրջանառության հարկով (5%, 3.5 տոկոս, 10 տոկոս և այլն), արդեն 115.0 մլն դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ով, որը **համեմատաբար շատ ավելի բարձր է՝ 20%: Սակայն փոփոխությունների արդյունքում, փաստորեն, տնտեսվարողը կհարկվի ԱԱՀ-ով 58.35 մլն դրամը գերազանցելու դեպքում՝ 115.0 մլն դրամի փոխարեն:**

**ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի հիմնավորումում** անդրադարձ է կատարվել վերոնշյալ փոփոխություններին, մասնավորապես՝ *Հարկային օրենսգրքի ներդրման փուլում հարկման այլընտրանքային համակարգերի, և հատկապես, շրջանառության հարկի համակարգի կիրառության շրջանակի նեղացումը շատ կարևորվում է, քանի որ շրջանառության հարկի 115 մլն. դրամի չափով շեմի կիրառությունը գործնականում նշանակում է, որ շուրջ 72 հազ. ակտիվ հարկ վճարողների մոտավորապես 90 տոկոսը գործելու է շրջանառության հարկի համակարգում: Այս մոտեցումը ընդունելի համարվել չի կարող, քանի որ էթե կարճաժամկետ հեռանկարում կամ անցումային որևէ ժամանակահատվածում շրջանառության հարկի բարձր շեմը կարող է որոշակիորեն հիմնավորված լինել, ապա երկարաժամկետ հեռանկարում այսպիսի բարձր շեմի կիրառությունը որևէ կերպ արդարացված չէ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հարկային օրենսգրքի նախագծի մշակման հիմքում դրված վերլուծական աշխատանքների շրջանակներում բազմակողմանի վերլուծություններ են կատարվել նաև շրջանառության հարկի օպտիմալ շեմի*

որոշման ուղղությամբ (Մայքլ Քինի, Ջեք Մինթսի մոդել): Այդ վերլուծությունների արդյունքներով հիմնավորվում է, որ երկարաժամկետ հեռանկարում շրջանառության հարկի օպտիմալ շեմը գնահատվում է առավելագույնը 40 մլն. դրամի չափով:

**ՊԵԿ դիրքորոշումը** շրջանառության հարկի դրույքաչափի նման շեշտակի փոփոխության վերաբերյալ հետևյալն է. «Մեկ տարվա արդյունքները ցույց տվեցին, որ երբ անգամ մենք նրանց տվեցինք 1.5%-ի փաստաթղթերի ներկայացման հնարավորություն, մենք չունեցանք եկամուտների ավելացում, չունեցանք շրջանառության թվաքանակի ավելացում, **չունեցանք շրջանառության շեմի ավելացում**», - մեկնաբանում է Վարդան Այվազյանը: «Մենք ենթադրում ենք, որ շեմը բարձրացնելով կունենանք շրջանառությունների հայտարարագրման իրական ծավալների աճ: Ցավոք, պետք է արձանագրենք, որ իրավիճակը չի փոխվել. ունենք իրավիճակ, երբ 46 հազար տնտեսվարող սուբյեկտներ տարեկան հայտարարագրել են մինչև 10 միլիոն դրամ իրացման շրջանառություն, 54 հազար տնտեսվարող սուբյեկտներ՝ մինչև 30 միլիոն դրամ շրջանառություն, որը բավական հեռու է 115 միլիոն դրամ շեմից: Ունեցանք իրավիճակ, երբ հարաբերականորեն բարձր եկամուտներ ունեցող անձինք, որոնք մինչ այդ գործում էին ԱԱՀ դաշտում, հնարավորություն ունեցան թափանցելու շրջանառության հարկի դաշտ և անհավասար պայմաններ ստեղծել փոքր ու միջին սուբյեկտների համար: Ահա, թե ինչու վերանայվեց ... շեմը», - նշում է ՊԵԿ փոխնախագահը:<sup>9</sup>

Ինչպես նշված է վերոնշյալ հիմնավորումում, **շրջանառության հարկի օպտիմալ շեմը հիմնված է Քինի և Մինթսի մոդելի վրա:** Սույն մոդելի նպատակը ԱԱՀ-ի օպտիմալ շեմը հաշվելն է, որի ժամանակ անհրաժեշտ է կոմպրոմիսի գալ հարկային շահույթների բեռը բարձրացնելու, վարչարարությունը նվազեցնելու և շեմից բարձր կամ ցածր գտնվող ընկերությունների նկատմամբ տարբերակված մոտեցման պատճառով առաջացող շեղումները նվազեցնելու ցանկությունների միջև:<sup>10</sup> Այս մոդելով հաշվարկ անելիս օպտիմալ շեմը կարող է տատանվել 22.000 ԱՄՆ դոլարից մինչև 280.000 ԱՄՆ դոլարի չափով: Օրինակ, Մինգապուրում վերջինս կազմում է շուրջ 700.000 ԱՄՆ դոլար: Այս մոդելը հետագայում կիրառվել է հիպոթետիկ կերպով ԱՄՆ-ում ԱԱՀ-ի օպտիմալ շեմը պարզելու նպատակով, և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն կլիներ 200.000 ԱՄՆ դոլար և 43.000 բիզնեսներ ազատված կլինեին շեմից 10% ԱԱՀ-ի դեպքում:<sup>11</sup>

<sup>9</sup><http://iravaban.net/139817.html>

<sup>10</sup>Michael Keen, Jack Mintz, “The optimal threshold for a Value-Added Tax”, Article in Journal of Public Economics, March 2004

<sup>11</sup>Brashares, Edith, Matthew Knittel, Gerald Silverstein, and Alexander Yuskavage, 2014. “Calculating the Optimal Small Business Exemption Threshold for a US VAT.” National Tax Journal 67 (2): 283-320

ԱԺ տնտեսագիտական վարչությունը ևս բավականին կոշտ է արձագանքել այս հիմնավորմանը. «Տեսականորեն սովյալ հիմնավորումը միանգամայն արդարացի է և ընդունելի, սակայն գործնական կիրառության կամ փոքր և միջին բիզնեսի վրա այս փոփոխության բացասական ազդեցության չեզոքացման առումով անհրաժեշտ է ապահովել մի շարք այլ պայմաններ ևս, մասնավորապես՝ արտադրության և շրջանառության համատարած և պարտադիր փաստաթղթավորման ապահովումը, հարկային վարչարարության բնագավառում խտրական մոտեցումների և կոռուպցիայի վերացումը, ստվերային տնտեսության ծավալների կտրուկ նվազումը ..., մրցակցային առողջ միջավայրի ապահովումը և այլն, որոնց ուղղությամբ գործնական քայլերի առումով նախագծի հիմնավորման մեջ որևէ տեղեկություններ ներկայացված չեն: Այսինքն, նախագիծը որևէ կերպ չի հիմնավորում, որ Հայաստանն արդեն անցել է այն անցումային փուլը, որում շրջանառության հարկի կիրառման բարձր շեմն արդարացված էր: Մեր կարծիքով, նշված անցումային փուլը կարելի է անցած համարել միայն այն դեպքում, երբ համապատասխան վերլուծությունների արդյունքում կպարզվի, որ գործնականում լուծված են այն հիմնական խնդիրները, որոնք հանդիսանում են անցումային փուլի չափորոշիչներ...»: Այլ տնտեսագետներ և տնտեսագետ-գիտնականներ ևս անդրադարձել են այս խնդրին. Մասնավորապես, Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Վահրամ Մկրտչյանը, շրջանառության հարկման շեմի 115 միլիոն դրամից իջեցման վերաբերյալ նշել է հետևյալը. «Ղա, իմ կարծիքով, ուղղակի փոքր ու միջին գործարարությանն է վնասում էսպես, հատկապես՝ առևտրի ոլորտի փոքր ու միջին գործարարներին, որոնց շրջանառությունն օրական 110 հազար դրամ է կազմում: Եվ նրանք արդեն դրանից ավել շրջանառության դեպքում ընկնում են ավելացված արժեքի հարկման դաշտ», -ասաց նա՝ նշելով, այս մասով փոքր խանութներն ու կազմակերպությունները, միանշանակ, խնդիր կունենան:<sup>12</sup> «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Զարգացման գծով տնօրեն, տգթ. Տիգրան Զրբաշյանը հարցազրույցի ժամանակ նշեց, որ շրջանառությունների հայտարարագրման իրական ծավալների աճ տեղի չի ունեցել, քանի որ ի սկզբանե տնտեսվարողները գիտեին, որ շեմը նախատեսված է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը, այսինքն՝ ժամանակավոր բնույթ է կրում, հետևաբար վերջիններս չէին ցանկանում իրենց իրական շրջանառությունը ցույց տալ և ստվերային դաշտից դուրս գալ: Սույն հարցին անդրադարձ է նաև կատարել ՀՀ նախկին վարչապետ, տնտեսագիտության դոկտոր Հրանտ Բագրատյանը:<sup>13</sup>

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները Հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ» վերլուծությունում ևս նշված է, որ նախագծով առաջարկվող տարբերակն

<sup>12</sup><http://hraparak.am/?p=114303&l=am/harkayin+orensgrqi+luysnvo%C3%96%E2%80%9A+stvery%C3%95%20+yst+vahram+mkrтчyani>

<sup>13</sup><http://hetq.am/arm/news/71187/bagratyani-kartsiqov-harkayin-ays-orensgrqov-nor-karavarutyany-dzakhoxum-e-spasvum.html>

հետընթաց է: Վերոնշյալ խնդիրը չի վրիպել նաև **գործարարների և բիզնեսի շահերի պաշտպանությամբ զբաղվող ասոցիացիաների** ուշադրության կենտրոնից: Ըստ «Ձեռներեցների կոնֆեդերացիայի» նախագահ Տիգրան Հովհաննիսյանի՝ *շրջանառության հարկի շեմի՝ 115 միլիոնից մինչև 40 միլիոն իջեցնելն անթույլատրելի հատկապես այն պայմաններում, երբ ոլորտը չի շնչում*: Խնդրին անդրադարձել են նաև «Հայաստանի տոնավաճառներ» ՀԿ-ն, ՓՄՁ Համագործակցության ասոցիացիան և այլն:<sup>14</sup>

Խնդիրը նաև ուղղակիորեն վերաբերում է **թանկարժեք մետաղների և քարերի առքուվաճառք իրականացնող սոնտեսավարողներին**, որոնք «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1.2-րդ մասի և նույն օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերոնշյալ սուբյեկտները, ում շրջանառությունը կանցնի 58.35 միլիոն ՀՀ դրամը, ստիպված կլինեն արտոնագրային վճարների դաշտից, որը պահանջում է խիստ մեղմ վարչարարություն, միանգամից անցում կատարել ԱԱՀ-ի դաշտ:

Բացի այդ, մի շարք **աշխատություններ** վկայում են, որ ԱԱՀ-ի ցածր շեմի դեպքում այդ շեմից ներքև գտնվող ընկերությունների թիվը ավելի մեծ է լինում և վերջիններս դանդաղեցնում են իրենց աճը, որպեսզի այդ շեմը չանցնեն և հարկեր չվճարեն: Մասնավորապես, 1989 թվականի ճապոնիայում ԱԱՀ-ի ներկայացումը և փոքր բիզնեսի շեմի ստեղծումը պատճառ հանդիսացան, որ առաջացան մի շարք ընկերություններ, որոնց վաճառքները շեմից ներքև էին, և պակասեց այն ընկերությունների թիվը, որոնց վաճառքները շեմից բարձր էին:<sup>15</sup> Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ֆինլանդիայում ևս ընկերությունները խմբվում են ԱԱՀ-ի շեմից ներքև:<sup>16</sup> Միացյալ թագավորությունում ևս ընկերությունների մի ստվար զանգված դանդաղեցնում է իր աճը, որպեսզի այդ շեմը չանցնի:<sup>17</sup> Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ ցածր շեմերը առաջացնում են չնախատեսված օրենքների հետևելու և վարչարարության հետ կապված խնդիրներ և, ի վերջո, սպառնում են ողջ ԱԱՀ համակարգի կայունությանը<sup>18</sup>, ինչպես նաև ԱԱՀ-ի շեմը չպետք է մեծ խոչընդոտ հանդիսանա փոքր բիզնեսների համար<sup>19</sup>: Մինչդեռ վերոնշյալ հիմնավորումում նշվում

<sup>14</sup><http://www.azatutyun.am/a/27799122.html>,

<http://armtimes.ru/%D6%83%D5%B4%D5%B1-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%B6-%D5%B9%D5%AB%D5%BB%D5%A5%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1/>

<http://www.azatutyun.am/a/27799122.html>

<http://armtimes.ru/%D6%83%D5%B4%D5%B1-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%B6-%D5%B9%D5%AB%D5%BB%D5%A5%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1/>

<http://armtimes.ru/%D6%83%D5%B4%D5%B1-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D5%B6-%D5%B9%D5%AB%D5%BB%D5%A5%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1/>

<sup>15</sup>Onji, Kazuki 2009. “The response of Firms to Eligibility Thresholds: Evidence from the Japanese Value-added Tax.” Journal of Public Economocs 93 (5-6): 766-775

<sup>16</sup>Harju, Jarkko, Tuomas Matikka, and Timo Rauhanen. 2015. “The effect of VAT Threshold on the Behavior of Small Businesses: Evidence and Implications. Helsinki, Finland: VAT Institute for Economic Research Working Paper.

<sup>17</sup>Liu, Li, and Ben Lockwood. 2015. “VAT Notches.” CESifo Working Paper Series No. 5371.

<sup>18</sup>Paper prepared for the World Bank course on Practical Issues of Tax Policy in Developing Countries (Washington D.C., April 28-May 1, 2003)

<sup>19</sup>William G. Gale, Hilary Gelfond, Aaron Krupkin, Entrepreneurship and Small Business Under a Value-Added tax, March 2016, Economic Studies at BROOKINGS, p. 8.

է, որ փոքր բիզնեսները պետք է շեմից բարձր գտնվեն, ինչով էլ պայմանավորված է նաև շեմի իջեցումը:

Հարկ է նաև հավելել, որ շրջանառության հարկի 5% դրույքաչափը ևս մեծ բեռ է գերփոքր բիզնեսի ուսերին, և միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ տենդենցը գնում է այն ուղղությամբ, որ այն երկրները, որոնք ունեն շրջանառության հարկի համակարգ, ավելի են նվազեցնում շեմը: Օրինակը, Վրաստանում գործող 5% դրույքաչափն առաջարկվում է փոխարինել 1%-ով: Բացի այդ, Վրաստանը բարձրացնում է ԱԱՀ շեմը՝ մինչև 200.000 ԱՄՆ դոլլար:<sup>20</sup>

---

<sup>20</sup> <https://www.geomigrant.com/2018/02/15/%D0%B2-%D0%B3%D1%80%D1%83%D0%B7%D0%B8%D0%B8-%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3-%D0%B4%D0%BB%D1%8F-%D0%BC%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE-%D0%B1%D0%B8%D0%B7%D0%BD%D0%B5%D1%81%D0%B0-%D0%B1%D1%83%D0%B4%D0%B5%D1%82-%D1%81%D0%BD%D0%B8%D0%B6%D0%B5%D0%BD-%D1%81-5-%D0%B4%D0%BE-1/>

## C. Կայունություն

Հաջորդ խնդիրը, որն առանձնացրել ենք, կապված է հարկային համակարգի **կայունության հետ**: Շահառուները հաճախ են բարձրաձայնում այն հարցը, որ չեն կարողանում երկարաժամկետ պլանավորումներ կատարել՝ հարկային համակարգում առանձին հարկատեսակների մասով հաճախակի տեղի ունեցող փոփոխությունների պատճառով, օրինակ՝ վերոնշյալ շրջանառության հարկի շեմի հետ կապված:

Օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված են ՀՀ հարկային համակարգի սկզբունքները, դրանք են. *պարզություն և հստակություն, համախմբվածություն, հավասարություն, խտրականության բացակայություն, համապարտադիրություն, թափանցիկություն և հաշվետվողականություն, ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն, հարկային վարչարարության հավասարակշռվածություն, պատասխանատվության անխուսափելիություն, պատասխանատվության համաչափություն, բազմակարծություն և հրապարակայնություն, արդիականություն, մրցունակություն, արդյունավետություն*:

Ինչպես պարզ է դառնում վերոնշյալ նորմի ուսումնասիրումից՝ կայունությունը սահմանված չէ որպես սկզբունք: Սակայն, գտնում ենք, որ կայունության սկզբունքի ամրագրումը օրենսդրական մակարդակով խիստ անհրաժեշտ է, որովհետև այն թույլատրում է կանխատեսելիություն և որոշումների կայացման և պլանավորման որոշակիություն բիզնես գործունեությունում:

Եթե ուսումնասիրենք այս հարցով միջազգային փորձը, ապա կտեսնենք, որ Որակավորված հաշվապահների ասոցիացիան (ACCA) առանձնացնում է ողջամիտ հարկային համակարգի 3 հիմունքներ՝ պարզություն, հստակություն և **կայունություն**:<sup>21</sup> Բացի այդ, կայունության սկզբունքը հարկային համակարգում իր օրենսդրական ամրագրումն է ստացել Շոտլանդիայում<sup>22</sup>, Միացյալ թագավորությունում<sup>23</sup> և այլն:

<sup>21</sup>ACCA - <http://www.accaglobal.com/content/dam/acca/global/PDF-technical/tax-publications/ea-stability-in-tax.pdf>

<sup>22</sup>Principles for a Modern and Efficient Tax System in an Independent Scotland - <http://www.gov.scot/Publications/2013/10/4839/6>

<sup>23</sup>THE CODE FOR FISCAL STABILITY UK <http://www1.worldbank.org/publicsector/pe/BudgetLaws/UK-CodeFiscalStability.pdf>

## D. Ինքնազբաղված անձանց հարկային արտոնություններ

Շահառուները առաջ են քաշել ռիսկեր՝ **ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների վերաբերյալ**: «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 1-ից: Օրենքով սահմանվել է թվով 23 տեսակի գործունեության տեսակ, որոնք ինքնուրույն իրականացնող ինքնազբաղված անձինք (ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերեր) ազատվում են այդ գործունեության տեսակների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկերից (այսուհետ՝ հարկային արտոնություն), բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածք այդ անձանց կողմից ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկից և ակցիզային հարկից, ինչպես նաև համայնքային բյուջե վճարման ենթակա հողի հարկից և գույքահարկից, եթե համապատասխանում են որոշակի նախապայմաններին:

**Հասկոորոշվել են երեք խումբ ռիսկեր՝ կապված օրենքի բովանդակության, օրենքի կիրառման և օրենքի իրազեկման հետ:**

1-ին խնդիրը կայանում է նրանում, որ **Օրենքի նախագծի հիմնավորման մեջ չի բացահայտվում, թե ինչպես են ընտրվել վերոնշյալ 23 գործունեության տեսակը**, որովհետև մի շարք համանման գործունեության տեսակներ իրականացնող ինքնազբաղված անձինք չեն ընկնում Օրենքի գործունեության ներքո: Օրինակ՝ լեզուների ուսուցման դասընթացները ներառված են, սակայն օտար լեզու ուսուցանողի կողմից ոչ պաշտոնական թարգմանություններ կատարելը ներառված չէ: Նույն տրամաբանությամբ նշված է հագուստի, ոչ թանկարժեք զարդերի և փայտյա իրերի արտադրությունը, սակայն, օրինակ, թանկարժեք հուշանվերների արտադրությունը ներառված չէ: Գործունեության տեսակների մեջ մտնում է փայտյա իրերի պատրաստում և կահույքի և տան կահավորանքի նորոգումը: Սույն դրույթի տառացի մեկնաբանությունից երևում է, որ «փայտյա իրերի պատրաստում» եզրույթը չի ներառում կահույքի պարագա, օրինակ՝ փայտյա աթոռի պատրաստում, այլ՝ միայն վերանորոգման դեպքում հնարավոր կլինի օգտվել տվյալ հարկային արտոնություններից: Հասկանալի է, որ վերջիններս վերցվել են «Արտոնագրային վճարների» մասին ՀՀ օրենքի N1 Հավելվածից, սակայն, արտոնություններ տրամադրելու դեպքում, գտնում ենք, որ **առկա է գործունեության տեսակների ցանկը լայնացնելու անհրաժեշտություն:**

**Հետագա պարզաբանման են ենթակա գործունեության 23 տեսակները սահմանող դրույթներից որոշները**, քանի որ վերջիններս շատ ընդհանրական են, և քաղաքացիները չեն հասկանում, արդյո՞ք իրենց կատարած գործունեությունների վրա տարածվում են հարկային արտոնությունները, թե՛ ոչ, օրինակ, «մասնավոր տնային տնտեսություններում

ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար» դրույթը: Հասկանալի է, որ Օրենքով սահմանված գործունեության տեսակները վերցվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 2013թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի տնտեսական գործունեության տեսակների ՀԴ-011-2013 դասակարգչից, որում սահմանվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների անվանումները համապատասխան կողերով: Վերոնշյալ հրամանի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *տնտեսական գործունեության տեսակները, որոնց ողջ բազմությունը բաժանվում է հատվածների, խմբերի, դասերի և ենթադասերի:* Վերոնշյալ հրամանի 3-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *դասակարգչի հինգերորդ աստիճանում գործունեության տեսակները մանրամասնեցված են ենթադասերի մակարդակով (5 նիշ): Այս մակարդակը նախատեսված է ազգային տնտեսության առանձնահատկություններն արտահայտելու համար:*

Բացի այդ, Օրենքում օգտագործում է «արտադրություն» եզրույթը: Խնդիրը կայանում է նրանում, որ Իրավաբանների հայկական ասոցիացիայի թեժ գծին գերփոքր բիզնեսի մի շարք ներկայացուցիչներ դիմել են այն հարցով, արդյո՞ք «արտադրություն» եզրույթն իր մեջ ներառում է նաև «իրացում», և արդյո՞ք ինքնադրադված անձինք ազատվում են հարկերից նաև վաճառքի մասով: Բնականաբար, եթե ապրանքը չի իրացվում, այլ ուղղակի արտադրվում է սեփական սպառման համար, վերջինս չի կարող հարկային դաշտի առարկա լինել: Վերոգրյալից պարզ է դառնում, որ պաշտոնական պարզաբանման բացակայությունը սույն հարցով կարող է օրենքի երկակի մեկնաբանության հիմք հանդիսանալ, ինչն էլ բերում է կոռուպցիոն ռիսկերի:

**Հարկ է նաև նշել, որ Օրենքի ընդունման օրենսդրական փաթեթով փոփոխություններ չեն իրականացվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝ աշխատանքային ստաժին վերաբերող դրույթում:** Ներկայիս կարգավորմամբ որպես անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածները հաշվարկվում են կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում: Հետևաբար, ստացվում է, որ այն ինքնազբաղված անձինք, որոնք կաշխատեն որպես անհատ ձեռնարկատեր, կունենան աշխատանքային ստաժ, իսկ այն ինքնազբաղված անձինք, որոնք կիրականացնեն նույն գործունեությունը որպես ֆիզիկական անձ, զրկված կլինեն տվյալ ժամանակաշրջանն իրենց աշխատանքային ստաժում հաշվարկելու հնարավորությունից:

Հարկ է նաև նշել, որ **պարտադիր պայման է, որ գործունեությունը իրականացվի բնակչության պատվերով:** Գտնում ենք, որ վերջինս սահմանափակող դրույթ է, քանի որ կարող է ԱԶ կամ ՍՊԸ պատվիրի, օրինակ, որևէ փոքր փայտյա իրի պատրաստում: Այս դեպքում ինքնազբաղված անձը սպասարկելու դեպքում կարող է նույնիսկ չիմանալ, թե ում է սպասարկում, և ընկնել պատասխանատվության դաշտ:



**2-րդ խնդիրը** կայանում է նրանում, որ հարկային մարմինները, չտիրապետելով վերոնշյալ Օրենքի դրույթներին, սխալ տեղեկատվություն են տրամադրել օրենքի սուբյեկտ հանդիսացող անհատ ձեռնարկատերերին՝ նշելով, որ վերջիններս պետք է դադարեցնեն որպես անհատ ձեռնարկատեր իրականացնող գործունեությունը վերոնշյալ արտոնությունից օգտվելու նպատակով, կամ հակառակը՝ պետք է անհատ ձեռնարկատեր դառնան, որպեսզի դառնան արտոնություններից օգտվելու սուբյեկտներ: Այս մասին Իրավաբանների հայկական ասոցիացիայի թեժ գծին ահազանգել են մի շարք անհատ ձեռնարկատերեր և ֆիզիկական անձինք թե Երևանից, թե՝ մարզերից:

**3-րդ խնդիրը** կայանում է նրանում, որ հասարակությունը տեղեկացված չէր Օրենքի գոյության մասին: Իրավաբանների հայկական ասոցիացիան իր կողմից գործարկվող Iravaban.net անկախ լրատվական կայքում սույն թվականի հունվարի 19-ին տեղադրեց իրազեկում, որը մեկ օրվա ընթացքում, տարածվելով այլ կայքերում, դիտվեց շուրջ 50.000 անգամ: Իրավաբանների հայկական ասոցիացիան միայն այդ մեկ օրվա ընթացքում ստացավ շուրջ 50 ահազանգ, որի արդյունքում պարզ դարձավ, որ

- հարկային մարմինները ընդհանրապես չեն տեղեկացրել Օրենքի սուբյեկտ հանդիսացող այն ֆիզիկական անձանց նման հարկային արտոնությունների մասին, որոնք օրեր առաջ վճարել են արտոնագրային վճարներ ընդհուպ մինչև 1 տարվա համար, որը կազմում է ընդհուպ մինչև 100.000 ՀՀ դրամ,
- հարկային մարմինները ընդհանրապես չեն տեղեկացրել Օրենքի սուբյեկտ հանդիսացող անհատ ձեռնարկատերերին, որոնք դիմել են այս տարի շրջանառության հարկի ռեժիմով հարկ վճարելու համար:

## **E. Գերավճարներ**

Շահառուները վեր են հանել ռիսկեր օրենսդրական փոփոխությունների արդյունքում **գերավճարների հետագա ճակատագրի** վերաբերյալ: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մաս կազմող N1 հավելվածով սահմանվում են Հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգն ու ժամկետները, որտեղ տրված է **գերավճարի** հասկացությունը, այն է՝ *սահմանված կարգով հաշվարկվող որևէ հարկային պարտավորության գումարից ավելի վճարված գումար, պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ՝ օրենքով չնախատեսված դեպքերում)՝ տվյալ հարկատեսակի համապատասխան գանձապետական հաշվին հարկ վճարողի կամ հարկ վճարողի անունից այլ անձի կողմից փաստացի փոխանցված (վճարված) գումար, դատարանի վճռով (կամ վճռի կատարման արդյունքում) հարկ վճարողին վերադարձման ենթակա գումար, հարկատեսակի պարտավորությանը գերազանցող գումարով այլ հարկատեսակից տվյալ հարկատեսակին հարկային մարմնի կողմից հաշվանցված գումար:*

Օրենսգրքի 456-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարները հաշվառվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող կարգով՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում: Սույն մասում նշված գերավճարների վերադարձն իրականացվում է Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո գործող կարգով:*

Սակայն, վերոնշյալ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է նաև սահմանափակում, այն է՝ *Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդած ժամանակաշրջանների համար հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած հարկի գումարների նկատմամբ տույժերի հաշվարկման առումով Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարները հաշվի չեն առնվում:*

**Հարց է առաջանում, թե ի՞նչ է նշանակում «հաշվի չեն առնվում» եզրույթը և արդյո՞ք վերոնշյալ կետով նախատեսված գումարները հետ չեն վերադարձվելու: Առաջարկում ենք պաշտոնական պարզաբանում այս դրույթի վերաբերյալ կամ օրենսդրական նորմերի այնպիսի ձևակերպում, որպեսզի ստույգ և հստակ լինի և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտա:**

## 2. ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏ

### A. Գործարքի գնի մեթոդ

Շահառուների կողմից վեր են հանվել մաքսային արժեքի, մասնավորապես՝ գործարքի գնի մեթոդի կիրառման վերաբերյալ խնդիրներ: Մաքսային արժեքին առնչվող իրավական ակտերը հետևյալն են.

- Համաձայնագիր Բելառուսի Հանրապետության Կառավարության, Ղազախստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին (2012 թվականի ապրիլի 23-ի արձանագրության խմբագրությամբ),
- Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման» կարգ,
- ՀՀ կառավարության 05.12.2002թ. «Մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները հաստատելու մասին» N 2170-Ն որոշում,
- 26.02.2001թ. «Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի լրացման կարգի հաստատման մասին» N 02/207 հրաման:
- ՀՀ մաքսային օրենսգիրք:

Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, այսինքն այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար: Գոյություն ունեն մաքսային արժեքի որոշման **6 մեթոդներ**: Դրանք են՝

1. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ գործարքի գնի մեթոդի,
2. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ նույն ապրանքների գործարքի գնի,
3. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ համանման ապրանքների գործարքի գնի,
4. Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշում,
5. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ հաշվարկային արժեքի,
6. մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդ:

Այս մեթոդներից, ըստ էության, միայն մեկն է (մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդ) որոշվում և հայտարարագրվում հայտարարատուի կողմից: Միաժամանակ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված է նաև, որ մաքսային մարմիններն իրավունք ունեն ներկայացված

փաստաթղթերի անարժանահավատ լինելու դեպքում չընդունել այս մեթոդով հաշվարկված մաքսային արժեքը՝ որպես հիմք մաքսային վճարներ հաշվարկելիս, որի դեպքում կիրառվում են մաքսային արժեքի որոշման մյուս մեթոդները՝ ըստ վերոնշյալ հերթականության: **Խնդիրը** կայանում է նրանում, որ մաքսային մարմինները չարաշահում են իրենց այդ լիազորությունը և օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանելու դեպքում էլ հրաժարվում են հաշվարկել գործարքի գնի մեթոդով՝ նշելով, որ փաստաթղթերն արժանահավատ չեն՝ պայմանավորված կոնկրետ երկրներում ձեռք բերված լինելու հանգամանքով, սակայն սնտեսվարողի կողմից վերաբերմունքի արժանանալուց հետո փոխում են իրենց դիրքորոշումը: **Բացի այդ, սնտեսվարողներից շատերը, հատկապես՝ փոքր և գերփոքր բիզնեսի ներկայացուցիչներն առհասարակ տեղյակ չեն մաքսազերծման ծախսերի հաշվարկման մասին:**

Խնդրո առարկային է անդրադարձել նաև ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ով ասել է, որ պետք է հստակ սահմանվի այն երկրների ցանկը, որոնց նկատմամբ արժանահավատություն կա և ընդունել այնտեղի ինվոյսի գինը: Խոսքը այն երկրների մասին է, որտեղ գործում է ԱԱՀ-ի վերադարձը (TAX FREE):<sup>24</sup> Այս մասին բարձրաձայնվել է նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից. *«Չնայած դիտարկման ժամանակահատվածում տեղի ունեցած բարելավումներին, կան որոշ մտահոգություններ մաքսային արժեքի գնահատման կիրառման մասին օրենսդրության արդյունավետության և թափանցիկության վերաբերյալ: Բշխանությունները հայտարարել են, որ ներմուծման արժեքների՝ իրական արժեքներից ցածր հայտարարագրումը մշտական խնդիր է, որը բացատրում է, թե ինչու գործարքի արժեքը հաճախ չի ընդունվում մաքսային արժեքի գնահատման ժամանակ»:*<sup>25</sup>

**Այժմ ուսումնասիրենք միջազգային փորձը խնդրո առարկայի վերաբերյալ:** Մաքսային արժեքի հաշվարկման մեթոդաբան տրված է «Սակագների և առևտրի մասին գլխավոր համաձայնագրի VII-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագրով» (Այսուհետ՝ Համաձայնագիր), և Համաձայնագրի նախաբանում ասվում է հետևյալը. *«Գիտակցելով, որ մաքսային իմաստով ապրանքների գնահատման հիմքը, հնարավորինս առավելապես, պետք է լինի գնահատվող ապրանքների գործարքի արժեքի մեթոդը»:* **Շատ երկրներ արդեն հաշվետվություններ են ներկայացրել, որ գործարքի արժեքը օգտագործվում է բոլոր ներմուծումների 90-95% դեպքերում:**<sup>26</sup> Այժմ, համաշխարհային առևտրի ավելի քան 90%-ը

<sup>24</sup><http://www.slaq.am/arm/news/1133127/>

<sup>25</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Armenia, 2 March 2010  
[https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/tp328\\_e.htm](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/tp328_e.htm)

<sup>26</sup>WCO GUIDE TO CUSTOMS VALUATION AND TRANSFER PRICING, June 2015,  
[http://www.wcoomd.org/~media/wco/public/global/pdf/topics/key-issues/revenue-package/15--wco-guide-to-customs-valuation-and-transfer-pricing--final\\_en.pdf?db=web](http://www.wcoomd.org/~media/wco/public/global/pdf/topics/key-issues/revenue-package/15--wco-guide-to-customs-valuation-and-transfer-pricing--final_en.pdf?db=web)

գնահատվում է գործարքի արժեքի մեթոդի հիման վրա, որն **ապահովում է ավելի կանխատեսելիություն, միատեսակություն և գործարար համայնքի համար թափանցիկություն:**<sup>27</sup>

**Ռուսաստանում** գնահատման համակարգը հիմնված է Համաձայնագրի սկզբունքների և դրույթների վրա: Առաջնահերթության կարգով առաջինը կիրառվող մեթոդը թվով 6 մեթոդներից Մեթոդ 1-ն է՝ գործարքի արժեքի մեթոդը (որն, ըստ իշխանությունների, օգտագործվում է 85% դեպքերում):<sup>28</sup>

**Ղրղզստանում** Մաքսային օրենսգրքով և Համաձայնագրով սահմանված մաքսային արժեքի գնահատման հիմնական տարրերը նախատեսում են հիերարխիկ վեց մեթոդներ: Ըստ իշխանությունների՝ որպես հիմնական գնահատման եղանակ օգտագործվում է գործարքի արժեքը:<sup>29</sup>

**Եվրոպական միությունում** (այսուհետ՝ ԵՄ) Համաձայնագրով նախատեսված մեթոդաբանական ամրագրվել է նաև գործող օրենսդրությամբ, այն է՝ Մաքսային օրենսգրքի 28-ից 36-րդ հոդվածներ և դրանց հարակից կիրարկող դրույթներ: Գործարքի արժեքը առաջնային հիմք է մաքսային արժեքի որոշման գործընթացում: Բոլոր ներմուծման հայտարարագրերի շուրջ 95%-ը ընդունվում են՝ համաձայն գործարքի արժեքի մեթոդի:<sup>30</sup>

**Մեծ Բրիտանիայում** գործարքի արժեքի մեթոդն առաջին մեթոդն է, որը պետք է կիրառվի: Այն կիրառվում է ներմուծումների շուրջ 90%-ի դեպքում:<sup>31</sup>

**Չինաստանում** մաքսային գնահատման ռեժիմը կարգավորվում է Ներմուծվող ու արտահանվող ապրանքների Մաքսային արժեքի որոշման վերաբերյալ կանոնների համապատասխան դրույթներով:<sup>32</sup> Մաքսային արժեքը որոշվում է գործարքի արժեքի հիման վրա: Տվյալները, որոնք տրամադրվել են իշխանությունների կողմից, ցույց են տալիս, որ 2011 թ.-ի դրությամբ Չինաստանի ներմուծման մաքսային արժեքը ավելի քան 99% դեպքերում որոշվել էր գործարքի արժեքի մեթոդի հիման վրա:<sup>33</sup>

---

<sup>27</sup>World Customs Organisation website, <http://www.wcoomd.org/en/topics/valuation/overview/what-is-customs-valuation.aspx>

<sup>28</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Russia, 24 August 2016, [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/s345\\_e.pdf](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/s345_e.pdf)

<sup>29</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Kyrgyz Republic, 1 October 2013, [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/s288\\_e.pdf](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/s288_e.pdf)

<sup>30</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, European Union, 28 May 2013, [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/s284\\_e.pdf](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/s284_e.pdf)

<sup>31</sup>Notice 252: valuation of imported goods for customs purposes, VAT and trade statistics, Updated 29 April 2016, <https://www.gov.uk/government/publications/notice-252-valuation-of-imported-goods-for-customs-purposes-vat-and-trade-statistics/notice-252-valuation-of-imported-goods-for-customs-purposes-vat-and-trade-statistics>

<sup>32</sup>Մաքսային գլխավոր վարչարարություն, Արձանագրություն թիվ 148, 2006 թ. (General Administration of Customs, Decree No. 148, 2006).

<sup>33</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, China, 12 and 14 June, 2012, [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/tp364\\_e.htm](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/tp364_e.htm)

**Ավստրալիայում** ապրանքները գնահատվում են վեց տարբեր մեթոդների հաջորդականությամբ, որոնք սահմանված են ներպետական օրենսդրությամբ. Առավել տարածված է գործարքի արժեքը մեթոդը, որն օգտագործվում է ներմուծման շուրջ 98% դեպքերում:<sup>34</sup>

**Ամերիկայի Միացյալ Նահանգներում** Մաքսային և սահմանապահ պաշտպանության համապատասխան կառույցը (U.S. Customs and Border Protection) գնահատում է, որ գործարքի արժեքի մեթոդն օգտագործվում է՝ գնահատելու ընդհանուր ամերիկյան ներմուծման մոտ 86,4 տոկոսը: Գործարքի արժեքի մեթոդը հիմնված է ապրանքի դիմաց գնորդի կողմից փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա՝ գումարած որոշ վճարներ, ինչպիսիք են փաթեթավորումը, ռոյալթիներիները և լիցենզավորման վճարները: Առաջին վաճառքի օգտագործումը թույլատրվում է միայն այն ժամանակ, երբ գործարքի արժեքի մեթոդը ներմուծմանը համապատասխան մաքսային գնահատման մեթոդն է:<sup>35</sup> Վերոնշյալի մասին է փաստում նաև մեկ այլ աշխատություն:<sup>36</sup>

**Նորվեգիայում** «Մաքսատուրքի և ապրանքների տեղաշարժի մասին» 2007 թվականի օրենքի 7-րդ գլուխը պարունակում է ընդհանուր դրույթներ ապրանքների գնահատման վերաբերյալ, և Մաքսային կարգավորման 7-րդ հոդվածի ներքո զետեղված են հետագա որոշ ընդհանուր կանոններ: Գործարքի արժեքի մեթոդն օգտագործվում է Նորվեգիայի ներմուծումների մոտավորապես 97%-ի դեպքում:<sup>37</sup>

**Պակիստանն** ամրագրել է Համաձայնագրի մաքսային գնահատման կանոնները 2000 թվականին Մաքսային ակտի 25-րդ բաժնի ներքո: Գործարքի արժեքը կիրառվում է միայն ներմուծման 90-95% դեպքերում և օգտագործվում է անհավասարաչափ սննդամթերքի և սպառողական ապրանքների նկատմամբ:<sup>38</sup>

---

<sup>34</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Australia, 3 March 2015, [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/s312\\_e.pdf](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/s312_e.pdf)

<sup>35</sup>– Use of the "First Sale Rule" for Customs Valuation of U.S. Imports U.S. International Trade Commission Washington, DC 20436 December 2009, <https://www.usitc.gov/publications/332/pub4121.pdf>

<sup>36</sup>Ryan Petersen, *Customs Compliance*, February 18, 2014

<sup>37</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Norway, 9 and 11 October, 2012., [https://www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/tp369\\_e.htm](https://www.wto.org/english/tratop_e/tpr_e/tp369_e.htm)

<sup>38</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Pakistan, 10 December 2007, [www.wto.org/english/tratop\\_e/tpr\\_e/tp293\\_e.htm](http://www.wto.org/english/tratop_e/tpr_e/tp293_e.htm)

## **B. ՀՀ տարածք տրանսպորտային միջոցների ներկրում**

Շահառուների կողմից վեր են հանվել ՀՀ տարածք տրանսպորտային միջոցների ներկրելու գործընթացի խնդիրները: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի, «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի «Մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերի կիրառումը» վերտառությամբ 77-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի» մասին ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» մասին ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ **երրորդ երկրից ՀՀ տարածք տրանսպորտային միջոց ներկրելու համար, ֆիզիկական անձը պետք է վճարի մաքսատուրք, ավելացված արժեքի հարկ և բնապահպանական վճար:** Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը ներկրվում է ԵՏՄ տարածքից, **ապա վճարման են ենթակա միայն մաքսային վճարներ և բնապահպանական վճարը:** **Վճարման են ենթակա նաև օրենքով սահմանված մաքսավճարներ:** Միաժամանակ նաև նշենք, որ ներկայումս ՀՀ-ում տրանսպորտային միջոցների ներկրման դեպքում գործում է Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) միասնական մաքսային դրույքաչափը<sup>39</sup>:


Գաղտնիք չէ, որ կոռուպցիոն ռիսկերի առաջացման հիմնական նախադրյալը՝ անիրագրելությունն է, ինչը հնարավոր է դարձնում տարբեր չարաշահումների առաջացումը: «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված «Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագրի շրջանակում բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար սոցիոլոգիական հետազոտության ուսումնասիրությունը տրանսպորտային միջոցների ներկրման գործընթացի վերաբերյալ վեր է հանել շահառուների իրազեկվածության մակարդակի հետևյալ պատկերը<sup>40</sup>, որն արտահայտված է Գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1. Մաքսագերծողների իրազեկության մակարդակը տրանսպորտային միջոցների ներկրման մաքսագերծման կանոնակարգերի մասին**

<sup>39</sup><http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Pages/default.aspx>

<sup>40</sup>Տե՛ս «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված «Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագրի շրջանակում բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար սոցիոլոգիական հետազոտություն, էջ 7

<http://iravaban.net/wp-content/uploads/2016/09/Report-on-the-sociological-survey-arm.pdf>



Ակնհայտ է, որ **շահառուների համար բարդություն է ներկայացում ինքնուրույն պարզելու** Հայաստանի Հանրապետության տարածք տրանսպորտային միջոցների ներկրման համար նախատեսված վճարների տեսակներն ու դրույքաչափերը, առավել ևս երբ ներկայումս սահմանված են միասնական մաքսային դրույքաչափեր, որը հասանելի է ռուսերեն լեզվով, ինչը կրկնակի բարդություն և լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում: Հարկ է նաև նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում ներկայումս տեղադրված տեղեկությունը ընդհանուր է, և հիմնականում ներկայացնում է ՀՀ օրենսդրության կարգավորումները<sup>41</sup>: Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, առկա է անհրաժեշտություն Հայաստանում այնպիսի առցանց գործիք ներդնելու, որը հնարավորություն կտա բարձրացնել ՀՀ տարածք տրանսպորտային միջոցների ներկրման գործընթացի արդյունավետությունը, կանխատեսելիությունը, հանրության վստահության մակարդակը, բացառել հայեցողական գործողությունները:

**Միջազգային փորձի** ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են երկրներ, որտեղ տրանսպորտային միջոցների ներկրման մասին տեղեկությունները տրված են բանաձևերի տեսքով և այդքան էլ պարզեցված չեն: Մասնավորապես, ուսումնասիրվել է **Եվրոպական հանձնաժողովի**<sup>42</sup> Հարկային և Մաքսային բաժնի կողմից գործարկվող առցանց գործիքը, որտեղ ներառված են ոչ միայն տրանսպորտային միջոցների (թեթև մարդատար մեքենաներ, բեռնատար մեքենաներ, նավեր, ինքնաթիռներ, գնացքներ և այլն), այլև՝ այլ ապրանքատեսակների դեպքում գործող մաքսային վճարների դրույքաչափերը: Այդ ապրանքատեսակներից կարող են լինել՝ կենդանական, բանջարեղենային, հանքային, քիմիական, գործվածքային և այլ արտադրանքները, ռետինե և հնաոճ իրերը և այլն: Այս գործիքը ենթակա է կիրառման մի շարք եվրոպական երկրներում: Ուսումնասիրվել են նաև **Կիպրոսի**<sup>43</sup>, **Տրինիդադի և Տոբագոյի Հանրապետության**<sup>44</sup> (հարկ է նշել, որ այստեղ հաշվարկման են ենթարկվում ոչ միայն տրանսպորտային միջոցները,

<sup>41</sup><http://petekamutner.am/Content.aspx?itn=csCICustomsFees>

<sup>42</sup>[http://ec.europa.eu/taxation\\_customs/dds2/taric/taric\\_consultation.jsp](http://ec.europa.eu/taxation_customs/dds2/taric/taric_consultation.jsp)

<sup>43</sup><http://www.mof.gov.cy/mof/customs/customs.nsf/All/56C4D9A3AB5A5B0AC2257488003A6B03>

<sup>44</sup><http://www.customs.gov.tt/importing/duty-calculator>



այլն՝ տրանսպորտային միջոցների բաղկացուցիչներ և այլ ապրանքներ) և այլ երկրների առցանց գործիքները:

Ուսումնասիրված երկրների շարքում է նաև **Բոտսվանայի** միասնական եկամուտների համակարգը<sup>45</sup>: Այստեղ առկա տեղեկությունները ներկայացվում են երկու խմբերի համար. ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար, իսկ մաքսային և հարկային տուրքերը ներկայացված են աղյուսակի տեսքով:

Լավագույն տարբերակը, մեր խորին համոզմամբ, մեր հարևան **Վրաստանին է**:<sup>46</sup> Նշված գործիքը բավականին պարզ է և պահանջում է ընդամենը մի քանի էլակետային տվյալներ մաքսային վճարների գնի որոշման համար: Մասնավորապես, համակարգից օգտվելու դեպքում շահառուն պետք է ընտրի տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի որոշման 6 մեթոդներից այն մեկը, որով նախատեսում է իրականացնել տրանսպորտային միջոցի ներկրումը: Մաքսային արժեքի որոշման մեթոդի ընտրությունից հետո, շահառուին առաջարկվում է լրացնել տրանսպորտային միջոցին վերաբերող հետևյալ տվյալները.

- *Նոր սակագին (New tariff).*
- *Մեխանիկական է, թե՞ էլեկտրոնային, թե երկուսն էլ (Hybrid).*
- *Ղեկը ձախակողմյան է (այդ թվում աջից ձախ տեղափոխված) (Left Wheel/ moved).*
- *Վաճառքի տարեթիվը (Output year).*
- *Շարժիչի հզորությունը (Engine):*

---

<sup>45</sup><http://www.burs.org.bw/>

<sup>46</sup>[http://rs.ge/Default.aspx?sec\\_id=5091&lang=2](http://rs.ge/Default.aspx?sec_id=5091&lang=2)

### C. Հետքացթողումային հսկողության բարելավում

Մի շարք տնտեսվարողներ բարձրաձայնում են այն խնդիրը, որ մաքսագերծման գործընթացն արհեստականորեն ձգձգվում է և հայեցողական է: Առհասարակ, ՀՀ-ում հսկողության համակարգը բաղկացած է 3 ուղիներից.

ա) «Կանաչ ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողում՝ առանց փաստաթղթային ստուգման և զննման.

բ) «Դեղին ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողում՝ փաստաթղթային ստուգմամբ.

գ) «Կարմիր ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողում՝ փաստաթղթային ստուգմամբ և զննմամբ:


Հարկ է նշել, որ օրենսդրությամբ սահմանված չեն կոնկրետ ժամկետներ և Desk Review մեթոդով ուսումնասիրություն կատարելու արդյունքում անհնար է պարզել, թե որքան են փաստացի տևում վերոնշյալ գործընթացները ՀՀ-ում, ինչը կարող է կոռուպցիոն ռիսկերի տեղիք տալ, քանի որ հավելյալ գումարների դիմաց կարագացվեն նշյալ գործընթացները:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ շուրջ 84 երկրներում ռիսկերի վերլուծության վրա հիմնված հետքացթողումային հսկողություն իրականացնելու նպատակով ներդրված ASYCUDA համակարգի ընտրողականության մոդուլում նախատեսված է նաև «կապույտ ուղի» ընթացակարգը, որը ենթադրում է հսկողություն ավելի ուշ փուլերում՝ մաքսային աուդիտի միջոցով: Հետևաբար, հետքացթողումային հսկողությունը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված ընթացակարգերին, քանի որ ՀՀ-ում բացակայում է հսկողության 4-րդ՝ «Կապույտ ուղի»-ն:

Այս մասով անհրաժեշտ ենք համարում առանձնացնել մեր հարևան Վրաստանի փորձը: Գծապատկեր 2-ում արտացոլված է և՛ ներմուծելիս, և՛ արտահանելիս ռիսկերի բաշխման վիճակագրությունը: Ինչպես տեսնում ենք, ներմուծման ժամանակ կապույտ գոտին օգտագործվել է ընդհուպ մինչև 35 տոկոս:<sup>47</sup>

Գծապատկեր 2. Ռիսկերի բաշխումը Վրաստանում ներմուծելիս և արտահանելիս ըստ մաքսային հսկողության գոտիների:

<sup>47</sup><http://www.traceca-org.org/uploads/media/Geo-20.12.2011.pdf>



Բացի այդ, Վրաստանում տեղի է ունեցել բարեփոխում՝ մաքսագերծման գործընթացի ժամկետների խիստ նվազեցման ուղղությամբ: Մինչ բարեփոխումները, «Կարմիր ուղի» ընթացակարգի դեպքում ամբողջ գործընթացը կարող էր տևել 2-3 օր: Բարեփոխումների իրականացումից հետո ժամկետը կտրուկ նվազել է՝ դառնալով 45 րոպե, իսկ «Կանաչ ուղի» ընթացակարգի դեպքում ամբողջ գործընթացը տևում է ընդամենը 5 րոպե: Այս բարեփոխումը Վրաստանում իրականացվել է Մաքսագերծման գոտիների ստեղծման շրջանակներում (Custom Clearance Zones):<sup>48</sup>

**Իսրայելի** մաքսային իշխանություններն ապահովում են էլեկտրոնային հնարավորություն, որով կարելի է նախապես որոշել ապրանքների դասակարգմանը վերաբերող հարցերը<sup>49</sup>: Ներմուծված ծանրոցների 85%-ը ազատ են արձակվում **մեկ ժամվա** ընթացքում:<sup>50</sup>

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի համաձայն նախատեսվում է ***մինչև 2018 թվականի ավարտը ներդնել մաքսային հսկողության «Կապույտ ուղի» ընթացակարգը՝ սահմանային հսկողությունն աստիճանական տեղափոխելով հետբացթողումային փուլ:***

<sup>48</sup><http://www.traceca-org.org/uploads/media/Geo-20.12.2011.pdf>

<sup>49</sup>Israel Tax Authority online information. Viewed at: <http://ozar.mof.gov.il/customs/eng/>.

<sup>50</sup>WTO, Trade Policy Review, Report by the Secretariat, Israel, 30 November and 1 October, 2012, [https://www.wto.org/english/tratop\\_e/tp\\_r\\_e/tp372\\_e.htm](https://www.wto.org/english/tratop_e/tp_r_e/tp372_e.htm)

### 3. ԱԶՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

#### A. Մենաշնորհ և բիզնեսի ու քաղաքականության սերտաճում

Շահառուների կողմից բարձրաձայնվում էր մենաշնորհների և բիզնեսի և քաղաքականության սերտաճման խնդիրը: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձանց հիմնադիր կարող են հանդիսանալ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք: Այնուամենայնիվ, առևտրային կազմակերպությունների դեպքում վերջնական շահույթը հիմնականում պատկանում է ֆիզիկական անձանց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական անձանց ստեղծման գործընթացը դյուրին է, իսկ վերջիններիս ֆիզիկական անձ հանդիսացող իրական սեփականատերերին հայտնաբերելը՝ բարդ, իրավաբանական անձինք հաճախ ստեղծվում կամ օգտագործվում են կոռուպցիոն նպատակներով: Մասնավորապես, ֆիզիկական անձը ստեղծում է իրավաբանական անձինք, վերջիններս ևս ստեղծում են իրավաբանական անձինք և այդպես շարունակ, որոնք թաքցնում են իրենց իրական սեփականատերերին, և բախվում ենք մի իրավիճակի, երբ **թեև դե յուրե մենաշնորհ չկա, սակայն դե ֆակտո այն առկա է:** Ելնելով վերոգրյալից՝ առկա է իրավաբանական անձանց (հատկապես առևտրային կազմակերպությունների) ֆիզիկական անձ հանդիսացող **իրական սեփականատերերի բացահայտման հստակ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը:**

Հարկ է նշել, որ 2017 թվականի ապրիլի 25-ին ուժի մեջ մտած «Գնումների մասին» ՀՀ օրենքով ՀՀ-ում մասնակիորեն ներդրվել է իրական սեփականատերերի ինստիտուտը՝ նախատեսելով, որ *մասնակիցը հայտով կներկայացնի իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները, և եթե մասնակիցը ճանաչվի հաղթող, ապա տեղեկատվությունը կհրապարակվի ինտերնետ միջավայրում գործող գնումների պաշտոնական կայքում:* Ընդ որում, վերոնշյալ օրենքի իմաստով իրական սեփականատերը *այն ֆիզիկական անձն (անձինք) է, ով ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձն (անձինք) է, ով իրավունք ունի նշանակել կամ ազատել մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:*

Սակայն, միայն գնումների ոլորտում ինստիտուտի ներդրումը բավարար չէ: Ինստիտուտի ամբողջական ներդրման արդյունքում մենաշնորհային իրավիճակները կնվազեն, և արհեստականորեն գնաճ տեղի չունենա, քանի որ միևնույն անձանց սեփականության

իրավունքով պատկանող կազմակերպությունները, թաքցնելով իրենց իրական սեփականատերերին, կարող են մրցել միմյանց հետ միայն գինը բարձրացնելու նպատակով: Հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *բաժնետիրական ընկերություններին թույլ չի տրվում անձամբ վարել իրենց թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը, և այն պետք է հանձնվի ընկերության հետ չփոխկապակցված մասնագիտացված կազմակերպությանը, որն իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը*, որը հանդիսանում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունը, և բաժնետերերի ցանկը հրապարակման ենթակա չէ, հետևաբար վերոնշյալ իրավանորմը ևս հանդիսանում է խոչընդոտ իրական սեփականատերերի գրանցամատյանի ստեղծման գործընթացում:

Այժմ անցնենք **միջազգային փորձի ուսումնասիրմանը**: Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (**ՖԱԹՖ**) 2012 թվականին հրապարակված «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ»<sup>51</sup>-ի 24-րդ հանձնարարականը վերաբերում է իրական շահառուների բացահայտմանը և առաջարկվում է պետություններին պահանջել իրավաբանական անձանց **բացահայտել իրենց իրական շահառուներին, վարել վերջիններիս գրանցամատյանը**, կիրառել վերահսկողության գործուն մեխանիզմներ: Իրական շահառուների վերաբերյալ ՖԱԹՖ հանձնարարականները կատարելու իրենց պատրաստակամությունն են հայտնել **Մեծ քսանյակի երկրները**՝ դեռևս 2013 թվականի սեպտեմբերին Սանկտ Պետերբուրգում կայացած Առաջնորդների գագաթնաժողովի ընթացքում:

**Մեծ ութնյակի** «Կազմակերպությունների և այլ իրավական կառույցների կողմից չարաշահումների կանխարգելման գործողությունների ծրագրի սկզբունքներ»<sup>52</sup>-ը նախատեսում են իրական սեփականատերերի մասին տեղեկությունների հասանելիություն և այդ գործում հնարավորինս կենտրոնացված գրանցամատյանների ստեղծում:

**ԵՄ Փողերի լվացման դեմ 4-րդ դիրեկտիվի**<sup>53</sup> համաձայն՝ *Եվրոպական միության բոլոր անդամ երկրները պարտավոր են ստանալ և պահպանել իրենց տարածքում գրանցված ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ համաչափ, հստակ և թարմ*

<sup>51</sup>Տե՛ս [https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/fatf\\_recommendations\\_\(2012\)\\_arm.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/fatf_recommendations_(2012)_arm.pdf)

<sup>52</sup>Տե՛ս <https://www.gov.uk/government/publications/g8-action-plan-principles-to-prevent-the-misuse-of-companies-and-legal-arrangements/g8-action-plan-principles-to-prevent-the-misuse-of-companies-and-legal-arrangements>

<sup>53</sup>2015 թվականի մայիսի 20-ին ընդունված Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 4-րդ՝ 2015/849 թվակիր դիրեկտիվ Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32015L0849>

տեղեկատվություն, ապահովել իրական սեփականատերերի գրանցման կենտրոնական գրանցամատյանի առկայությունը: Այս պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է նախատեսված եղել 2017 թվականի հունիս ամիսը, այնուհետև երկարացվել է մինչև 2018 թվական: **ԵՄ Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի (EESC)** կողմից ընդունված կարծիքը մասնակից պետություններին ևս կոչ է անում հիմնել կազմակերպությունների իրական սեփականատերերի գրանցամատյաններ: Կոմիտեն նաև առաջարկում է, որ միության ֆինանսները չպետք է հասանելի լինեն այն երկրներին, որոնք մերժում են բացահայտել իրենց իրական սեփականատերերին:<sup>54</sup>

Այժմ քննարկենք Եվրոպական անդամ երկրներում վերոնշյալ դիրեկտիվի կիրառման ընթացքը: Հիմնական հարցերը հետևյալն են.

- **Ի՞նչ մակարդակով է անհրաժեշտ ապահովել տվյալների հասանելիությունը:** Թեև դիրեկտիվով պարտադիր չէ տեղեկատվության բացահայտումը հանրությանը, սակայն ԵՄ ազգային կառավարությունները պետք է որոշում ընդունեն վերոնշյալի վերաբերյալ: Որոշ երկրներում որոշ տվյալները կամ հասանելի չեն հասարակությանը, կամ՝ վճարովի են: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գրանցամատյանները պետք է հասանելի լինեն այնպիսի պարտադիր մարմինների կամ, ինչպիսիք են բանկերը, հետաքննող լրագրողները, որոնք կարող են ցույց տալ «օրինական շահ» տեղեկատվությունը ստանալու գործում: **Մեծ Բրիտանիայում** տվյալները հասանելի կլինեն հասարակությանը, բացառությամբ՝ հավատարմագրային ընկերությունների տվյալների: **Հոլանդիան** ևս նման մոտեցում է որդեգրել: **Ֆրանսիայում** ևս տվյալները հասանելի են հանրությանը, սակայն Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել հավատարմագրային ընկերությունների հասանելիությունը:<sup>55</sup> **Սլովենիան** առավել թափանցիկ մոտեցում է որդեգրել. և ընկերությունների, և հավատարմագրային ընկերությունների, և երկրում գործող օտարերկրյա ընկերությունների տվյալները հասանելի կլինեն հասարակությանը, բայց դրանց օգտագործման նկատմամբ նախատեսված են սահմանափակումներ: **Իռլանդիայում** նախատեսվում է, որ կենտրոնական գրանցամատյանը կսկսի գործել 2017թ.-ի վերջում, սակայն տվյալները հասանելի կլինեն միայն իրավասու մարմիններին, ինչպես նաև այլ շահագրգիռ պաշտոնյաներին: **Գերմանիայում** հավանաբար կենտրոնական գրանցամատյանում գրանցված տվյալները ևս հասանելի չեն լինի հասարակությանը: **Հարկ է նկատել, որ ԵՄ-**

<sup>54</sup><http://www.transparencyinternational.eu/2015/09/public-statement-business-and-civil-society-representatives-call-for-urgent-action-on-corruption-in-the-eu/#respond>

<sup>55</sup><http://tax-today.com/reestry-beneficiaryh-vladeltsev-v-stranah-mira/>

ում ներկայումս նախագծվում է փողի լվացման դեմ պայքարի 5-րդ դիրեկտիվը, որը կարող է ապահովի որոշ տվյալների հասանելիությունը՝ հասարակությանը:

- **Ի՞նչ սանկցիաներ կիրառել:** Հրահանգը չկատարելու առավելագույն տուգանքները դիրեկտիվով սահմանվում են առնվազն 5 մլն եվրո կամ ընկերության տարեկան շրջանառության 10%: **Մեծ Բրիտանիայում**, օրենքի մշակման ժամանակ, առաջարկվել են հետևյալ սանկցիաները. **տուգանք օրենքով նախատեսված ժամկետից հետո մինչև տեղեկատվության տրամադրումը յուրաքանչյուր օրվա համար, սանկցիաներ, որոնք կապված են այնպիսի գործունեության հետ, որի համար կազմակերպությունը ցանկանում է գրանցվել, գրանցամատյանից հեռացում, պետական գնումներին մասնակցելու արգելք կամ որպես առավելագույն սանկցիա՝ քրեական պատասխանատվություն 2 տարվա ազատազրկման և տուգանքի տեսքով:**<sup>56</sup> **Սլովակիայում** ևս գործում են վերոնշյալ սանկցիաներից մի քանիսը: **Իռլանդիայում**, օրինակ, նախատեսված է քրեական պատասխանատվություն՝ 5000 եվրո տուգանքի տեսքով, իսկ **Չեխիայում** ոչ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու համար որևէ իրավական հետևանք նախատեսված չէ:
- **Ինչպե՞ս իրականացնել պետական հսկողությունը տեղեկատվության արժանահավատության նկատմամբ:** Գրանցամատյանում գրանցված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար իրական սեփականատերերի գրանցամատյանը վարող մարմնին անհրաժեշտ է տրամադրել այնպիսի օրենսդրական լծակներ, ինչպիսիք են բանկային և հարկային գաղտնիքների տիրապետումը:
- **Ի՞նչ լծակներ տրամադրել ընկերություններին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ստանալ տեղեկատվություն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ:** **Մեծ Բրիտանիայում**, եթե ընկերության սեփականատերը չի պատասխանում տեղեկատվության պահանջի համար ծանուցմանը սահմանված ժամկետում, ընկերության գործադիր մարմնի իրավագործությունները կարող են ներառել սեփականատիրոջ բաժնեմասի/տոմսի սառեցումը, որի հետևանքով վերջինս հնարավորություն չի ունենա ստանալ եկամուտ դրա վաճառքից և այլն:
- **Տարածել արդյո՞ք ինստիտուտի գործողությունը հավատարմագրային ընկերությունների նկատմամբ:** **Գերմանիայում, թե՛ ոչ:** Օրինակ, իրական սեփականատերերի վերաբերյալ օրենսդրության տարածում հավատարմագրային ընկերությունների վրա նախատեսված չէ:

<sup>56</sup>Enhancing transparency of beneficial ownership information of foreign companies undertaking certain economic activities in the UK, MARCH 2016, Department for Business, Innovation and Skills

- **Ո՞ր մարմինն է վարելու իրական սեփականատերերի գրանցամատյանը:** Որպես իրական սեփականատերերի գրանցամատյան կարող է հանդիսանալ գործող մարմիններից որևէ մեկը, ինչպիսին իրավաբանական անձանց միասնական ռեզիստրներն են, օրինակ՝ Բուլղարիա (առևտրային ռեզիստր), կամ այդ նպատակով ստեղծել մեկ այլ մարմին:



## B. Հակամրցակցային համաձայնություններ

Desk Review մեթոդով կատարված ուսումնասիրության արդյունքում բարձրագվեց հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարելու ոչ բավականաչափ գործիքակազմ ունենալու խնդիրը: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ **հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի:**

ՀՀ-ում հակամրցակցային համաձայնությունների գոյության մասին վկայում են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ՏՄՊՊՀ) **հաշվետվությունները**, օրինակ՝ *ինչպես ցույց են տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից*<sup>57</sup> Միննույն կազմակերպությունը, հաղթող ճանաչվելով մեկ մրցույթում, պարտվել է մեկ ուրիշում՝ նույն ապրանքների գծով ներկայացնելով ավելի բարձր գնային առաջարկ, որպեսզի հաղթող ճանաչվի իր հետ փոխկապակցված ընկերությունը: Որոշ դեպքերում էլ ընկերություններից մեկը, հաղթող ճանաչվելով մրցույթում, հրաժարվել է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը և մատակարարել ապրանքները: Արդյունքում տեղը զիջել է իր հետ փոխկապակցված և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մյուս ընկերությանը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ապրանքների ճնշող մեծամասնության մրցութային փաթեթներով ներկայացված գներն էապես գերազանցել են վերջիններիս շուկայական գները: Փաստորեն պետական գնումների շրջանակներում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների անարդյունավետ օգտագործում, ինչը Հանձնաժողովի կողմից որակվել է հակամրցակցային համաձայնություն:<sup>58</sup>

<sup>57</sup>[http://www.competition.am/uploads/resources/Annual\\_report\\_2016.pdf](http://www.competition.am/uploads/resources/Annual_report_2016.pdf)

<sup>58</sup>[http://www.competition.am/uploads/resources/program\\_2014.pdf](http://www.competition.am/uploads/resources/program_2014.pdf)

Transparency International-ի հայկական մասնաճյուղի կողմից պետական գնումների ոլորտի մոնիթորինգի հաշվետվությունում ևս նշված է. *Մոնիթորինգի արդյունքները վկայում են այն մասին, որ ՀՀ գնումների համակարգում բավականին տարածված է, այսպես կոչված, «պայմանավորված» մրցույթի պրակտիկան (Bid Rigging)*<sup>59</sup> Դրանք ընկերությունների մի խմբի կողմից գաղտնի համաձայնություններն են պետական տենդերներում առաջարկվող ապրանքների կամ ծառայությունների գնի բարձրացման և որակի իջեցման վերաբերյալ:

Այժմ քննարկենք միջազգային փորձը սույն հարցի վերաբերյալ: **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունն (այսուհետ՝ ՏՀԶԿ) ավելի քան 30 երկրների օրենսդրությունների փորձի հիման վրա 2012թ.-ին մշակել է «Պետական գնումներում հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքար»-ի ուղեցույց**<sup>60</sup>, որն աջակցում է գնումների ոլորտի պաշտոնյաներին տենդերները նախագծել այնպես, որ վերջիններս խոչընդոտեն հակամրցակցային համաձայնություններին պետական գնումների ոլորտում:

Բացի այդ, 2014 թվականին ընդունվել է ԵՄ «Պետական գնումների մասին» հրահանգը, որում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ներդրված նոր գործիքներից շատերը հատկապես ուղղված են պետական գնումների ոլորտի հակամրցակցային համաձայնություններին, համահունչ են ՏՀԶԿ-ի առաջարկությունների հետ և ամրագրված են մի շարք երկրների ազգային օրենսդրություններում:

Այսպիսով, հակամրցակցային համաձայնությունների, ներառյալ՝ պետական գնումների ոլորտում, սակայն չսահմանափակվելով դրանցով, դեմ պայքարի՝ ՀՀ-ում դեռևս չներդրված կամ մասնակիորեն ներդրված լավագույն գործիքներից առանձնացրել ենք հետևյալը.

✓ **Պետական գնումների մասին օրենքների և կարգավորումների ազդեցությունը մրցակցության վրա գնահատելու, չափելու և վերահսկելու գործիքների ձևավորում:**

Հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի նշյալ եղանակն առաջարկվում է և ՏՀԶԿ-ի կողմից, և՛ **Եվրոպական հանձնաժողովի**: Մասնավորապես, քաջալերվում է անդամ երկրներին զարգացնել արդյունավետ վերահսկման համակարգ՝ հիմնված ցուցիչների վրա՝

- a) **անկանոնությունները հայտնաբերող գործիքներ/շտեմարաններ,**
- b) **կարմիր դրոշակներ,**

a) Որպես **անկանոնությունները հայտնաբերող գործիքներ** կարելի է առանձնացնել **Screening-ը**, որը համակարգչային ապահովման ծրագիր է: Շատ հաճախ սույն գործիքը կիրառվում է տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովների կողմից, որի

<sup>59</sup>[https://transparency.am/files/publications/procurement\\_monitoring.pdf](https://transparency.am/files/publications/procurement_monitoring.pdf)

<sup>60</sup>OECD Guidelines for Fighting Bid Rigging in Public Procurement

շնորհիվ բացահայտվում են հակամրցակցային տարատեսակ համաձայնությունները կամ պետական գնումները համակարգող մարմինների կողմից, որոնք վերլուծում են պետական գնումների ժամանակ ստացված հայտերը և վեր են հանում հակամրցակցային համաձայնությունները սույն ոլորտում: Նման գործիքներ ներդրված են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Բրազիլիայում, Շվեդիայում, Կորեայում, Մեքսիկայում և այլ երկրներում: Screening-ի իրականացման համար անհրաժեշտ է տվյալների զգալի ծավալի առկայություն: Տվյալներից որոշները կարող են ուղղակիորեն մատչելի չլինել մրցակցային մարմինների համար: Մրցակցային մարմինները կարիք ունեն այս տվյալների հասանելիության, որպեսզի կարողանան առավել մանրակրկիտ և համապարփակ վերլուծության իրականացնեն և պետական գնումներով զբաղվող մարմինների հետ սերտ համագործակցեն: Հնարավոր է տարբերակել screening-ի երկու հիմնական մոտեցումներ.

- **Կառուցվածքային screening,**
- **Վարքագծային screening:**

**Կառուցվածքային screening-ը** տեսական մակարդակով հայտնաբերում է ապրանքի կամ շուկայի այն առանձնահատկությունները, որոնք դյուրինացնում են հակամրցակցային համաձայնությունները: Շատ դեպքերում, նման screen-ները պարզ են կիրառելու համար, քանի որ նրանք պահանջում են այնպիսի տվյալներ, որոնք մատչելի են կամ հեշտ հավաքագրվում են և չեն ներառում բարդ տնտեսագիտական վերլուծություն: Բացի այդ, աշխատակազմի վերապատրաստումը screening-ի գործընթացի վերաբերյալ մեծ ջանքեր չի պահանջում: Կառուցվածքային screening-ները սահմանափակ են, քանի որ նրանք մրցակցային մարմիններին չեն տրամադրում հակամրցակցային համաձայնության վերաբերյալ ապացույցներ, այլ մատնանշում են տվյալ շուկայի հակումը հակամրցակցային համաձայնությունների նկատմամբ, որը կարող է հիմք հանդիսանալ հետագա բացահայտման համար: **Վարքագծային screening-ը** թույլ է տալիս պարզել, արդյո՞ք հակամրցակցային համաձայնությունը փաստացի ազդել է կոնկրետ շուկայի վրա, թե՛ ոչ: Վերոնշյալ գործիքը հիմնականում հիմնված է հրապարակայնորեն մատչելի տվյալների բազաների համեմատության կամ պետական գնումների ընթացակարգերի աուդիտից ստացված տվյալների վրա: Ի տարբերություն առաջին տարբերակի, նշյալ գործիքը նպատակ ունեն հայտնաբերել հակամրցակցային համաձայնության կոնկրետ ցուցանիշներ՝ նախնական քննություն սկսելու նպատակով: Այս դեպքում համապատասխան տեղեկատվության հասանելիությունը, որոշակի հմտությունները և նոու-հաուերը կարևոր պահանջներ են: **Լավագույն տարբերակը 2-ի համակցումն է:**<sup>61</sup>

<sup>61</sup><http://internationalcompetitionnetwork.org/uploads/library/doc1036.pdf>

Որպես անկանոնությունը հայտնաբերող **շտեմարան** կարելի է առանձնացնել ARACHNE-ն<sup>62</sup>, TED-ը<sup>63</sup> կամ պայմանագրերի ռեգիստրները ԵՄ անդամ տարբեր երկրներում:

**բ) ՏՀԶԿ-ի վերոնշյալ առաջարկություններով և այլ վերլուծություններով սահմանվում են մի շարք կարմիր դրոշակներ** գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և բացահայտման վերաբերյալ:<sup>64</sup> ՀՀ-ում դրանք սահմանված են ՏՄՊՊՀ-ի կողմից<sup>65</sup>, սակայն գնումների ոլորտում համապատասխան պաշտոնատար անձինք չեն տիրապետում դրանց: ՏՀԶԿ առաջարկությունների համաձայն առկա է հակամրցակցային համաձայնությունների առկայությունը հավաստող անկանոնությունների վերաբերյալ պատասխանատու բոլոր պաշտոնատար անձանց տեղեկատվության բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտություն: Տեղեկատվության ապահովումը կարող է իրականացվել վերոնշյալ ուղեցույցի և screen-երից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումների իրականացման տեսքով:

---

<sup>62</sup>Risk scoring tool developed by the European Commission, Arachne CHARTER FOR THE INTRODUCTION AND APPLICATION OF THE ARACHNE RISK SCORING TOOL IN THE MANAGEMENT VERIFICATIONS,

<sup>63</sup><http://ted.europa.eu/TED/main/HomePage.do>

<sup>64</sup>“The red flags of corruption: procurement”, 2015, Independent Broad-based Anti-corruption Commission, Victoria State, Australia, “Public procurement: costs we pay for corruption”, 2013, PwC on behalf of European Anti-Fraud Office, “The most common procurement fraud schemes and their primary red flags”, International Anti-Corruption Resource Center

<sup>65</sup>Գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և բացահայտման վերաբերյալ ՀՀ ՏՄՊՊՀ-ի թիվ 317-Ս որոշում, ընդունված՝ 2011 թվականի 25 հուլիսին:

### C. Պետական օժանդակության տրամադրում

Շահառուների կողմից բարձրաձայնվել է այն հարցը, որ մի շարք դեպքերում պետական օժանդակություն է տրամադրվում նեպոտիզմի և պատրոնաժի հիման վրա: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16<sup>1</sup> հոդվածը սահմանում է *պետական օժանդակությունը որպես պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբի տրամադրվող ցանկացած օժանդակություն (ներառյալ՝ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ կամ այլ պայմաններ), ինչպես նաև արգելում է այն պետական օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը, բացառությամբ օրենքով նախատեսված օժանդակությունների:*

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ **նշված կարգավորումները բավարար չեն, քանի որ ՏՄՊՂՀ-ն օժտված չէ նշված ոլորտում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու գործիքակազմով:** Պետական օժանդակության վերահսկման մեխանիզմների կատարելագործման և արդյունավետության բարձրացման նպատակով դեռևս 2012 թվականին մշակվել է **«Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենքի նախագիծ**, որը սակայն մնացել է թղթի վրա:

Սույն հարցի վերաբերյալ **միջազգային փորձի** ուսումնասիրությունը հետևյալն է. Եվրոպական մակարդակում Եվրոպական միության գործունեության մասին դաշնագրի 107-րդ և 109-րդ հոդվածները ամրագրում են պետական օժանդակության վերահսկման մասին հիմնարար իրավական դրույթները: Հարկ է նշել, որ ԵՄ օրենսդրությունը նախատեսում է արգելված պետական օժանդակության լայն շրջանակ՝ այդ օժանդակության շարքում նախատեսելով նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչարարությունը: ԵՄ օրենսդրությամբ պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության իրականացման լիազորությունները վերապահված են ԵՄ մրցակցային մարմնին՝ Եվրոպական Հանձնաժողովին, իսկ անդամ-պետությունների մակարդակում՝ անդամ պետությունների մրցակցային մարմիններին:

Վերոգրյալի արդյունքում գտնում ենք, որ առկա է Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ սահմանված պետական օժանդակության վերահսկման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտություն:

## D. Պատասխանատվություն տնտեսական մրցակցության բնագավառի իրավախախտումների համար

Գործող օրենսդրությամբ՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար նախատեսվող տուգանքի չափերը, ընդհուպ մինչև երկու հարյուր միլիոն դրամ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար: Հարկ է նշել, որ թեև ՏՄՊՊՀ-ի կողմից մշակվել է ՏՄՊՊՀ-ի պատասխանատվության միջոցների կիրառման չափանիշների որոշման վերաբերյալ ուղեցույց<sup>66</sup>, այնուամենայնիվ հայեցողությունը ՏՄՊՊՀ-ի չափազանց մեծ է պատասխանատվության շեմերը որոշելիս:

Բացի այդ, առկա է անհամաչափություն տնտեսվարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց և պետական մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ նույն իրավախախտման համար կիրառվող պատասխանատվության ծանրության միջև: Մասնավորապես, պետական մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվում է ավելի մեղմ պատասխանատվություն: Այսպես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ*, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169<sup>3</sup>-րդ հոդվածի համաձայն՝ *պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից հանձնաժողովի կողմից պահանջվող, օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսպատիկի չափով*:

Հարկ է հավելել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով պետական մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման համար նախատեսվել են

<sup>66</sup>ՏՄՊՊՀ-ի պատասխանատվության միջոցների կիրառման չափանիշների որոշման վերաբերյալ ուղեցույց, ՏՄՊՊՀ, ընդունված՝ 31 մայիսի 2013 թվականի թիվ 133-Ս,

պատասխանատվության միջոցներ՝ նախազգուշացման և տուգանքի ձևով: Նշենք, որ ողջունելի է, որ նախևառաջ խստացվել է պատասխանատվության շեմը նաև պետական մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ: Բացի այդ, նախատեսվել են մի շարք այլ իրավախախտումներ, որոնց սուբյեկտները պետական մարմինների պաշտոնատար անձինք են: Սակայն, ՀՀ կառավարության կողմից 2016 թվականի հոկտեմբերի 6-ին վերոնշյալ նախազգծերին հավանություն է տրվել, որից հետո դրանք ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով (այսուհետ՝ ԱԺ) հետագա քննարկման նպատակով, որից հետո կրկին հետ են վերադարձել:

Ուստի, գործող օրենսդրության համատեքստում առկա է պատասխանատվության միջոցներ սահմանելիս ՏՄՊՂՀ հայեցողական լիազորությունները նվազեցնելու և պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց կողմից կատարված իրավախախտումների համանման պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտություն:

#### 4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ

##### A. Գնումների բողոքարկում

2016 դեկտեմբերի 16-ին թվականին ընդունվեց, և ապա՝ 2017 թվականի ապրիլի 25-ին ուժի մեջ մտավ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը<sup>67</sup>: Նախքան սույն Օրենքի ուժի մեջ մտնելը, իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում էր 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված, 2017 թվականի ապրիլի 25-ին ուժը կորցրած «Գնումների մասին» ՀՀ օրենքով:<sup>68</sup>

Այժմ քննարկենք նախ գնումների ոլորտում բողոքարկման հնարավորություն ունեցող անձանց շրջանակի, այնուհետև՝ գնումների բողոքարկման խորհրդի վերաբերյալ իրավակարգավորումները և միջազգային լավագույն փորձը:

###### o Բողոքարկման հնարավորություն ունեցող անձանց շրջանակ.

Գնումների բողոքարկման կարգը կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով, որը նախատեսում է *յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները*: Հարկ է անդրադառնալ «յուրաքանչյուր անձ» արտահայտությանը: Հաշվի առնելով այն, որ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, այստեղ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Մասնավորապես՝ Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար*: Այս կապակցության 07.09.2010 թվականի թիվ 906 որոշմամբ<sup>69</sup> իր դիրքորոշումն է արտահայտել Սահմանադրական դատարանը՝ նշելով, որ *ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ*: *Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը*: *Այն գործում է սահմանափակ դեպքերում, նախատեսված է այն իրավիճակների համար, երբ (...) օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է*

<sup>67</sup>Տե՛ս 2016 դեկտեմբերի 16-ին թվականին ընդունված, 2017 թվականի ապրիլի 25-ին ուժի մեջ մտած «Գնումների մասին» ՀՀ օրենքը այստեղ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110820>:

<sup>68</sup>Տե՛ս 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված, 2017 թվականի ապրիլի 25-ին ուժը կորցրած «Գնումների մասին» ՀՀ օրենքը այստեղ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64473>:

<sup>69</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 906 որոշումը այստեղ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60551>:



**հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում»:** Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է և դրանք սահմանելիս՝ հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել Սահմանադրական դատարանը նաև 04.04.2008 թվականի թիվ 747 որոշմամբ<sup>70</sup>, նշելով, որ. «...[3]յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի **իրավական շահագրգռվածություն**: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ **«շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն»:**

Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը<sup>71</sup> ցույց է տալիս.

**1) Առկա են սակավ երկրներ, որտեղ օգտագործվում է «յուրաքանչյուր ոք» եզրույթը:**

Օրինակ՝ **Սլովենիայում** ցանկացած քաղաքացի իրավունք ունի դիմելու Ֆինանսների նախարարության ենթակառուցվածքներում գտնվող հակակոռուպցիոն հանձնաժողով հանրային շահի պաշտպանության համար, եթե նա գտնում է, որ պայմանագրի կողմերը իրենց պայմանագրով կարող են վնաս հասցնել հանրային շահին:

**2) Արտասահմանյան երկրների պրակտիկայում նկատվում է այն տենդենցը, որ բողոք բերելու իրավունք ունեն շահագրգիռ անձինք, ում իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, իսկ որոշ երկրներում ներառելով այդ անձանց մեջ նաև մասնագիտացված հասարակական կազմակերպություններին:**

Ամբողջ համաշխարհային պրակտիկական զարգանում է այն ուղղությամբ, որ բողոքարկելու իրավունք ունեցողների հնարավորինս լայն շրջանակ ապահովվի: Այսպես, օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Չեխիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և մի

<sup>70</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 4-ի թիվ 747 որոշումը այստեղ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=43081>:

<sup>71</sup> Final Study Country Fiches of april 2015 MARKT/2013/072/C by Europe Economics and Milieu on the Economic efficiency and legal effectiveness of review and remedies procedures for public contracts.

շարք այլ երկրներում բողոք բերելու իրավունք ունեն այն անձինք, ում **իրավունքները խախտվել են կամ հնարավոր է խախտվեն: Բուլղարիայում** բողոք կարող են ներկայացնել միայն շահագրգիռ անձինք: Ընդ որում շահագրգիռ անձը գնահատողական կատեգորիա է, և դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշի անձի շահագրգռվածության առկայությունը կամ բացակայությունը՝ մրցակցության հանձնաժողովի կողմից նախապես մշակված փաստաթղթի հիման վրա, որտեղ սահմանված են շահագրգիռ անձ համարվելու համար անհրաժեշտ չափանիշները: **Չեխիայում** ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, եթե գտնում է, որ գործարքի կնքմամբ խախտվում են իր իրավունքները, հնարավորություն ունի դիմել այդ մարմին: Այս դեպքում առարկություններ առաջադրած անձը պարտավոր է նախ իր պատճառաբանված առարկությունները ներկայացնել մյուս կողմին և համաձայնության չգալու դեպքում միայն կարող է դիմել գրասենյակ: **Բելգիայում** հայց հարուցելու իրավունք ունեցողների շրջանակը տարբեր է ըստ հայցի առարկայի: Այսպես՝ գործարքի անվավերության և վնասների հատուցման հայց կարող է ներկայացնել ցանկացած անձ, ով շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքմամբ վնասներ կրելու կամ վնասներ կրելու իրական սպառնալիքի դեպքում: Բացի այդ, ցանկացած շահագրգիռ անձ կարող է հայց ներկայացնել դատարան այլընտրանքային միջոցների և սանկցիաների բացակայության դեպքում: Իսկ, օրինակ, **Գերմանիայում**, բողոք ներկայացնելու իրավունք ունեն այն գործարարները, որոնք, թեև չեն համարվում գործարքի մասնակից, բայց որոնց օրինական շահերը կարող էին վտանգվել հնարավոր խախտման արդյունքում: Նախքան բողոքարկելը հայցվորը պարտավոր է տեղյակ պահել պայմանավորվող կողմերին իր բողոքարկելու ցանկության վերաբերյալ: Հայցադիմումը պետք է կազմվի գրավոր, և պատճառաբանական մասը պետք է կցվի դիմումին անմիջապես: **Հունաստանում**, ցանկացած կողմ, ով օրինական շահ ունի պետական գնումների գործընթացում, և ում շահերը խախտվել են կամ կարող են խախտվել, իրավունք ունի բողոք ներկայացնել: **Կիպրոսում**, շահագրգիռ անձը, ում իրավունքները և օրինական շահերը խախտվել են պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող մարմնի կողմից, իրավունք ունի բողոք ներկայացնելու կամ Տենդերը Բողոքարկող մարմնին (Tenders Review Authority) կամ Վճռաբեկ դատարան:

Բացի այդ, հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՀԿ-ների դերը պետական գնումների վերահսկման մեջ խրախուսվում է, քանի որ այն օգնում է պետական գնումները վերահսկող կոմիտեին աշխատել ավելի թափանցիկ և արդյունավետ: ՀԿ-ների մասնակցությունը պետական գնումների վերահսկման գործընթացին ենթադրում է հասարակության վստահության ամրապնդում: Այն երկրներում, որտեղ **հասարակական մասնագիտացված կազմակերպություններին վերապահված է հնարավորություն մասնակցել գնումների իրականացման գործընթացին**, նկատվում է բողոքարկման խորհրդի գործունեության

առավել արդյունավետ և արդարացի համակարգ: Այդպիսի երկրների շարքին են դասվում Բուլղարիան, Մլովենիան, Ավստրիան: **Բուլղարիայում** գնումների բողոքարկման ոլորտում մեծ դեր է վերապահված մասնագիտացված կազմակերպություններին և ասոցիացիաներին, որոնք 2012 թվականից ի վեր կարող են հայցադիմում ներկայացնել՝ իրենց անդամների շահերի պաշտպանությամբ: Նմանատիպ հանձնարարական է պարունակում նաև Օրիուսի կոնվենցիան Green Procurement կազմակերպությունների մասով, որին մենք անդամակցում ենք: **Չեխիայում** գործում են ավելի քան 20 հակակոռուպցիոն ՀԿ-ներ, որոնց գործունեությունն ուղղված է պետական գնումների ոլորտում մրցակցության սահմանափակումը նվազագույնի հասցնելուն: 2012 թվականից ստանալով բողոքարկման իրավունք՝ դրանք ավելի մեծ ազդեցություն ստացան կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Չեխիայում կոռուպցիայի դեմ պայքարի ամենահայտնի կազմակերպություններից Ռոթս-ը (Reconstruction of the State) ակտիվ համագործակցություն է իրականացնում կառավարության հետ պետական գնումների ոլորտում կոռուպցիայի վերացման ուղղությամբ լոբբինգի և հակակոռուպցիոն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման միջոցով:

3) **Որոշ երկրներում նաև գնումների բողոքարկման խորհուրդը կարող է ինքնուրույն նախաձեռնել վարույթ ենթադրյալ խախտում հայտնաբերելու դեպքում (ex officio):**

Այսպես, **Ֆրանսիայում** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները (անգամ դպրոցները) իրենց գործունեության ընթացքում պետական գնումների հետ կապված խախտում հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով հնարավորություն ունեն բողոքարկելու: Հետաքրքիր պրակտիկա է կիրառվում **Հունգարիայում**, որտեղ Պետական առևտրային արբիտրաժային հանձնաժողովը լիազորված է սկսելու վարույթ շահագրգիռ անձի դիմումի կամ սեփական նախաձեռնությամբ (ex officio): **Չեխիայում** գործում է նաև բողոքարկման ի պաշտոնե կարգ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ եթե բողոքարկումը նախաձեռնվել է ի պաշտոնե կարգով, ապա որոշումը ենթակա չէ այլ կարգով հետագա բողոքարկման: դեպքում նախատեսված չէ որոշումը բողոքարկելու

o **Գնումների բողոքարկման խորհրդի կազմավորման և գործերի քննության կարգ**

Ինչպես երևում է «Գնումների մասին» գործող օրենքի 47-րդ հոդվածի վերլուծությունից, **Էականորեն փոխվել է բողոքարկման խորհրդի կազմավորման կարգը:** Այսպես, եթե նախկինում Խորհրդի անդամների կազմում էին ներկայացուցիչներ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմիններից, ՀՀ քաղաքային համայնքներից, ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ-ում գրանցված և լիազորված մարմին գրավոր դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից (միավորումներից), ապա ներկայումս՝ Խորհրդի անդամները նշանակվում են ՀՀ նախագահի կողմից՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում նկատվում է այն միտումը, որ բողոքարկման խորհրդի անկախությունն ապահովող գործոններն են՝ բողոքարկման խորհրդի առանձնացվածությունը պետական այլ մարմիններից և դրա կազմավորման կարգը, ինչպես նաև սեփական աշխատակազմով հանդես գալու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, երկրների մեծամասնությունում բողոքարկման իրավասու մարմինները նշանակովի մարմիններ են, սակայն կան նաև ընտրովի մոդելներ: Բացի այդ, որոշ երկրներում ընդհանրապես բացակայում է հատուկ մարմին, և փոխարենը գործի քննությունն իրականացվում է դատարանների կողմից: Մասնավորապես, **Հունաստանում** գնումների բողոքարկման խորհրդի անդամները նշանակվում են նախագահի կողմից: **Կիպրոսում** բողոքարկման խորհրդի անդամներին նշանակում է Նախարարների խորհուրդը: Կիպրոսում նույնպես նախանշվում է օրենսդրական կարգավորման նմանատիպ սկզբունքների համակարգ: Հատկանշական է այն, որ այստեղ գնումների բնագավառում գործարքների կնքման հետ կապված վեճերը քննվում են անմիջապես Վճռաբեկ դատարանի կողմից: **Սլովենիայում** իրավասու մարմինը՝ պետական վերահսկողական կոմիտեն, ընտրովի մարմին է, որը ընտրվում է Խորհրդարանի կողմից: Բացի այդ, վերջինիս կից գործում է նաև 12 անդամից բաղկացած աշխատակազմ: **Գերմանիայում** պետական գնումների գործընթացները կարող են վերանայվել Պետական գնումների պալատի կողմից (դաշնային մակարդակով) և Լանդերի կողմից (տարածաշրջանային մակարդակով) համապատասխանաբար: Պետական գնումների պալատները անդամները նշանակվում են շրջանային կառավարման մարմինների կողմից: **Բուլղարիայում** գնումների վերաբերյալ վեճերով բողոքները քննելու իրավագործությունը վերապահված է միայն դատարաններին: **Միացյալ Թագավորությունում** բողոքի քննությունն սկսելու համար անհրաժեշտ է հայց հարուցել երկրի Գերագույն դատարան: **Ավստրիայում** բողոքների քննությունն իրականացվում է Վարչական դատարանի կողմից:

**Բացի այդ, օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն փոխվել է բողոքարկման խորհրդի անդամների կազմը և գործերի քննության կարգը:**

Նախկինում այն բաղկացած էր **56 անդամից**, որոնց շարքում էին ներկայացուցիչներ տարբեր նախարարություններից, պետական և տեղական ինքնակազմավարման մարմիններից, ոլորտային գերատեսչություններից, քաղաքացիական հասարակառության կազմակերպություններից և այլն<sup>72</sup>:

Ներկայումս, խորհրդի անդամ կարող են հանդիսանալ **մինչև 3 հոգի**, որոնք ունեն տնտեսագիտության (էկոնոմիկա) և կառավարման (մենեջմենտ) կամ իրավագիտության

---

<sup>72</sup>Տե՛ս Բողոքարկման խորհրդի նախկին անդամների ցանկը այստեղ՝ <http://gnumner.am/am/category/194/1.html>:

մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն: Ավելին, նոր կարգավորումներով, գնումների գործընթացի վերաբերյալ բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից՝ **միանձնյա** անգամ այն դեպքում, երբ խորհուրդը բաղկացած լինի 3 անդամից: Կարծում ենք, բողոքի քննումը մեկ անձի կողմից կարող է կոռուպցիոն ռիսկերի վտանգ առաջացնել, իսկ առավել կարևոր նշանակություն ունեցող գնումների դեպքում կարող է լրջորեն վտանգվել պետության և հանրության շահը: Դժվար է նաև պատկերացնել, թե ինչպես խորհրդի անդամը, հանդես գալով միանձնյա, լինելով կամ իրավաբան, կամ տնտեսագետ, կարողանա լինել արհեստավարժ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում և ապահովել գնումների բողոքարկման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը:

Այժմ, ներկայացնենք **միջազգային փորձի վերլուծությունն** այս հարցի վերաբերյալ. ԵՄ մի շարք երկրներում, օրինակ՝ **Բուլղարիայում**, **Կիպրոսում**, **Չեխիայում**, **Սլովենիայում**, **Գերմանիայում**, **Իռլանդիայում**, **Մալթայում**, գործում է բողոքների քննման **կոլեգիալ կարգ**:

**Բուլղարիայում** գործում է մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որը բաղկացած է 7 անդամից, որոնք բողոքը քննում և որոշում են կայացնում ձայների մեծամասնությամբ: **Սլովենիայում** գնումների բողոքարկման իրավասու մարմինը՝ պետական վերահսկողական կոմիտեն բաղկացած է 5 անդամից, իսկ բողոքների քննությունն իրականացվում է կոլեգիալ: **Կիպրոսում** գնումների բողոքարկման իրավասու մարմինը բաղկացած է 4 անդամից և նախագահից, և բողոքները քննում են նույնպես կոլեգիալ: **Գերմանիայում**, ինչպես նշվեց, գործում է բողոքարկման երկու աստիճանակարգ՝ պետական և ֆեդերալ մակարդակով: Պետական գնումների պալատում հաշվվում է 10 անդամ (դաշնային մակարդակ), իսկ Լանդերում՝ (տարածաշրջանային մակարդակ)՝ 9 անդամ: Բողոքների քննության կարգը երկու դեպքում էլ կոլեգիալ է: **Մալթայում** գործում է Գործարքների բաժանմունք, որի գործառույթներից մեկն էլ վերահսկողությունն է գնումների ոլորտում: Այն իր մեջ ներառում է շուրջ 40 անդամ: Բողոքների քննության կարգը կրկին կոլեգիալ է: **Իռլանդիայում** գնումների բողոքարկման իրավասու մարմինը բաղկացած է 12 անդամից:

Այն երկրներում, որտեղ բողոքների քննությունը իրականացվում է դատարանների կողմից, կրկին գործում է կոլեգիալ կազմ, օրինակ՝ Ավստրիայում՝ Վարչական, իսկ Կիպրոսում՝ Վճռաբեկ դատարանի կողմից:

Փորձելով գնահատել բողոքարկման խորհրդի անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ ներկայացնենք 2011-2016 թվականների բողոքարկման ցուցանիշների համադրումը և 2016 թվականի բողոքարկման քանակական ցուցանիշները<sup>73</sup>:

**Աղյուսակ 7. Բողոքարկման քանակական ցուցանիշները 2011-2016թթ. ընթացքում**

Հ/Հ	Ստացված բողոքներից	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
1	Բավարարվել են	15	17	19	21	24	58
2	Մերժվել են	5	11	20	24	27	62
3	Թողնվել են առանց քննության	6	10	10	2	3	8
4	Ավարտված է (սահմանափակ ընթացակարգ*)				1		
<b>Ընդամենը</b>		<b>26</b>	<b>38</b>	<b>49</b>	<b>48</b>	<b>54</b>	<b>128</b>

Ինչպես երևում է վերևում ներկայացված համեմատության ցուցանիշներից, 2015թ. համեմատ՝ 2016թ. բողոքների քանակն աճել է **57,81 %-ով**՝ նախորդ տարվա 54-ի փոխարեն՝ քննվել է 128 բողոք: Չնայած դրան՝ ներկայացված բողոքների ընդհանուր թվի նկատմամբ՝ բավարարված, մերժված, ինչպես նաև առանց քննության թողնված բողոքների տոկոսային հարաբերակցությունը գրեթե մնացել է անփոփոխ:

2016թ. ընթացքում գնումների բողոքարկման խորհրդի կողմից վարույթ են ընդունվել 128 բողոք, որից գնումների բողոքարկման խորհրդի որոշումների համաձայն՝ ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է 58 բողոք (ներկայացված բողոքների 45.31 տոկոսը), մերժվել է 62 բողոք (ներկայացված բողոքների 48.44 տոկոսը), առանց քննության է թողնվել 8 բողոք (ներկայացված բողոքների 6.25 տոկոսը): Ներկայացրած 28 բողոք վարույթ չեն ընդունվել և հետ են վերադարձվել՝ սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

<sup>73</sup>Տե՛ս 2016 թվականի տարեկան հաշվետվությունը, պատրաստված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից <http://gnumner.am/am/category/533/1.html>:

## **B. Գնումների գնահատում**

**Շահառուների կողմից բարձրաձայնվում է այն խնդիրը, որ գնումների գնահատող հանձնաժողովները ողջամիտ ժամկետներում չեն իրականացնում հայտերի գնահատումը, այլ առանց հիմնավոր պատճառների ձգձգում են:**

Գնումների գնահատման կարգը սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և ՀՀ կառավարության մայիսի 4-ի N 526-Ն որոշման 6-րդ բաժնով, որոնցով, սակայն, որևէ ժամկետներ նախատեսված չեն գնումների գնահատման գործընթացը կարգավորելու համար: Վերոնշյալը հնարավորություն է ընձեռնում չարաշահել իրենց լիազորությունները և իրենց պարտականությունները ժամանակին անհարկի չիրականացնել:

Թեև միջազգային փորձում, որպես կանոն, ևս նման ժամկետներ նախատեսված չեն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում այլ մշակույթ է, երբ չարաշահումներ են տեղի ունենում, այդ իսկ պատճառով գտնում ենք, որ առկա է գնումների գնահատման գործընթացը ժամկետներով սահմանափակելու անհրաժեշտություն:

### C. ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի շահագործում

**Շահառուները շատ են բարձրաձայնում այն հարցը, որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգը որոշ դեպքերում բարդ է շահագործվում:**

Հարկ է նշել, որ գնումների ոլորտում առկա են երկու հիմնական կայքեր՝ gnumner.am կայք, որտեղ հրապարակվում է գնումներին առնչվող ամբողջ տեղեկատվությունը և ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգը: Առաջին կայքը բավականին հեշտ է շահագործվում, սակայն երկրորդ կայքի շահագործման ժամանակ առաջանում են որոշակի խնդիրներ: Մասնավորապես, այլ համանման համակարգերում, որտեղ պարտադիր ներկայացման փաստաթղթերը ամբողջությամբ չեն ներբեռնվել, հնարավոր չէ ներկայացնել հայտ, սակայն ներկայիս ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգն այդպես չի գործում:

Օրինակ, այս տարվա փետրվարին Երևանի քաղաքապետարանը պարզեցված ընթացակարգով գնման մրցույթ էր հայտարարել՝ բնակչությանը անվճար համակարգչային տոմոգրաֆիայի ծառայությունների մատուցման համար: Մրցույթի հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունը և «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊ ընկերությունը, սակայն **պետական գնման մրցույթը հաղթել է ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը:** Մեր կազմակերպության հետաքննող լրագրողի կողմից ուսումնասիրվել է այլ խնդիրը:<sup>74</sup> Պատճառը եղել է տեխնիկական և կապված է եղել կայքի *user-friendliness* չլինելու հետ: Մասնավորապես, նշված հրավերի II մասով սահմանված է եղել, որ մասնակիցը «Պիտանելիության չափորոշիչ» դաշտում կցում է նաև հայտի ապահովումը՝ տուժանքի ձևով (Հավելված 9), որի 1.1 կետի համաձայն՝ *վճարման պահանջագիրը հանդիսանում է տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մասը:* Այսինքն, հրավերի հավելված 9-ը բաղկացած է եղել տուժանքի մասին համաձայնության և վերջինիս կից վճարման պահանջագրի ամբողջությունից: Մասնակիցը էլեկտրոնային գնումների armeps.am համակարգում կցել է փաստաթղթերից մեկը, իսկ համակարգ այն ընդունել է՝ չնշելով, որ թերի է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն ունեցել ենք նման պրակտիկա, երբ չնչին տեխնիկական սխալի պատճառով շուրջ 1,5 միլիոն դրամի կորուստ ենք ունեցել, գտնում ենք, որ անհրաժեշտ է այս համակարգը կատարելագործել:

<sup>74</sup><https://bizprotect.am/am/news/show/17>



## D. Հայտի ապահովում

Օրենսդրորեն սահմանված է, որ *հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ էթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:<sup>75</sup>*

Գտնում ենք, որ վերոնշյալ իրավիճակներից խուսափելու համար առավել նպատակահարմար է մինչև որոշակի շեմը հատելը հայտի ապահովման ներկայացման պահանջ չնախատեսել:

---

<sup>75</sup> ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 40-րդ և 41-րդ կետեր:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ` ԲԻԶՆԵՍ ՈԼՈՐՏ

### A. Գործարար շահերի պաշտպան

Շահառուների կողմից մշտապես բարձրաձայնվում էր այն հարցը, որ ՀՀ-ում առկա չէ բիզնեսին և պետության միջև որդ օղակ, որը կապահովի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Այդ խնդրի լուծում կարող է հանդիսանալ բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը ՀՀ-ում:

Գործարարների շահերի պաշտպանի ինստիտուտը նպաստում է գործարար միջավայրի բարելավմանն ու կոռուպցիայի կանխարգելմանը և պետություն-մասնավոր հատված մշտական երկխոսության ապահովմանը: Հարկ է նշել, որ 2017 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվեց «Գործարար շահերի պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը սակայն շրջանառությունից հանվեց:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ բիզնես օմբուդսմենի տարբեր մոդելներ առկա են մի շարք երկրներում, օրինակ՝ Ավստրալիա, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, Ռուսաստան, ԱՄՆ և այլն: Այժմ քննարկենք մարմնի ձևավորման և գործունեության հիմքում ընկած հիմնական սկզբունքները:

Բիզնես օմբուդսմենի ինստիտուտը կարգավորող առաջին սկզբունքը **անկախությունն է**: Միջազգային փորձի ուսումնասիրությունը այս հարցի շուրջ վկայում է, որ առկա են պաշտպանի նշանակման կարգի բազմաթիվ մոդելներ: Մասնավորապես, առկա են երկրներ, որտեղ

- Պաշտպանին նշանակում է **կառավարության ղեկավարը**. Ավստրալիայի Փոքր Բիզնեսի և Ընտանեկան Ձեռնարկությունների Օմբուդսմենը նշանակվում է Կառավարության ղեկավարի (Governor-General) կողմից՝ գրավոր ակտի միջոցով: Ուկրաինայում Բիզնես օմբուդսմենի ընտրում է խորհուրդը, որի որոշումները հետագայում ներկայացվում են կառավարության հաստատմանը: Վրաստանում Հարկային օմբուդսմենին նշանակում է վարչապետը՝ համաձայնացնելով խորհրդարանի ղեկավարի հետ:
- Պաշտպանին նշանակում է երկրի **նախագահը**. Ղազախստանի բիզնես օմբուդսմենը նշանակվում է Ղազախստանի Հանրապետության նախագահի հրամանագրով և հաշվետու է վերջինիս: Ռուսաստանում բիզնես օմբուդսմենը նշանակվում է ՌԴ նախագահի հրամանագրով՝ 5 տարի ժամկետով և հաշվետու է վերջինիս: ՌԴ նախագահը բիզնես օմբուդսմենի ընտրությունը կատարում է ինքնուրույն՝ հաշվի առնելով բիզնես համայնքի կարծիքը: ԱՄՆ-ում Փոքր բիզնեսի հարցերով զբաղվող Ազգային օմբուդսմենը նշանակվում է նախագահի կողմից:
- Պաշտպանի նշանակումն իրականացվում է **նախարարի** մակարդակով. Ֆրանսիայում Հաշտարարը, ով իրականացնում է ֆիզիկական (հարկատուներ, սպառողներ,

առևտրականներ, ընկերության տնօրեններ և այլն) կամ իրավաբանական անձանց (ընկերություն, ասոցիացիա և այլն) կողմից նախարարության ծառայությունների դեմ բերվող անհատական բողոքների քննություն, նշանակվում է Ֆրանսիայի տնտեսության, ֆինանսների և արդյունաբերության նախարարի որոշմամբ՝ 3 տարի ժամկետով:

Բիզնես օմբուդսմենի ինստիտուտը կարգավորող երկրորդ սկզբունքը **հանրային մասնակցությունն է**: Ուկրաինայի բիզնես օմբուդսմենի խորհրդի բաղկացած է ներքոնշյալ խմբերի լիազորված ներկայացուցիչներից. Ուկրաինայի կառավարություն, Միջազգային ֆինանսական կազմակերպություններ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և ՏՀԶԿ) և Բիզնես ասոցիացիաներ (Ուկրաինայի ամերիկյան առևտրի պալատ, Եվրոպական բիզնես ասոցիացիա, Ուկրաինայի գործատուների ֆեդերացիա, Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատ և Ուկրաինայի արդյունաբերողների և գործարարների լիգա) (2-րդ և 3-րդ խմբերի կազմը հետագայում կարող է ընդլայնվել): Ռուսաստանի փորձի ուսումնասիրությունը սույն հարցի շուրջ ևս վկայում է, որ հասարակական սեկտորի շահագրգիռ բոլոր կողմերի կարծիքն է հաշվի առնվում. ՌԴ բիզնես օմբուդսմենին կից գործում է 13 անձից բաղկացած հանրային խորհուրդ, որոնք հիմնականում բիզնես շահերը ներկայացնող հասարակական կառույցների ներկայացուցիչներ են:

Բիզնես օմբուդսմենի ինստիտուտը կարգավորող երրորդ սկզբունքը **հաշվետվողականությունն է**: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առկա են հաշվետվությունների ներկայացման հիմնականում եռամսյակային և տարեկան մոդելներ:

Բիզնես օմբուդսմենի ինստիտուտը կարգավորող հաջորդ սկզբունքը **արդյունավետությունն է, որը հաճախ արտահայտվում է վերջինիս տրամադրված լիազորությունների լայն շրջանակով**: Օրինակ, Վրաստանի իրավակարգավորումներով նախատեսված է, որ հարկային օմբուդսմենը, ի թիվս այլ գործառույթների, մասնակցում է հարկային խորհրդի նիստերին: Բացի այդ, գուգահեռներ անցկացնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 9-րդ հոդվածների հետ՝ կարելի է տեսնել, որ *վերջինս բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում իր իրավասությունների շրջանակում լիազորված է անարգել այցելելու իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն*: ՌԴ բիզնես օմբուդսմենը ևս, ի թիվս այլ գործառույթների, կարող է անարգել մուտք գործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, առանց հատուկ թույլտվության այցելել «ձեռնարկատիրական հոդվածներով» կալանավայրերում և քրեակատարողական հիմնարկներում գտնվող մեղադրյալներին և դատապարտյալներին, մասնակցել ձեռնարկություններում պետական մարմինների կողմից անցկացվող ստուգումներին, ձեռնարկատերերի և նրանց խմբերի իրավունքների

պաշտպանության համար դիմել դատարան, բողոքարկել արբիտրաժային դատարանների՝ ուժի մեջ մտած դատական ակտերը: Բացի այդ, Ռուսաստանի բիզնես օմբուդսմենի ինստիտուտի գործառնությունների թվին են պատկանում կոռուպցիան ծնող գործոնների վերահսումը և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության ապահովումը, օրինագծերի նախապատրաստումն ու մշակումը՝ նպատակ ունենալով չեզոքացնել կոռուպցիային նպաստող պատճառներն ու պայմանները, կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված մեթոդական աշխատանքների կազմակերպումը և բիզնես ոլորտի գործողությունների կառավարումը՝ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համատեքստում:

Հաջորդ կարևոր չափանիշը վերաբերվում է **բիզնես օմբուդսմենի թեկնածուին առաջադրված պահանջներին**: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ապահովել այն հանգամանքը, որ բիզնես օմբուդսմենի թեկնածուն կապված չէ նախկին կամ գործող կառավարության կամ քաղաքական ուժերի հետ ընդհանրապես, այսինքն՝ վերջինս իրապես անկախ է: Նաև կարևորվում է վերջինիս կողմից հակակոռուպցիոն և բարեխղճության բարձր արժեքներ կրելու պահանջը:

Հաջորդ չափանիշը **լիազորությունների դադարեցման կարգին** է վերաբերվում: Ուկրաինայի կարգավորումների համաձայն՝ *Բիզնես օմբուդսմենի ազատման վերաբերյալ խորհրդի որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, այնուհետև ներկայացվում է Ուկրաինայի կառավարության հաստատմանը*:

Վերջին սկզբունքը, որ հարկ ենք համարում առանձնացնել, վերաբերվում է գործադիր շահերի պաշտպանին **անձեռնմխելիության երաշխիքներին**: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են վերջինիս անձեռնմխելիության երաշխիքները: Առկա է համանման երաշխիքների ներդրման անհրաժեշտություն նաև բիզնես օմբուդսմենի համար՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրության նորմերի պահանջները՝ օմբուդսմենի հատուկ կարգավիճակի վերաբերյալ:

## **B. Բիզնեսների քրեական պատասխանատվություն**

ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում առկա են խնդրահարույց դրույթներ՝ կապված իրավաբանական անձանց պատասխանատվության հետ:

Ա) Իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն նախատեսելու նպատակահարմարության հարցը.

Նախագծի 7-րդ բաժինը նվիրված է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ինստիտուտին: ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածով և նախատեսված է իրավաբանական անձանց պատասխանատվությունը: Սույն հոդվածը մասնավորապես սահմանում է, որ

*«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել իրավախախտումների մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:*

*2. Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական:*

**Ինչպես տեսնում ենք, կոնվենցիայով առաջադրված չէ միայն քրեական պատասխանատվություն նախատեսելու պահանջ:**

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ամրագրված է մի շարք պետությունների օրենսդրությունում՝ Ավստրիա, Անգլիա, Բելգիա, Դանիա, Հունգարիայում, Իսրայելում, Իռլանդիայում, Իսլանդիայում, Կանադայում, Չինաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլուր: Սակայն, տարբեր երկրներ ունեն տարբեր տեսակետներ իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ: Մասնավորապես, կորպորատիվ պատասխանատվության հիմքը տարբերվում է երկրից երկիր, և որոշ երկրներում նախատեսված է քրեական պատասխանատվություն, ինչպիսիք են օրինակ՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, իսկ որոշ երկրներում՝ վարչական՝ Գերմանիա, Իտալիա...

Հարկ է նշել, որ տեսական գրականության մեջ նշվում է, որ այն երկրները, որոնք ունենք առանձին վարչական դատարաններ և վարչական դատավարություն, ինչպես օրինակ Գերմանիայում է, ցանկալի է նախատեսել վարչական պատասխանատվություն, ոչ թե՛ քրեական, քանի որ վարչական դատավարությամբ արդեն իսկ նախատեսված են լծակներ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Ուստի, առաջարկում ենք դիտարկել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հարցը:

**Բ) Իրավաբանական անձանց համար նախատեսված պատժամիջոցների ընտրության հարց**

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ *յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, պետք է ապահովի սույն հոդվածին համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների կիրառումը»:*

Նախագծի 131-րդ հոդվածով նախատեսված է իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը: *Մասնավորապես, իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժները՝*

- 1) *տուգանք,*
- 2) *գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում,*
- 3) *հարկադիր լուծարում,*
- 4) *Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք:*

Նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցների ցանկը, ի տարբերություն միջազգային փորձի, շատ սպառիչ է: Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 1988թ. հանձնարարականով նախատեսված են մի շարք պատիժներ են, և հիմնականում շեշտը դրված է կանխարգելիչ պատիժների վրա, ոչ թե՝ ընկերությունների տնտեսական ոչնչացման: Բացի այդ, անհրաժեշտ է պահպանել պատժի համաչափության սկզբունքը: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ Նախագծով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները չեն ընդգրկում այնպիսի այլընտրանքային պատիժներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողության ենթարկումը (Ալբանիա, դատական հսկողության ենթարկումը (Ֆրանսիա՝ մինչև 5 տարի ժամկետով) և այլն: Եթե իրավաբանական անձը կոռուպցիոն հանցագործության պատճառով է ենթարկվում իրավաբանական պատասխանատվության, ապա պատիժ է նախատեսվում նաև պետական գնումների գործընթացին մասնակցության գրկումը:

Ուստի, առաջարկում ենք վերանայել սույն հանցագործության համար նախատեսված պատժատեսակների համակարգը՝ ներառելով նաև կանխարգելիչ բնույթի պատժատեսակներ, ինչպես, օրինակ, վարչական կամ դատական հսկողությունն է:

**Գ) Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառման հարց**

Նախագծի 129-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և

բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 128-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

**Ցանկանում ենք նշել, որ այստեղ կիրառելի է «Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր» (“Anti-Corruption Compliance Program”) գործիքի ներդրումը:**

Շատ երկրներում, ազդեցիկ համապատասխանության ծրագրի ներկայությունը այլ գործոն է, որը պետք է հաշվի առնվի իրավաբանական անձի պատասխանատվության սահմանման ժամանակ: Տարբեր երկրներ տարբեր ֆորմուլաներ են նախատեսել ընկերությունների կողմից պատասխանատվությունից ազատվելու կամ մեղմացնելու, երբ ապացուցվում է due diligence-ը, այն է՝

- Որոշ երկրներում, օրենքը նախատեսում է **պատասխանատվությունից ամբողջական ազատում** այն դեպքերում, երբ առկա է ազդեցիկ համապատասխանության ծրագիր, և պատասխանատու աշխատակազմը կատարել է իր կանխարգելման և վերահսկման պարտականությունները: **Հոլանդիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում և Ավստրալիայում**, օրինակ, իրավաբանական անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե նախնական քննության կամ դատավարության ժամանակ հաստատվել է, որ իրավաբանական անձն ունեցել է համապատասխանության բավարար կարգավորումներ և մեխանիզմներ, և որ վերջինս իրականացրել է հնարավոր ամեն ինչ իր լիազորությունների սահմանում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ:
- Երկրների մեծամասնությունում ազդեցիկ համապատասխանության ծրագրի առկայությունը մեկ այլ գործոն է, որը **պետք է, կամ առնվազն կարող է հաշվի առնվել** իրավաբանական անձի քրեական պատասխանատվության սահմանման ժամանակ, օրինակ՝ **Լատվիա, Մոնտենեգրո, Սերբիա և Ուկրաինա:**
- Նշյալը որպես պաշտպանություն նախատեսված է նաև **Ճապոնիայում ու Կորեայում, սակայն այդ երկրներում ընկերության վրա է դրված ապացուցման բեռն առ այն, որ իրենց կորպորատիվ մշակույթում և վերահսկողական պրակտիկայում առկա չէին թերություններ:**
- Վարչական դատավարությունում ադեկվատ և արդյունավետ համապատասխանության **ծրագիրը** դատարանների կողմից հաշվի է առնվում **հետևյալ հանգամանքների առկայության կողմից.**
- ✓ Համապատասխանության ծրագրերը պետք է հարմարեցվեն տվյալ ընկերությանը: Նման համապատասխանեցման ծրագրերը պետք է ներառեն քաղաքականություններ, օրինակ, նվերների հյուրընկալության վերաբերյալ:

- ✓ Կոռուպցիոն ռիսկի նվազեցման նպատակով համապատասխանության ծրագիրը պետք է հաշվի առնի նաև երրորդ կողմերին և ռիսկի վրա հիմնված պատշաճ ուսումնասիրություն (due diligence) կատարի:
- ✓ Ավելին, երրորդ կողմի պատշաճ ուսումնասիրությունը պետք է իրականացվի նաև բիզնես գործընկերների նկատմամբ: Նմանապես, պատշաճ ուսումնասիրությունը պետք է իրականացվի ցանկացած նախատեսված միացման կամ միաձուլման վաղ փուլում:
- ✓ Այս բոլոր միջոցները պետք է հետևողականորեն և պարբերաբար վերահսկվեն, մշտադիտարկվեն և փաստաթղթերով հիմնավորվեն: Համապատասխանության ծրագրերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ համոզվելու համար, որ կաշառակերության ռիսկերը ադեկվատ կերպով գնահատված են:
- ✓ Ի հավելումն վերնից՝ ղեկավարության կողմից ստացված հաղորդագրությունից, ընկերությունները պետք է պարբերաբար վերապատրաստեն աշխատակիցներին այդ ոլորտներում ապահովելու համար, որ նրանք հասկանան այդ քաղաքականությունները հետևեն դրանց:

**Իտալիայում, Իսպանիայում** և այլ երկրներում իրավակարգավորումն ունի նման տեսք. *Եթե հանցագործությունը/իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձի անունից, նրա ուղղակի կամ անուղղակի շահի համար, իր օրինական ներկայացուցիչների կամ նրանց կողմից, որոնք գործում են որպես իրավաբանական անձի մարմնի անդամներ կամ անհատապես, իրավաբանական անձը ազատվում է պատասխանատվությունից, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.*

1. ***Իրավաբանական անձը, մինչև հանցանքի կատարումը, ընդունել և արդյունավետորեն իրականացրել է հակակոռուպցիոն համապատասխանության կազմակերպման և կառավարման այնպիսի մոդելներ, որոնք ներառում են նույն բնույթի հանցագործությունները/իրավախախտումներ կանխարգելելու կամ դրանց կատարման ռիսկը զգալիորեն նվազեցնելու պատշաճ վերահսկողության միջոցներ:***
2. ***Համապատասխանության ծրագրի իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացվել է իրավաբանական անձի՝ նախաձեռնողականության և վերահսկողության ինքնուրույն լիազորություններով օժտված Հատուկ այդ նպատակով ստեղծված ստորաբաժանման կողմից, կամ այն ստորաբաժանման կողմից, որն իրավաբանական պատասխանատվություն է կրում իրավաբանական անձի ներքին վերահսկողության արդյունավետությունը վերահսկելու համար:***
3. ***Հանցագործությունը/իրավախախտումը կատարող անհատները խարդախությամբ խուսափել են համապատասխանության ծրագրից կամ խախտել են այն:***



4. *2-րդ կետով նախատեսված ստորաբաժանման կողմից թույլ չի տրվել վերահսկողական իր գործառնությունների անգործություն կամ ոչ բավարար գործունեություն:*

Բացի այդ, «Պետական գնումների մասին» ԵՄ 2014 թվականի հրահանգը ևս նախատեսում է նոր նկատառումներ գնումներին մասնակցության բացառման հիմքերի վերաբերյալ, եթե առկա են compliance ծրագրեր (102-րդ հոդված), որոնց համաձայն՝ *այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հնարավորության վրա, որ տնտեսվարող սուբյեկտները կարող են համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված ցանկացած քրեական հանցագործությամբ կամ ոչ իրավական վարքագծով պատճառված հետևանքների վերացմանը և սխալ վարքագծի հետագա դեպքերի արդյունավետ կանխմանը: Այս միջոցները կարող են կազմված լինել, մասնավորապես՝ կադրային և կազմակերպչական միջոցներից, ինչպիսիք են, օրինակ, սխալ վարքագծի մեջ ներգրավված անձանց կամ կազմակերպությունների հետ բոլոր կապերի խզումը, անձնակազմի վերակազմակերպումը, հաշվետվողականության և հսկողության համակարգերի իրականացումը, ներքին աուդիտի կառուցվածքային ստորաբաժանման ստեղծումը և ներքին պատասխանատվության և փոխհատուցման կանոնների ընդունումը:*

Այս առիթով, հատկապես՝ սահմանափակ ռեսուրսներ ունեցող ՓՄՁ-ներին ուղղված, ՏՀԶԿ-ի, ՄԱԿ-ի Հանցավորության և թմրամիջոցների գրասենյակի և Համաշխարհային բանկի կողմից 2013 թվականին մշակվել է «Հակակոռուպցիոն էթիկայի և համապատասխանության ուղեցույցը բիզնեսի համար»:<sup>76</sup>

---

<sup>76</sup>Anti-Corruption Ethics and Compliance Handbook for Business

### C. Բիզնեսին մասնավոր դետեկտիվների աջակցություն

Մի շարք շահառուներ բարձրաձայնում են այն հարցը, որ իրենք չունեն բավարար մեխանիզմներ ֆոնային ստուգումներ (background check) իրականացնելու համար: Խնդիրը հատկապես արդիական է օտարերկրյա գործընկերների հետ հարաբերություններում: Բացի այդ, տնտեսվարող սուբյեկտները հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ ակտիվները բացակայում են, թղթավարությունը ճշգրիտ չի իրականացվում կամ ոչ օրինական եկամուտներ են ստացվում:

Վերոնշյալ խնդրի լուծման հնարավոր միջոցներից մեկը **մասնավոր դետեկտիվների** ինստիտուտի ներդրումն է: Այն օպտիմալ կերպով օգտագործվում է քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ իրենց օրինական իրավունքների ու շահերի պաշտպանության համար հնարավորությունները մեծացնելու նպատակով: Բիզնես ոլորտում մասնավոր դետեկտիվները և մասնավոր դետեկտիվ գործունեության ձեռնարկությունները (այսուհետ՝ մասնավոր դետեկտիվ գործունեության սուբյեկտներ) էական աջակցություն են ցուցաբերում տնտեսվարող սուբյեկտներին նրանց պարտապանների և այլ գործընկերների հեղինակության և ֆինանսական վիճակը ուսումնասիրելու, իրենց վրա վերցված ֆինանսական պարտավորությունները իրականում կատարելու իրենց կարողությունը որոշելու հարցում: Վերոնշյալի շնորհիվ էական չափով կանխվում է ռիսկային գործարքների կնքումը և պարտապանների կողմից պարտքի վճարումից խուսափումը: Մասնավոր դետեկտիվը կարող է պարզել, արդյո՞ք ակտիվները ֆիկտիվ են, կատարվել են արդյո՞ք ոչ պատշաճ վճարումներ կամ արդյո՞ք առկա են այլ խեղաթյուրումներ կամ կեղծիքներ: Բացի այդ, մասնավոր դետեկտիվ գործունեության սուբյեկտները իրականացնում են ծավալուն աշխատանք մտավոր սեփականության իրավունքների խախտումների փաստերի բացահայտման, հատկապես՝ ապրանքային նշանների ապօրինի օգտագործման հարցում և այլն:

Իրականում, մասնավոր դետեկտիվների ինստիտուտը առաջադիմական, կողմերի միջև զենքերի հավասարության ապահովման լավագույն միջոցներից է, որը կարող է գոյություն ունենալ նաև ՀՀ-ում: Գաղտնիք չէ, որ մեղադրող կողմը ապացույցներ հավաքագրելու համար հնարավորությունների ավելի լայն շրջանակ ունի: Հետևաբար, մասնավոր դետեկտիվների օրինականացումը հնարավորություն կընձեռնի ուժեղացնել պաշտպանական կողմի ապացույցների հավաքագրման կարողությունները:

Նշենք, որ ՀՀ-ում մասնավոր դետեկտիվների գործունեությունը պաշտոնապես չի ճանաչվել և, հետևաբար, չի գտել իր օրենսդրական կարգավորումը: Հավելենք, որ 2009 թվականին կազմվել է «Մասնավոր խուզարկուական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը մինչ օրս կյանքի չի կոչվել: Սակայն, ՀՀ-ում ներկայումս փաստացի առկա են մասնավոր

դետեկտիվներ, սակայն նրանց գործողությունները չեն կարգավորվում որևէ հատուկ դրույթով, ինչը բազմաթիվ կասկածներ է առաջացնում նրանց գործողությունների և տրամադրած տեղեկատվության օրինականության վերաբերյալ: Այդ մասին են վկայում նաև որոշ կայքերում տեղ գտած հայտարարությունները մասնավոր խուզարկուի ծառայությունների վերաբերյալ և օրինապահ մարմինների կողմից հարուցված քրեական գործերը:<sup>77</sup> Հետևաբար, ՀՀ-ում «Մասնավոր հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունումը կնպաստի նման տեսակի գործունեության իրականացման օրինականացմանը և դրա սուբյեկտներին սովերային դաշտից դուրս կհանի՝ բերելով նրանց պետական պատշաճ վերահսկողության դաշտ:

Հարկ է նշել, որ ՊԵԿ ոլորտում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման հարցը բարձրաձայնել էր նաև ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստի ժամանակ խորհրդրին կից գործող անկախ փորձագիտական հանձնախմբի կողմից, և ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը հանձնարարական էր ներկայացրել ՊԵԿ-ին վեցամսյա ժամկետում՝ նշյալ ինստիտուտի ՀՀ-ում ներդրման նպատակահարմարության վերաբերյալ:

Այս հարցի շուրջ **միջազգային փորձի վերլուծությունից** պարզ է դառնում, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Կանադան, Հնդկաստանը, Իսրայելը, Ճապոնիան, Նորվեգիան, Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան, Մեքսիկան, Ռուսաստանը և աշխարհի շատ այլ երկրներում մասնավոր դետեկտիվների ինստիտուտը ճանաչված է պետական մակարդակով: 1925թ.-ին հիմնադրվել է Դետեկտիվների համաշխարհային ասոցիացիան, որը հեղինակավոր միջազգային կազմակերպություն է և համախմբում է ներկայումս մասնավոր հետախուզական և անվտանգության մարմինների ավելի քան հազար լավագույն մասնագետների ամբողջ աշխարհի ավելի քան 60 երկրներից:

ԱՄՆ-ում, մասնավոր անվտանգության ծառայությունների բյուջեն 50%-ով գերազանցում է երկրի ոստիկանության բոլոր մարմինների բյուջեն՝ միասին վերցրած, և հաշվարկվում է, ըստ տարբեր գնահատականների, 1-ից 2 միլիոն մարդ: Օրինակ՝ Իլլինոյիս նահանգում, վերապատրաստման դասընթացները հնարավորություն են տալիս մասնագիտանալ 6 ոլորտում, որոնցից մեկը՝ բիզնեսն է:<sup>78</sup> Մի շարք հանրահայտ մասնավոր հետաքննությունների ծառայություն մատուցող կազմակերպությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջիններս մատուցում են կորպորատիվ/բիզնես հետաքննություններ, որը կարող է ներառյալ ընդհուպ մինչև է աշխատակցի հետաքննություննից մինչև առավել բարդ կոռուպցիոն սխեմաների վերհանում:<sup>79</sup> Անգլիայում, օրինակ, մասնավոր դետեկտիվ և անվտանգության

<sup>77</sup> <http://ankakh.com/article/?id=33800/verb-tsankanvom-yes-imanal-irakanvothyvone>

<sup>78</sup> <http://privateinvestigatoredu.org/illinois/>

<sup>79</sup> <https://www.pinkerton.com/investigations/>

ընկերությունների աշխատակիցների թիվը երկու անգամ գերազանցում է ոստիկանների թվին: Իսրայելում, որն ունի ընդամենը շուրջ 5 միլիոն բնակչություն, առկա են ավելի քան 2 հազար դետեկտիվ և անվտանգության ընկերություն: Չինաստանում, օրինակ, մասնավոր դետեկտիվների ծառայությունները լայն տարածում ունեն, և վերջիններիս ծառայությունները նեոարվում են նաև հետաքննություն կոռուպցիայի վերաբերյալ, որը պատվիրակվում է Չինաստանում գտնվող բազմազգի կորպորացիաների կողմից:<sup>80</sup>

Հաշվի առնելով ՀՀ-ում նախաքննության իրականացման առանձնահատկությունները և բնույթը՝ առավել նպատակահարմար ենք գտնում քննարկել ՀՀ օրենսդրական համակարգին առավել մոտ կանգնած Ռուսաստանի և Ուկրաինայի իրավակարգավորումները մասնավոր դետեկտիվների վերաբերյալ: Այսպես, «Մասնավոր դետեկտիվ և անվտանգության գործունեության մասին» ՌԴ օրենքի նախագիծն<sup>81</sup> ընդունվել է դեռևս 1992 թվականին, իսկ 2017թ. ապրիլի 13-ին Ուկրաինայի խորհրդարանն ընդունել է «Անձնական դետեկտիվի (հետաքննողի) գործունեության մասին» օրենքը, որը սահմանում է մասնավոր դետեկտիվների աշխատանքը կարգավորող իրավական դաշտը և սկզբունքները, թվարկում է մասնավոր դետեկտիվի մասնագետ լինելու որակավորման համար անհրաժեշտ պահանջները, կարգավորում է մասնավոր դետեկտիվի պրակտիկայի կազմակերպումը և իրականացումը և բացահայտում է մասնավոր դետեկտիվների գործողությունները, իրավունքներն ու պարտականությունները: Հարկ է հավելել, որ Ուկրաինայի նախագահը վետո էր կիրառել վերոնշյալ օրենքի նկատմամբ 2017թ. հունիսի 6-ին և իր դիտողություններով և առաջարկություններով վերադարձրել էր երկրի խորհրդարանին: Դրանց համաձայն՝ օրենքի մի շարք դրոյթներ հակասում էին Ուկրաինայի օրենսդրական ակտերին: Ուկրաինայի խորհրդարանը ներկայացրել է եզրակացություն՝ Նախագահի դիտարկումների վերաբերյալ՝ դրանց հետ համաձայնվելով մասնակիորեն:<sup>82</sup>

Թե՛ Ռուսաստանի, թե՛ Ուկրաինայի իրավակարգավորումներով սահմանվում է, որ *անհատը պարտավոր է ունենալ իրավաբանական կրթություն որպես մասնավոր դետեկտիվ աշխատելու համար և ավարտել համապատասխան մասնավոր դետեկտիվների վերապատրաստման ծրագիրը կամ ունենալ իրավապահ մարմիններում առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ և ձեռք բերել մասնավոր դետեկտիվ գործունեության իրականացման լիցենզիա*: Անձնական դետեկտիվների գործունեության լիցենզավորման և վերահսկման մարմինը ՌԴ ներքին գործերի հարցերով զբաղվող համապատասխան ստորաբաժանումն է և

<sup>80</sup>[http://www.chinadaily.com.cn/china/2015-06/12/content\\_20979772.htm](http://www.chinadaily.com.cn/china/2015-06/12/content_20979772.htm)

<sup>81</sup>«Մասնավոր դետեկտիվ և անվտանգության գործունեության մասին» ՌԴ N 2487-1 օրենք, ընդունված 11.03.1992:

<sup>82</sup><http://www.cms-lawnow.com/ealerts/2017/06/president-vetoes-the-law-on-private-detective-activity-in-ukraine>

Ուկրաինայի ազգային ոստիկանությունն է: Սահմանում են նաև մասնավոր դետեկտիվների կողմից տրամադրվող հետևյալ գործողությունների ցանկը.

- Հավաքագրել և հետաքննել դատավարության համար պահանջվող տեղեկատվությունը՝ դատավարության կողմի հետ կնքած պայմանագրի հիման վրա:
- Վերլուծել շուկան, փնտրել և հավաքել գործարար բնույթի տեղեկատվությունը բաց տվյալների աղբյուրներից և իրականացնել գնահատումներ պոտենցիալ բիզնես գործընկերների ֆինանսական վճարունակության, ակտիվների և արժանահավատության վերաբերյալ:
- Պարզաբանել կենսագրական տեղեկությունները և անհատին վերաբերող այլ տեղեկություններ (իրենց գրավոր համաձայնությամբ), որոնց հետ կնքվում է աշխատանքային կամ ցանկացած այլ պայմանագիր վերջիններիս գործարար կապերը բացահայտելու նպատակով, այդ թվում՝ հաճախորդի՝ Ուկրաինայում և արտերկրում գտնվող մրցակիցների հետ:
- Որոնել անհետ կորած անձանց, պարզել նրանց անհետացման պատճառները և հանգամանքները, որոնք ընտանեկան կամ ընկերական կապերը կորցրած անձանց:
- Որոնել անհետ կորած գույքը և կենդանիներին (և գողության, և՛ կորստի դեպքում):
- Միջոցներ ձեռնարկել հաճախորդի օրինական իրավունքների և շահերի վերաբերյալ կորստի ենթարկված (բացակայող) տեղեկությունների վերարտադրման համար:
- Որոնել և հավաքել տվյալներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաճախորդի համար դիմելու դատարան կամ իրավապահ մարմիններին՝ պաշտպանելու իր իրավունքները և շահերը:
- Հայտնաբերել ապօրինի (չթույլատրված) տեղեկատվության հավաքագրումը, որը վերաբերում է հաճախորդի առևտրային գաղտնիքներին՝ հետագայում օգտագործելու կամ բացահայտելու նպատակով, ինչպես նաև հայտնաբերել փաստեր ֆիզիկական անձանց մասին գաղտնի տեղեկատվության ապօրինի (չթույլատրված) հավաքագրման վերաբերյալ:
- Փնտրել, բացահայտել և գրանցել այն դեպքերը, երբ հաճախորդին պատկանող մտավոր սեփականության իրավունքները օգտագործվում են ապօրինի կերպով, ինչպես նաև՝ անբարեխիղճ մրցակցության դեպքերը:
- Որոնել պարտապաններին և այն անձանց, որոնք չեն կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները:
- Պաշտպանել հաճախորդին պատկանող սահմանափակ տեղեկատվությունը (առևտրային և ծառայողական գաղտնիքներ): Որպես առևտրային գաղտնիք կարող է հանդես գալ

տեխնիկական, կազմակերպական, առևտրային, արդյունաբերական և այլ բնույթի ցանկացած տեղեկատվություն, որի գաղտնիությունը կայանում է նրանում, որ այն ամբողջությամբ կամ իր բաղադրիչների որոշակի ձևով և դրանց ամբողջությամբ հայտնի չէ և հեշտությամբ մատչելի չէ երրորդ անձանց, ներկայացնում է առևտրային արժեք, և տեղեկատվությունը օրինական կերպով վերահսկող անձը ողջամիտ միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման ուղղությամբ, բացառությամբ այն տեղեկատվության, որը չի կարող որակվել որպես առևտրային գաղտնիք: Ծառայողական գաղտնիք են համարվում նյութերը, փաստաթղթերը և այլ տեղեկությունները, որոնք անձն օգտագործում է իր ծառայողական պարտականությունների իրականացման ընթացքում և կապակցությամբ, որոնք արգելվում է հրապարակել ցանկացած ձևով: Նման չափանիշներով տարբերակում են բժշկական, փաստաբանական, նոտարական, ապահովագրական, բանկային և որոշ այլ տեսակի գաղտնիքներ:

Օրենքի համաձայն, մասնավոր դետեկտիվներին արգելվում են, մասնավորապես.

- Հավաքագրել տվյալներ անձի անձնական կյանքի և քաղաքական կամ կրոնական հայացքների վերաբերյալ՝ առանց նրանց գրավոր համաձայնության:
- Հավաքագրել տեղեկատվություն պետական մարմինների վերաբերյալ, որը պարունակում է պետական գաղտնիք:
- Իրականացնել այնպիսի օպերատիվ-հետախուզական գործողություններ, որոնք գտնվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների բացառիկ իրավասության ներքո:<sup>83</sup>

Մասնավորապես, հետևյալ հարցերը և ռիսկերն են առաջանում մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման ժամանակ.

#### **1. Մասնավոր դետեկտիվների և պետական իրավապահ մարմինների գործառույթների հստակ տարբերակման հարցը**

Վերոնշյալ ռիսկը պայմանավորված է նրանով, որ մասնավոր դետեկտիվները չիրականացնեն այնպիսի օպերատիվ-հետախուզական գործողություններ, որոնք գտնվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների բացառիկ իրավասության ներքո:

Այս համատեքստում անհրաժեշտ է քննարկել երկու ենթահարց

- Արդյո՞ք մասնավոր դետեկտիվ գործունեության սուբյեկտներին բաց տարածքում, հանրային վայրերում և տրանսպորտում արտաքին դիտում իրականացնելու իրավասության տրամադրումն արդյո՞ք հակասում է օրենքին այն հիմքով, որ վերջիններս

<sup>83</sup><http://www.cms-lawnow.com/ealerts/2017/04/private-detective-activity-to-be-legalized-in-ukraine>

հանդիսանում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի բացառիկ իրավասություն:

- Արդյո՞ք մասնավոր դետեկտիվներին որոշակի օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման հարցը հակասում է օրենքի այն դրույթներին, որոնցով սահմանված է օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման լիազորությամբ օժտված անձանց սպառնիչ ցանկ:

Առաջին ենթահարցի վերաբերյալ գտնում ենք, որ բաց տարածքում, հանրային վայրերում և տրանսպորտում արտաքին դիտման իրականացումը՝ որպես օպերատիվ-հետախուզական գործունեության բացառիկ լիազորություն՝ չի համարվում անվիճելի հետևյալ պատճառաբանությամբ. Եթե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ վերջինս որակվում է որպես օպերատիվ-հետախուզական գործունեության բացառիկ լիազորություն, այդ հիմքով անհրաժեշտ կլինի արգելել փողոցներում և տներում արտաքին դիտման ցանկացած տեսախցիկների տեղադրումը:

**Երկրորդ ենթահարցի** վերաբերյալ հարկ է նշել, որ, համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ *օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝ ոստիկանությունը, ոստանկան ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով և քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում:* Հարկ է նշել, որ նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանն անվճար կամ պայմանագրի հիման վրա վճարովի հիմունքներով կարող են ներգրավվել չափահաս և գործունակ անձինք՝ պահպանելով համագործակցության գաղտնիությունը: Համագործակցությունը հնարավոր է այդ անձանց համաձայնությամբ: Այդ անձինք պարտավոր են չհրապարակել համագործակցության առնչությամբ իրենց հայտնի դարձած տեղեկությունները, ինչպես նաև ակնհայտ կեղծ տեղեկություններ չտրամադրել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են գաղտնի պահել իրենց մոտ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց անհատական տվյալները: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց հավաքագրման, ներդրման և վճարման կարգը սահմանվում է այդ մարմինների նորմատիվ իրավական ակտերով:*

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորություն ունեցող անձանց ցանկի սպառիչ լինելը անվիճելի չէ, և վերոնշյալ իրավական նորմը հնարավորություն է ընձեռնում ներգրավել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը նաև մասնավոր դետեկտիվներին:

2. Մասնավոր դետեկտիվների կողմից պայմանագրի հիման վրա ձեռք բերված տեղեկատվության որպես ապացույց դատարանում թույլատրելիության հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ սովյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից:* Հետևաբար, հարց է առաջանում, արդյո՞ք մասնավոր դետեկտիվը համարվում է պատշաճ սուբյեկտ, թե՛ ոչ: Գործող օրենսդրությամբ քրեական դատավարության կողմերն իրավունք ունեն ապացույցներ ձեռք բերել, և որևէ արգելք սահմանված չէ, թե ի՞նչ եղանակով պետք է ապացույցները հավաքագրվեն, մասնավորապես՝ ինքնուրույն, թե պայմանագրի հիման վրա մասնավոր դետեկտիվի կողմից: Հատկապես այն դեպքերում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը գտնվում են կալանքի տակ, նրանք չեն կարող անձամբ իրացնել ապացույցների հավաքագրման իրենց իրավունքը: Իհարկե, նշյալ անձինք պաշտպանի իրավունք ունեն, սակայն, չի կարելի բացառել այն դեպքերը, երբ փաստաբանը ֆիզիկապես չի կարող կարճ ժամանակահատվածում ինքնուրույն իրականացնել կասկածյալի, մեղադրյալի, դատապարտյալի, արդարացվածի և այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ողջ շարքը: Հետևաբար, չի կարելի վերոնշյալ սուբյեկտներին զրկել պայմանագրային հիմունքներով մասնավոր դետեկտիվների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես դա արվում է շատ երկրներում: Ավելին, տուժողի կողմից ինքնուրույն քրեական հետապնդում իրականացնելու լիազորությունը ևս ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում: Սակայն, գործնականում այն ի կատար ածվել չի կարող օրենսդրական բավարար կարգավորումների բացակայության պայմաններում և հանդիսանում է բացառապես տեսական մակարդակով քննարկվող առարկա:

Ուստի գտնում ենք, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և նրանց պաշտոնատար անձանցից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից ձեռք բերված ցանկացած փաստաթղթերի և տեղեկատվության դատավարական կարգավիճակը չի փոխվի և նրանք կճանաչվեն որպես թույլատրելի ապացույց՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք դատավարության կողմը ձեռք է բերել ինքնուրույն, թե դրանք առաքվել են փոստով կամ մասնավոր



**դետեկտիվի կողմից: Այնուամենայնիվ, այն պարագայում, երբ ՀՀ-ում ներդրվի մասնավոր դետեկտիվների ինստիտուտը, համապատասխան օրենսդրական փոփոխությունները կհանգեցնեն վերջինիս որպես պատշաճ սուբյեկտ լիարժեք դիտարկելուն:**

Ավելին, այդ ինստիտուտի գոյության պայմաններում կարող է քննարկվել նույնիսկ նախաքննության փուլի սահմանափակման հնարավորությունը, երբ գործով ապացույցներ ձեռք բերելու ռեսուրսները կողմերի միջև կլինեն հավասար, և ներկայիս նախաքննական ապացուցման բեռը կտեղափոխվի դատական քննություն, որպիսի մոտեցումը որդեգրված է առաջադեմ մի շարք երկրների իրավական մոդելներում: Նոր քրեական դատավարության նախագիծն այս առումով թեև առաջադիմական քայլեր է անում՝ փորձելով նախաքննությունը թեթևացնել՝ ապացուցման գործընթացի շեշտը դնելով միայն դատաքննության վրա, սակայն իրականում խնդիրն ամբողջությամբ լուծված չէ: Քրեական վարույթի մասնավոր մասնակիցներն էլ օժտված են ապացուցողական զանգվածի ձևավորմանը մասնակցելու առումով սահմանափակ լիազորություններով, ինչպիսին է օրինակ՝ մասնագետի կարծիք ստանալը: Սակայն, վերջինս չի կարող լիարժեքորեն հակակշռել դատավարության ընթացքում ապացույցներ ձեռք բերելու քրեական վարույթի հանրային մասնակիցների հնարավորությունները, ինչը օրինակ կկարողանար ապահովվել մասնավոր դետեկտիվների ինստիտուտը, որի հնարավոր ներդրումը պահանջում է ինստիտուցիոնալ, համակարգային փոփոխություններ քրեադատավարական օրենքում և ծանրակշիռ (երկարատև գիտագործնական) ուսումնասիրություններ:

## D. Կոոպերատիվների կողմից բիզնեսի իրականացում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>84</sup> 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ»: Վերոնշյալ օրենսգրքի 117-121 հոդվածները պարունակում են ընդհանուր կարգավորումներ կոոպերատիվներին վերաբերյալ, սակայն կոոպերատիվների առանձին ձևերին հատուկ առանձնահատկությունները սահմանվում են «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքով և «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքով:

### o Կոոպերատիվներին վերաբերող օրենսդրական դաշտի վերանայում

Կոոպերատիվներին առնչվող ՀՀ օրենքները, ընդհանուր առմամբ, չեն համապատասխանում Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002 թվականին ընդունված թիվ 193 առաջարկությանը և Կոոպերատիվների միջազգային դաշնության սահմանած դրույթներին:<sup>85</sup> Հիմնական խնդիրներից մեկն այն է, որ կոոպերատիվների գործունեության բազմաթիվ օրենսդրական էլեմենտներ պետք է իրենց կարգավորումը ստանան կոոպերատիվների կանոնադրություններում, քանի որ ՀՀ գործող օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Կոնկրետ Հայաստանի պարագայում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոոպերատիվների հիմնական մասը, թե՛ արտադրական, թե՛ սպառողական ընդունել են «օրինակելի» կանոնադրություն՝ առանց քննարկելու կամ որոշելու, թե արդյոք տվյալ նմուշն առհասարակ պետք է իրենց կոոպերատիվին:


Մասնավորապես, «Սպառողական կոոպերացիաների մասին» ՀՀ օրենքն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ վերջինս բաղկացած է ընդամենը մի քանի իրավանորմից: Ինչ վերաբերվում է վերջերս ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքին, ապա այն համարվում է միջազգային ստանդարտներին և կոոպերատիվների միջազգային սկզբունքներին համահունչ օրենք, սակայն առկա են խնդիրներ հարկային ոլորտում:

<sup>84</sup> ՀՕ-239, ընդունված է 05.05.1998թ., ուժի մեջ է՝ 01.01.1999թ.):

<sup>85</sup> [http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100\\_ILO\\_CODE:R193](http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R193)

Բացի այդ, «Սպառողական կոոպերացիաների մասին» ՀՀ օրենքը չի տալիս սպառողական կոոպերատիվների կոնկրետ ռեժիմ և համապատասխանում սպառողական կոոպերատիվների մասին միջազգայնորեն ընդունված պատկերացումներին և սկզբունքներին, այլ միայն որակում է սպառողական կոոպերատիվները որպես ոչ առևտրային կազմակերպություն, այլ միայն նախատեսում է նվազագույնը 5 անդամ ունենալու պահանջ: Առհասարակ, սպառողական կոոպերատիվները մատակարարման կոոպերատիվների յուրահատուկ տեսակ են հանդիսանում, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսների կողմից գնումներ կատարելու գործընթացում խնայողությունների ապահովումն է: Հետևաբար, հարց է առաջանում, այն դեպքում երբ մենք ունենք «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենք, արդյո՞ք առկա է անհրաժեշտություն ունենալ նաև համանման՝ սպառողական կոոպերացիաները կարգավորող առանձին օրենք: Գտնում ենք, որ անհրաժեշտություն առկա չէ, քանի որ ըստ գնահատման՝ 2013թ. տարեվերջի դրությամբ Հայաստանում գրանցված են 127 ընդհանուր բնույթի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ, 22 կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվներ, 40 ռոռգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ և 67 արտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ, որն արտահայտված է Գծապատկեր 3- ում:

**Գծապատկեր 3: Սպառողական կոոպերատիվների թիվը ըստ գործունեության ոլորտի<sup>86</sup>**



<sup>86</sup> «Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների ուղեցույց Հայաստանի համար» ուսումնասիրություն

Վերոնշյալ գծապատկերի վերլուծությունից պարզ է դառնում, որ սպառողական կոոպերատիվների 80 տոկոսը գյուղատնտեսական կոոպերատիվներն են, հետևաբար կարգավորվում են «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքով:

Բացի այդ, միջազգային փորձի վերլուծությունն այս հարցի շուրջ ևս ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ունենալ մեկ օրենք բոլոր տեսակների կոոպերատիվների համար: Մասնավորապես, դրա մասին են վկայում Աշխատանքի միջազգային կազմակերպության ուղեցույցները, որոնցով առաջարկվում է մեկ օրենքում հստակ դրույթներ նախատեսել բոլոր տեսակների կոոպերատիվների համար:<sup>87</sup> Աշխատանքի միջազգային կազմակերպության ուղեցույցների համաձայն՝ մեկ օրենքին հարելու մոտեցումը, ի թիվս այլ առավելությունների, վերացնում է բյուրոկրատիան և կանխարգելում է կոոպերատիվ համակարգի մասնատումը, ինչն անխուսափելիորեն թուլացնում է իր ինքնամշտադիտարկման և լոբբիստական կարողությունները:<sup>88</sup> ԱՊՀ երկրներից շատերը որդեգրել են այդ ուղղությունը՝ Ղրղզստան, Տաջիկստան, Ադրբեջան, Ուկրաինա:

Ուստի գտնում ենք, որ **առկա է ՀՀ-ում՝ կոոպերատիվների վերաբերյալ մեկ միասնական օրենսդրական ակտ և կոոպերատիվների առանձին տեսակների մասով տիպային կանոնադրություններ ունենալու անհրաժեշտություն:**

- **Սպառողական կոոպերատիվներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորության օրենսդրական ամրագրում**

Բացի վերոնշյալից, որպես միջանկյալ խնդիր շահառուների կողմից բարձրաձայնվում է այն հարցը, որ օրենքով հստակորեն չի կարգավորվում, արդյո՞ք սպառողական կոոպերատիվները կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Այսպես, «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *ՀՀ-ում սպառողական կոոպերատիվը (...) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է: Սպառողական կոոպերատիվի գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով: Սպառողական կոոպերատիվը, իր նպատակներից ելնելով, կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեություն:*

<sup>87</sup> Henry, H. (2012), Guidelines for Cooperative Legislation, Third Revised Edition, ILO (International Labour Organization), Geneva.

<sup>88</sup> Lerman, Z. 2013. “Cooperative Development in Central Asia,” FAO Regional Office for Europe and Central Asia Policy Studies on Rural Transition, no. 2013-14, (<http://www.fao.org/docrep/018/ar425e/ar425e.pdf>).

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, եթե դա նախատեսված է օրենքով: Ոչ առևտրային կազմակերպությունը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ դրա մասնակից: Ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությանը վերաբերող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտից կամ իրավահարաբերության էությունից:*

Հողվածը վերլուծության ենթարկելու արդյունքում ստացվում է, որ ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն միայն երկու պարտադիր պայմանների միաժամանակ առկայության դեպքում՝

- **եթե դա համապատասխանում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին և**
- **եթե դա նախատեսված է օրենքով:**

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ 2017 թվականի դեկտեմբերի 17-ին ՊԵԿ-ը ներկայացրել է պաշտոնական պարզաբանում «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը, որտեղ նշել է. «*Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքով և սպառողական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով վերջիններիս համար ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արգելք սահմանված չէ, հայտնում ենք, որ սպառողական կոոպերատիվներն իրենց նպատակներից (այն է՝ անդամների մասնակիցների կարիքներն ապրանքներով ու ծառայություններով բավարարելը, նրանց շահերը ներկայացնելը և պաշտպանելը) ելնելով կարող են իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն»:*

Հետևաբար, գտնում ենք, որ առկա է անհրաժեշտություն օրենքի մակարդակով ամրագրել վերջիններիս կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, որպեսզի կոոպերատիվները չհայտնվեն խոցելի և հայեցողական իրավիճակում: Նման մոտեցում է որդեգրված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Սա էապես կնպաստի սպառողական կոոպերատիվների գործունեության բարելավմանը, հնարավորություն կստեղծի ծառայություններ մատուցել ոչ անդամներին, կատարել համատեղ վաճառք, ձևավորել լրացուցիչ եկամուտներ: Նշենք, որ ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և

գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության 44 կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N1476-Ն որոշմամբ սահմանված ռազմավարության շրջանակներում գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացման համատեքստում միջոցառումները ևս նպատակաուղղվում են գյուղատնտեսությունում կոոպերացիայի տարբեր ձևերի խթանմանը և խնդիրների շարքում առանձնանում է կոոպերացիայի զարգացումը:<sup>89</sup> Բացի այդ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ սպառողական կոոպերատիվները ամբողջ աշխարհում դիտարկվում են առևտրային կառույցներ, որովհետև անտրամաբանական է նրանց ոչ առևտրային դիտարկելը: Հետևաբար, սպառողական կոոպերատիվներին ձեռնարկատիրական գործունեության իրավասություն շնորհելը կրիսիս վերոնշյալ ուղղության կատարումից:

○ **Գյուղատնտեսական կոոպերատիվներին վերաբերող հարկային դաշտի պարզեցում և նոր հարկային արտոնությունների տրամադրում**

Ինչպես վերը նշվեց, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքն անկասկած համարվում է միջազգային ստանդարտներին և կոոպերատիվների միջազգային սկզբունքներին համահունչ օրենք: Վերոնշյալ օրենքի նախագծի հիմնավորմամբ սահմանված էր, որ *գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝ կոոպերատիվների և գյուղատնտեսական մթերքի (հումքի) արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների (գյուղացիական տնտեսությունների) հարկման և պետական աջակցության այլ պայմանների համահավասարեցումը:*

Սակայն, օրենքի ընդունումից հետո հարկային դաշտում մի շարք հարցեր դեռևս բաց են մնում, որի հետևանքով գյուղատնտեսական կոոպերատիվները նախընտրում են կասեցնել իրենց հարկային գործունեությունը և չեն կարողանում իրացնել օրենքով իրենց ընձեռված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

**Միջազգային փորձը** սույն հարցի վերաբերյալ հետևյալն է. ՏՀԶԿ համաձայն՝ *կոոպերատիվների համար արդյունավետ հարկային քաղաքականությունները կարող են խթանել նոր կոոպերատիվների ստեղծմանը՝ դրանով իսկ կրճատելով հարկերից խուսափելու դեպքերը, և նպաստել կոոպերատիվների և այլ առևտրային կազմակերպությունների նկատմամբ հավասար վերաբերմունքի պայմանների ստեղծմանը*: Հաշվի առնելով գյուղատնտեսական կոոպերատիվների հատուկ բնույթը՝ *շատ երկրներում կոոպերատիվների համար ավելի*

<sup>89</sup>[http://www.arspiu.com/fileadmin/user\\_upload/photogalleries/Coop\\_Study/Report\\_arm.pdf](http://www.arspiu.com/fileadmin/user_upload/photogalleries/Coop_Study/Report_arm.pdf)

*շահավետ հարկային ռեժիմ է սահմանվում, քանի որ դրանք համարվում են հատուկ պաշտպանություն ստացող մարմիններ:*

### **Ավելացված արժեքի հարկ**

ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 5-րդ մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ ԱԱՀ վճարող հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպությունները ԱԱՀ վճարողներ են համարվում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության՝ 58.35 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, իսկ մինչև շեմը գերազանցելը՝ շրջանառության հարկ վճարող չեն հանդիսանում՝ բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների:

Ինչ վերաբերվում է դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքների մատակարարմանը, աշխատանքի կատարմանը և (կամ) ծառայության մատուցմանը, ապա վերջինս կարող է ազատվել ԱԱՀ-ից, եթե նշված ծրագրերն արժանացել են ՀՀ կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը:<sup>90</sup>

Փաստացի, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հավելյալ կարգավորումներ, որոնց համաձայն կոռպորատիվների և նրա անդամների միջև գործարքները ԱԱՀ-ով չեն հարկվի: Բացի այդ, ԱԱՀ-ի նշյալ շեմը նույնն է և մեկ գյուղատնտեսի համար, և մեկ ամբողջ գյուղատնտեսական կոռպորատիվի համար, ինչը ապաքաջալերում է գյուղատնտեսներին միանալ կոռպորատիվներին:

**Միջազգային փորձի** վերլուծությունը ցույց է տալիս, որ կոռպորատիվների հարկման վերաբերյալ արևմտյան մոտեցումն ուղղորդվում է հետևյալ տեսակետով. հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռպորատիվի անդամները ներգրավված են որոշում ընդունելու գործընթացում, ինչպես նաև՝ կոռպորատիվների և դրանց անդամների միջև գործարքների հատուկ բնույթը՝ կոռպորատիվները գործում են ի դեմս իրենց անդամների և հանդես են գալիս որպես նրանց գործակալ: Այս տեսակետը ենթադրում է, որ կոռպորատիվների և նրա անդամների միջև գործարքները պետք է ազատված լինեն ԱԱՀ-ից: Հակառակ դեպքում, եթե գյուղատնտեսական կոռպորատիվները չկարողանան այն նույն հարկային արտոնություններից, որոնցից օգտվում են փոքրամասշտաբ արտադրողները, վերջիններս անվերապահորեն կխուսափեն ստեղծել կոռպորատիվներ կամ միանալ գործողներին: Այս սկզբունքը վերջերս ընդունվել է նախկին ԽՍՀՄ մի շարք երկրներում՝ Վրաստան, Ղազախստան և Մոլդովա, երբ գյուղատնտեսական կոռպորատիվները իրենց անդամների հետ գործարք կնքելիս ազատվում են

<sup>90</sup> ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մաս և ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշում:

ԱԱՀ-ի վճարումից: Ավելին, Վրաստանում կառավարությունը կարևոր քայլեր է ձեռնարկել կոոպերատիվներին աջակցելու ուղղությամբ, որոնք ներառում են նաև հարկային արտոնություններ, որոնք սահմանված են «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Վրաստանի օրենքով և «Գյուղատնտեսական կոոպերատիվների կարգավիճակ ստանալու և դադարեցնելու մասին» կառավարության որոշմամբ սահմանված է, որ ամբողջ առաջնային գյուղատնտեսական արտադրանքը ազատվում է ԱԱՀ-ից՝ նախքան դրանց վերամշակումը: Ապրանքի վերամշակման և եզակի կողի փոփոխության սահմանումը կարելի է գտնել Վրաստանի հարկային օրենսգրքում:<sup>91</sup> Ուկրաինայում գյուղատնտեսական կոոպերատիվներին թույլատրվում է կուտակել «գյուղատնտեսական ԱԱՀ», որը կարող է կրկին ներդրվել կոոպերատիվի մեջ:

### Շահութահարկ

ՀՀ-ում շահութահարկի վճարումից արտոնությունը տարածվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվողների վրա՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով: Օրենքի իմաստով գյուղատնտեսական արտադրանք է համարվում հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում վերջնական կամ միջանկյալ սպառման համար կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխված արտադրանքը: Ինչ վերաբերվում է վերջիններինս կողմից այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտներին, ապա դրանց վրա արտոնությունը տարածվում է այն դեպքում, եթե դրանց տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը: Հարկ է նշել, որ վերոնշյալ արտոնությունը սահմանված է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:<sup>92</sup>

Սույն նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հարկային արտոնություններ սահմանված են միայն առաջնային արտադրության համար, հետևաբար չկա հստակ պարզաբանում առ այն, արդյո՞ք գյուղատնտեսական կոոպերատիվի կողմից իր անդամների կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը կոնսուլտանտի որպես վերավաճառք և այլևս չի դիտարկվի որպես առաջնային արտադրություն, թե՛ ոչ:

Առհասարակ, կոոպերատիվների կողմից իրականացված գործարքների արդյունքում տարբերակվում է.

- **շահույթ**, որն առաջանում է կոոպերատիվի անդամ չհանդիսացող երրորդ կողմերի հետ կնքված գործարքներից և, համապատասխան հարկումից հետո, փոխանցվում է կոոպերատիվի անբաժանելի պահուստային ֆոնդին,

<sup>91</sup>Law of Georgia on Agricultural Cooperatives, 2013 <https://matsne.gov.ge/en/document/download/1972742/0/en/pdf#>

<sup>92</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, Հոդված 126:



- **ավելցուկ**, որն առաջանում է կոոպերատիվի անդամների հետ կնքված գործարքներից, որի մի մասը բաշխվում է անբաժանելի պահուստային ֆոնդին՝ որպես հատկացում, իսկ մյուս մասը բաշխվում է անդամների միջև՝ որպես կորպորատիվ փոխհատուցում՝ ըստ իրենց փայի համամասնության:

ՀՀ-ում շահույթի մասով առկա են կարգավորումներ, որի համաձայն շահույթը ենթակա է հարկման 20 տոկոս շահութահարկով, սակայն չի կարգավորվում այն հարցը, արդյո՞ք կոոպերատիվ ավելցուկից անբաժանելի պահուստային ֆոնդին տրված հատկացումները և անդամներին տրված կոոպերատիվ փոխհատուցումները ենթակա են հարկման շահութահարկով, թե՛ ոչ, հետևաբար առկա է վերոնշյալը հստակեցնելու անհրաժեշտություն:<sup>93</sup> Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հավելյալ կարգավորումներ, որոնց համաձայն կոոպերատիվների և նրա անդամների միջև գործարքները շահութահարկով չեն հարկվի:

**Միջազգային փորձի** վերլուծության արդյունքում ընդհանուր կարգավորումները հետևյալն են. մի շարք երկրներում նախատեսված են շահութահարկից արտոնությունների որոշակի շեմեր, սակայն՝ անժամկետ: Մասնավորապես, Իսպանիայում կոոպերատիվները օգտվում են առավել շահավետ հարկային ռեժիմից, քանի որ վերջիններս գտնվում են հատուկ պաշտպանության ներքո, որի արդյունքում վճարում են շահութահարկի միայն 50 տոկոսը:<sup>94</sup> Ղազախստանի հարկային օրենսգիրքը որևէ հատուկ հարկային արտոնություն չի նախատեսում կոոպերատիվների համար, սակայն այն գյուղատնտեսական կոոպերատիվներին այլ գյուղատնտեսական արտադրողների հետ նույն կարգում է դասում, ինչի արդյունքում գյուղատնտեսական կոոպերատիվները վճարում են շահութահարկի դրույքաչափի ընդամենը 30%-ը:<sup>95</sup> Հարկ է նշել, որ թեև նշյալ որոշ երկրներում, ի տարբերություն ՀՀ-ի, նախատեսված են ոչ թե 0-ական դրույքաչափի արտոնություններ, այլ՝ ավելի բարձր, սակայն արտոնությունների կիրառման վերջնաժամկետ նախատեսված չէ:

Ինչ վերաբերվում է **կոոպերատիվների և նրա անդամների միջև կնքված գործարքների** հարկման առանձնահատկություններին առհասարակ, ապա վերջիններս պետք է ազատված լինեն նաև շահութահարկից, քանի որ կոոպերատիվները հանդիսանում են իրենց անդամների հարկային գործակալներ: Օրինակ, Ֆրանսիայի հարկային օրենսգրքով ամրագրված են շահութահարկի գծով հարկային արտոնություններ գյուղատնտեսական կոոպերատիվների

<sup>93</sup> «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված

<sup>94</sup> Law 20/1990, of December 19, on the Tax Regime of Cooperatives, Art. 7. The consideration of specially protected cooperatives will be awarded to the following numerous clausus entities, which will be able to enjoy, with the requisites indicated in this Law, the tax benefits established in articles 33 and 34: a) Cooperatives of Associated Work; b) Agrarian Cooperatives; c) Cooperatives of Community Land Exploitation; d) Cooperatives of the Sea; e) Cooperatives of Consumers and Users.

<sup>95</sup> Taxation of Cooperatives in Post-Soviet Countries, Chapter VI, David Sedik, FAO [http://www.fao.org/fileadmin/user\\_upload/Europe/documents/Publications/Compendium\\_ru/PI/Part4Tax\\_en.pdf](http://www.fao.org/fileadmin/user_upload/Europe/documents/Publications/Compendium_ru/PI/Part4Tax_en.pdf)

(sociétés coopératives agricoles) համար, որոնց համաձայն գյուղատնտեսական կոոպերատիվները և նրանց միությունները ազատված են շահութահարկից, բացառությամբ՝ կոոպերատիվի անդամ չհանդիսացող երրորդ անձանց հետ կնքված գործարքների դեպքում:<sup>96</sup>

Ինչ վերաբերվում է **կորպորատիվ ավելցուկից կոոպերատիվի անդամներին տրամադրված կորպորատիվ փոխհատուցումների** հարկման առանձնահատկություններին, ապա Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից մշակված «Կոոպերատիվ օրենսդրության ուղեցույց»-ի համաձայն՝ կոոպերատիվ ավելցուկից կորպորատիվ փոխհատուցումները ենթակա չեն հարկման շահութահարկով:<sup>97</sup>

Ինչ վերաբերվում է **կորպորատիվ ավելցուկից անբաժանելի պահուստային ֆոնդին ուղղված հասկացումների** հարկման առանձնահատկություններին, ապա վերջիններիս վերաբերյալ առկա չէ միասնական պրակտիկա: ՏՀԶԿ մի քանի երկրներում, օրինակ՝ ԱՄՆ, Նիդերլանդներ, տեղ գտած պրակտիկայի համաձայն՝ անբաժանելի պահուստային ֆոնդին հատկացումները ենթակա են հարկման կորպորատիվ հարկով, որը համապատասխանում է մեր շահութահարկին, մինչդեռ, օրինակ՝ Իտալիայում, գործող 9 տեսակի կոոպերատիվներից 3-ը՝ արտադրական, աշխատանքային և ծառայությունների կոոպերատիվները 70%-ով ազատված են շահութահարկից,<sup>98</sup> իսկ սոցիալական կոոպերատիվները կարող են ամբողջապես ազատվել շահութահարկից, եթե ամբողջապես համապատասխանեն օրենքի պահանջներին:

### **Գույքի հարկ**

ՀՀ-ում անշարժ գույքի հարկից ազատվում են՝ գյուղատնտեսական նշանակության հողերի՝ բազմամյա տնկարկների (խաղող, կորիզավոր պտուղ կամ հնդավոր պտուղ) հողատեսքերի վրա նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների յուրաքանչյուր տեսակի համար՝ ըստ ագրոտեխնիկական ցուցումների լրիվ պտղաբերության հասնելու տարին ներառյալ՝ դրանց տարածքը 0.1 հեկտար և ավելի լինելու դեպքում:<sup>99</sup> Անշարժ գույքի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են նաև գյուղատնտեսական գիտական կազմակերպությունները՝ ՀՀ կառավարության հաստատած ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական սորտափորձարկման նպատակներով:<sup>100</sup> Այլ արտոնություններ գյուղատնտեսական կոոպերատիվների կողմից անշարժ կամ շարժական գույքի հարկի մասով նախատեսված չեն:

<sup>96</sup> Article 207-1-2-3 of the General Code on Taxation

<sup>97</sup> Henry, H. (2012), Guidelines for Cooperative Legislation, Third Revised Edition, ILO (International Labour Organization), Geneva.

<sup>98</sup> Article 43 of Regional Law n. 5 of 2008

<sup>99</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 230, մաս 1, կետ 4:

<sup>100</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 230, մաս 2:

**Միջազգային փորձի** վերլուծությունը սույն հարցի վերաբերյալ հետևալն է. Ֆրանսիայում գյուղատնտեսական կոոպերատիվները նաև ազատված են ընկերության գույքահարկի վճարումից: Վրաստանում նախատեսված էր որոշակի ժամկետ (2018թ. հունվարի 1), և մինչև ժամկետի ավարտը գույքային հարկով չէր հարկվում գյուղատնտեսական կոոպերատիվի կողմից գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակներով օգտագործվող այն շարժական և անշարժ գույքը, որը հանդիսանում էր կոոպերատիվի սեփականությունը, ինչպես նաև այն շարժական գույքը, որը վարձակալությամբ, օրինակ՝ լիզինգով տրվել է կոոպերատիվին: Բացի այդ, կոոպերատիվին փոխանցված հողը (մինչև 5 հեկտար) ևս ազատվում է գույքի հարկից: Ղազախստանի հարկային օրենսգրքի համաձայն՝ գյուղատնտեսական կոոպերատիվները վճարում են գույքահարկի, հողի հարկի և պետական հողի վարձակալության վճարների ստանդարտ դրույքաչափերի ընդամենը 30%-ը:<sup>101</sup> Իսպանիայում կիրառվում է անշարժ գույքի հարկի 95% բնուսային քվոտա գյուղատնտեսական կոոպերատիվների սեփականությունը հանդիսացող և վերջինիս շահագործման տրված համայնքային հողերի նկատմամբ:

#### **Եկամտային հարկ և սոցիալական վճարներ**

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են արտոնություններ միայն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ֆիզիկական անձանց համար՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների մասով, որոնք համարվում են նվազեցվող եկամուտ<sup>102</sup>: Այսինքն, սույն արտոնությունը չի տարածվի գյուղատնտեսական կոոպերատիվի աշխատողների նկատմամբ: Ինչ վերաբերվում է փայաբաժիններին, ապա վերջիններս դիտվում են որպես պասիվ եկամուտ, հետևաբար ենթակա են հարկման եկամտային հարկով,<sup>103</sup> և որևէ արտոնություն նրանց նկատմամբ սահմանված չէ, հետևաբար առկա է օրենսդրական փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն՝ կոոպերատիվներին միանալու համար երաշխիքներ ստեղծելու նպատակով:

**Միջազգային փորձի** վերլուծությունը սույն հարցի վերաբերյալ ցույց է տալիս, որ շատ երկրներում փոքր գյուղատնտեսները ազատված են եկամտային հարկից կամ գործում են արտոնություններ: Ղազախստանի հարկային օրենսգրքի համաձայն՝ գյուղատնտեսական կոոպերատիվները վճարում են սոցիալական հարկի ստանդարտ դրույքաչափերի ընդամենը 30%-ը:<sup>104</sup> Վրաստանում եկամտային հարկով չի հարկվում կոոպերատիվի գործունեության շրջանակներում կոոպերատիվի անդամների կողմից ստացած շահաբաժինը: Մինչև օրենքով

<sup>101</sup> Taxation of Cooperatives in Post-Soviet Countries, Chapter VI, David Sedik, FAO [http://www.fao.org/fileadmin/user\\_upload/Europe/documents/Publications/Compendium\\_ru/P1/Part4Tax\\_en.pdf](http://www.fao.org/fileadmin/user_upload/Europe/documents/Publications/Compendium_ru/P1/Part4Tax_en.pdf)

<sup>102</sup> ՀՀ հարկային օրենսգրք, հոդված 148:

<sup>103</sup> ՀՀ հարկային օրենսգրք, 107-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին կետ:

<sup>104</sup> Taxation of Cooperatives in Post-Soviet Countries, Chapter VI, David Sedik, FAO

[http://www.fao.org/fileadmin/user\\_upload/Europe/documents/Publications/Compendium\\_ru/P1/Part4Tax\\_en.pdf](http://www.fao.org/fileadmin/user_upload/Europe/documents/Publications/Compendium_ru/P1/Part4Tax_en.pdf)

նախատեսված որոշակի ժամկետը (2014 թվականի հունվարի 1) գյուղատնտեսական առաջնային արտադրության մեջ ներառված անձանց աշխատավարձերն ազատված էին եկամտային հարկից, որը չի գերազանցում օրենքով նախատեսված որոշակի շեմը:<sup>105</sup>

---

<sup>105</sup> Pocket Tax Book, Georgia, [http://rs.ge/common/get\\_doc.aspx?id=8813](http://rs.ge/common/get_doc.aspx?id=8813)

## ՄԱՍ 2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Հարկային ոլորտ

1. Սահմանել եկամտի նվազագույն ողջամիտ շեմ, որի դեպքում այն ենթակա չի լինի հարկման եկամտային հարկով, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում է, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում:
2. Սահմանել եկամտային հարկի նվազագույն դրույքաչափը 10-13 տոկոս շրջակայքում և անցնել հարկման համամասնական ռեժիմի, ինչպես ԵՏՄ անդամ երկրներում է:
3. Շարունակել դիտել որպես շրջանառության հարկի օպտիմալ շեմ՝ նախկին 115 միլիոն ՀՀ դրամը մինչև մասնագիտական վերլուծություններով կապացուցվի, որ ՀՀ-ն անցել է անցումային ժամանակահատվածը, և սովորաբար շրջանառությունը վերացել է:
4. Շրջանառության հարկի շեմը նախատեսել 1%` 5%-ի փոխարեն:
5. Ամրագրել կայունությունը որպես ՀՀ հարկային համակարգի սկզբունք օրենսդրական մակարդակով բիզնես գործունեությունում կանխատեսելիության և որոշումների կայացման և պլանավորման որոշակիության ապահովման նպատակով:
6. Մեծացնել «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքի առարկա գործունեության տեսակների ցանկը:
7. Տրամադրել պաշտոնական պարզաբանում «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքով գործունեության որոշ տեսակները սահմանող խրթին ձևակերպումների վերաբերյալ:
8. Բացել «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքով գործունեության որոշ տեսակները ենթադասից էլ ցածր մակարդակով:
9. Տրամադրել Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «արտադրություն» եզրույթի սահմանումը:
10. Փոփոխություններ իրականացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի աշխատանքային ստաժին վերաբերող դրույթում և սահմանել, որ որպես ֆիզիկական անձ ինքնազբաղված անձանց կողմից իրականացված գործունեությունը ևս դիտարկվում է որպես աշխատանքային ստաժ:
11. Նախատեսել որոշակի շեմ, որից ցածր շրջանառություն ունեցող ԱԶ-ն և իրավաբանական անձինք ևս կարող ենք պատվիրել ինքնազբաղված անձանց որոշակի ծառայությունների մատուցում:
12. Բոլոր հարկային ծառայողներին պարտադիր վերապատրաստել ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների թեմայով:

13. Շարունակել և ավելի ինտենսիվ դարձնել հասարակության իրազեկման աշխատանքները ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների վերաբերյալ՝ որպես գործիք օգտագործելով պաշտոնական կայք էջը և իրազեկման արշավները:
14. Սեփական նախաձեռնությամբ կապ հաստատել «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքի առարկա բոլոր 23 գործունեության տեսակների մասով նախապես արտոնագրային վճար վճարած ֆիզիկական անձանց կամ որևէ այլ հարկային ռեժիմով գործունեության ծավալելու համար դիմաց անհատ ձեռնարկատերերի հետ և գումարը վերադարձրած չլինելու դեպքում վերադարձնել:
15. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ առաջնային գյուղատնտեսական արտադրությունը չի հարկվում ԱԱՀ-ով:
16. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ կոոպերատիվի և կոոպերատիվի անդամների միջև իրականացվող գործարքները չեն հարկվում ԱԱՀ-ով:
17. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել տարբեր ԱԱՀ շեմեր՝ գյուղատնտեսական կոոպերատիվի համար որպես կառույց և առանձին գյուղատնտեսների համար:
18. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ կոոպերատիվի և կոոպերատիվի անդամների միջև իրականացվող գործարքները չեն հարկվում շահութահարկով:
19. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել շահութահարկ չվճարելու ամբողջական արտոնություն կամ որոշակի տոկոսային արտոնություն 2024 թվականից հետո գյուղատնտեսական արտադրության համար»:
20. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ կոոպերատիվ ավելցուկից անբաժանելի պահուստային ֆոնդին տրամադրված հատկացումները ենթակա չեն հարկման շահութահարկով:
21. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ կոոպերատիվ ավելցուկից

կոռպերատիվի անդամների միջև բաշխված կորպորատիվ փոխհատուցումը ենթակա չէ հարկման շահութահարկով:

22. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ կոռպերատիվ շահույթը ենթակա չէ հարկման շահութահարկով:
23. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել գյուղատնտեսական արտադրության մեջ, այդ թվում՝ կոռպերատիվում, աշխատող անձանց աշխատավարձերի մասով եկամտային հարկից ազատում՝ ներկայումս գործող միայն սույն ոլորտում ընդգրկված ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող արտոնությանը հավելյալ:
24. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ գյուղատնտեսական կոռպերատիվների փայտերերի փայաբաժինները չեն դիտարկվում որպես պասիվ եկամուտ և ազատված են եկամտային հարկից:
25. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ գյուղատնտեսական կոռպերատիվները ազատված են կոռպերատիվի սեփականությունը հանդիսացող և կոռպերատիվին վարձակալության հանձնած անշարժ գույքի հարկից:
26. Փոփոխություններ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում և (կամ) ՀՀ հարկային օրենսգրքում և նախատեսել, որ գյուղատնտեսական կոռպերատիվները ազատված են կոռպերատիվի սեփականությունը հանդիսացող և կոռպերատիվին վարձակալության հանձնած շարժական գույքի, ներառյալ՝ փոխադրամիջոցների, հարկից:

## **2. Մաքսային ոլորտ**

27. Մաքսագերծման գործընթացում՝ գործարքի արժեքի մեթոդի կիրառման ժամանակ ծագող կոռուպցիոն ռիսկերը հաղթահարելու նպատակով ստեղծել արագ արձագանքման խումբ համապատասխան պետական մարմինների և, համաձայնության դեպքում, մասնագիտացված քաղաքացիական հասարակության ներկայացուցչությամբ:
28. Արագ արձագանքման խմբի մասին նախապես իրազեկել ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխում իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

29. Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին իրենց գործունեության վայրի տարածաշրջանային մաքսատանը գրանցվելիս տրամադրել հակիրճ տեղեկատվություն մաքսային արժեքի հաշվարկման մեթոդների վերաբերյալ:
30. Ավտոմեքենաների մաքսազերծման գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերը հաղթահարելու նպատակով առաջարկվում է ՊԵԿ կայքում ներդնել մաքսային վճարների գանձման առցանց հաշվիչ՝ հիմնվելով Վրաստանի փորձի վրա, որը հնարավորություն կտա անձին նախքան տրանսպորտային միջոցների ներկրումը, ինքնուրույն նշված գործիքի կիրառմամբ պարզել, թե՞ ինչ կարժենա ՀՀ տարածք ներկրվող տրանսպորտային միջոցների մաքսային վճարները և հարկերը: Հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին և դրանից բխող իրավակարգավորումները՝ նպատակահարմար է նախքան վերը նշված տվյալների լրացնելը, համակարգ մուտք գործելուց հետո նախատեսել հարց այն մասին, թե տրանսպորտային միջոցը որտեղի՞ց է ներկրվում. ԵՏՄ տարածքի՞ց, թե՞ երրորդ երկրից:
31. Հաշվի առնելով շուկայական գների տատանումները՝ վերոնշյալ առցանց հաշվիչի մաքսային վճարների սահմանման դեպքում նախատեսել դրույքաչափերի նվազագույն և առավելագույն սանդղակներ, որը հնարավորություն կտա նաև մաքսային ծառայողներին խուսափել շահառուների հետ հարաբերություններում առաջացող հակասություններից:
32. Մաքսային հսկողության համակարգը բարելավելու նպատակով ներդնել մաքսային հսկողության 4-րդ՝ «կապույտ» ուղի, որով կկարգավորվի հետբացթողումային հսկողությունը:
33. Նախատեսել մաքսային հսկողության բոլոր ուղիների համար ողջամիտ կարճ ժամկետներ՝ համապատասխան միջազգայնորեն ընդունված ստանդարտներին:

### **3. Ազատ տնտեսական մրցակցության ոլորտ**

34. Մենաշնորհները կամ գերիշխող դիրքը հաղթահարելու նպատակով առաջարկվում է ստեղծել իրական սեփականատերերի գրանցամատյաններ, որին առևտրային իրավաբանական անձինք պարտավոր են տրամադրել տեղեկատվություն այն մասնավոր անձանց վերաբերյալ, որոնք հանդիսանում են իրենց իրական սեփականատերերը: Նման գրանցամատյան վարող մարմին ՀՀ-ում կարող է հանդիսանալ Իրավաբանական անձանց պետական միասնական ռեգիստրը:
35. Սահմանել պարտականություն, ըստ որի ՀՀ-ում արդեն գրանցված առևտրային իրավաբանական անձինք ողջամիտ ժամկետում ձեռք կբերեն տեղեկատվություն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ և կտրամադրեն գրանցամատյան վարող



մարմնին, իսկ նոր գրանցվող առևտրային իրավաբանական անձանց համար նման տեղեկատվության տրամադրումը կհանդիսանա գրանցվելու համար պարտադիր պայման: Անհրաժեշտ է սահմանել, թե առևտրային իրավաբանական անձի աշխատակազմից կոնկրետ ում վրա է դրված նշյալ պարտականությունը, օրինակ՝ գործադիր տնօրեն, բացի այդ՝ նախատեսել վերոնշյալ տեղեկատվությունը արդիական պահպանելու պարտականություն:

36. Սահմանել պարտականություն իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության վերաբերյալ՝ ներառյալ փոփոխություններ կատարելով բաժնետիրական ընկերությունները կարգավորող օրենսդրական նորմերում և սահմանելով բաժնետերերի ցանկի հրապարակայնություն:
37. Սահմանել սանկցիաներ առևտրային իրավաբանական անձի և վերջինիս համապատասխան աշխատողի կողմից նշյալ պարտականությունը դիտավորյալ չկատարելու համար՝ այդ մասին պատշաճ ծանուցվելուց հետո, ապա ընկերությունները և այն աշխատակիցները:
38. Նախատեսել լծակներ գրանցամատյան վարող մարմնի համար՝ տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով ինչպիսիք են բանկային և հարկային գաղտնիքների տիրապետումը:
39. Նախատեսել լծակներ առևտրային իրավաբանական անձանց համար՝ իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով, ինչպիսիք են գործող սեփականատարերի կողմից իրենց բաժնեմասը վաճառելիս շահույթ/եկամուս գեներացնելու անհնարինությունը:
40. Հակամրցակցային համաձայնությունները հաղթահարելու նպատակով առաջարկվում է նախատեսել «cartel screen» համակարգչային ապահովման ծրագրեր ՏՄՊՊՀ-ի համար՝ որպես հակամրցակցային համաձայնությունների պայքարի միջոց: Հնարավորության դեպքում արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսել կառուցվածքային և վարքագծային «screen»-երի համադրում:
41. Հակամրցակցային համաձայնությունները հաղթահարելու նպատակով առաջարկվում է վերապատրաստել ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան աշխատակազմին կարմիր դրոշակների և «screen»-երից օգտվելու վերաբերյալ:
42. Պետական օժանդակությունում նեպոտիզմը և պատրոնաժը նվազեցնելու նպատակով առաջարկվում է ընդունել «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենք:

43. Տրամադրել համապատասխան լիազորություններ ՏՄՊՊՀ-ին պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ:
44. Նախատեսել պատասխանատվություն անօրինական պետական օժանդակություն տրամադրելու համար:
45. Նախատեսել համանման ծանրության պատասխանատվության միջոցներ պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց կողմից կատարված համանման իրավախախտումների համար:
46. Նվազեցնել ՏՄՊՊՀ հայեցողական լիազորությունները պատասխանատվությունների սահմանման գործում:

#### 4. Պետական գնումների ոլորտ

47. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածում նշված «յուրաքանչյուր անձ» բառակապակցությունը փոխարինել «շահագրգիռ անձ» բառակապակցությամբ: Շահագրգիռ է համարվում այն անձը, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են կամ կարող են խախտվել:
48. Բարձր գնահատելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում՝ մասնագիտացված կազմակերպություններին իրենց իրավասության տակ գտնվող ոլորտներում դիտել բողոք ներկայացնելու համար շահագրգիռ անձ և նախատեսել անձանց խախտված իրավունքների համար դատարան և (կամ) բողոքարկման խորհուրդ դիմելու իրավունքի իրացման հնարավորություն:
49. Առաջնորդվելով հասարակության օրինական շահերի պաշտպանության նկատառումներով՝ բողոքարկող խորհրդի համար նախատեսել իր նախաձեռնությամբ ի պաշտոնե վարույթ սկսելու լիազորություն:
50. Գնումների բնագավառում բողոքարկման խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ վարույթ իրականացնելու և խախտումներ հայտնաբերելու դեպքում հետագայում նշանակվելիք տույժի 0.5%-ը փոխանցել բողոքարկման խորհրդի հաշվեհամարին:
51. Գնումների բողոքարկման խորհրդի անկախությունը ապահովելու համար այն առանձնացնել ՀՀ ֆինանսների նախարարությունից և դարձնել ՀՀ կառավարությանն առընթեր մարմին:
52. Գնումների բողոքարկման խորհրդի անկախությունը ապահովելու համար սահմանել, որ այն իր վարձատրությունը այլևս չի ստանա լիազոր մարմնի միջոցով, այլ՝ ՀՀ պետական բյուջեի առանձին տոդով:

53. Գնումների բողոքարկման խորհրդի արդյունավետությունն ապահովելու նպատակով վերջինիս տրամադրել աշխատակազմ:
54. Գնումների բողոքարկման խորհրդի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ որպես գնումների ոլորտի քաղաքականություն իրականացնող մարմնի, մշակել տարբեր մասնագիտական փորձառություն ունեցող քաղաքացիական և բիզնես կազմակերպությունների տվյալների բազա:
55. Վերոնշյալ բազայում ընդգրկված կառույցներին ներգրավել գնումների բողոքների քննման գործընթացին՝ խորհրդակցական ձայնով կամ մասնագիտական կարծիք տրամադրելու միտումով: Մա, մի կողմից, կրթնագնի խորհրդի ծանրաբեռնվածությունը և կապահովի կայացվող որոշումների ողջամիտ ժամկետները, դրանց օբյեկտիվությունն ու հիմնավորվածությունը, մյուս կողմից, կբարձրացնի բողոքարկման գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը:
56. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան փոփոխություն կատարել, համաձայն որի՝ բողոքարկման խորհուրդը բաղկացած կլինի առնվազն երեք անդամից:
57. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան փոփոխություն կատարել, համաձայն որի՝ բողոքները կքննվեն կոլեգիալ՝ բոլոր անդամների մասնակցությամբ, և որոշումները կկայացվեն խորհրդի կողմից բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ:
58. ՀՀ ներպետական օրենսդրական համակարգ ներմուծել բողոքների և առարկությունների քննման հետևյալ մեխանիզմը: Շահագրգիռ անձի կողմից իրավունքների խախտում հայտնաբերելու դեպքում վերջինս պետք է իր առարկություններն ու դիտողությունները ներկայացնի գործարքի կողմին: Վերջինիս կողմից հնգօրյա ժամկետում պատասխան չներկայացնելու կամ նույն ժամկետում համաձայնության չգալու դեպքում միայն անձը կարող է դիմել բողոքարկման խորհուրդ կամ դատարան:
59. Փոփոխություններ կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքում և սահմանել ողջամիտ ժամկետներ գնումների գնահատող հանձնաժողովի կողմից գնումների գնահատման համար:
60. ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում փոփոխություններ նախատեսել, որպեսզի համակարգը թույլ տա հայտ ներկայացնել միայն այն դեպքում, եթե պարտադիր ներկայացման փաստաթղթերը ամբողջությամբ ներբեռնվել են: Մասնավորապես, առանձին տողեր նախատեսել վճարման պահանջագիրը և տուժանքի մասին համաձայնությունը կցելու համար:

61. ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում հուշումներ պատկերել ցանկացած այն դեպքերում, երբ որևէ փաստաթուղթ բացակայում է, հատկապես այն դեպքերի համար, երբ միննույն փաստաթուղթը բաղկացած է երկու մասից, օրինակ՝ վճարման պահանջագիր և տուժանքի մասին համաձայնություն:
62. Սահմանել որոշակի շեմ, որը չհատելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը կարող է չներկայացնել հայտի ապահովում:

## **5. Համակարգային բիզնես ոլորտ**

63. Նախատեսել գործարար շահերի պաշտպանի ինստիտուտի ձևավորման անկախ համակարգ: Կարելի է որդեգրել Ուկրաինայի փորձը, որի համաձայն Բիզնես օմբուդսմենին ընտրում է խորհուրդը, որում առկա են պետական, միջազգային և գործարար շահերի պաշտպանությամբ զբաղված կառույցների ներկայացուցիչներ, և որի որոշումները հետագայում ներկայացվում են կառավարության հաստատմանը:
64. Նախատեսել խորհրդի անդամների ընդունման մրցութային կարգ:
65. Նախատեսել որպես գործարար շահերի պաշտպանի խորհրդի կազմում ընդգրկվելիք գործարարների շահերը ներկայացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջ՝ վերջինիս կանոնադրությամբ ամրագրված բիզնես գործունեությամբ զբաղվող կառույցների շահերի պաշտպանությունը:
66. Նախատեսել, գործարար շահերի պաշտպանի խորհրդի կից գործող միջազգային կազմակերպությունների և գործարարների շահերը ներկայացնող կազմակերպությունների ռոտացիոն կարգ:
67. Նախատեսել գործարար շահերի պաշտպանի կողմից հաշվետվողականության հետևյալ մեխանիզմը. եռամսյակային հաշվետվությունների ներկայացում և պաշտպանի ինստիտուտի խորհրդին, և՛ ՀՀ վարչապետին:
68. Նախատեսել, որ գործարար շահերի պաշտպանը քննում է ոչ միայն գործարարների դիմումները, այլև՝ բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցների դիմումները, քանի որ շատ գործարարներ կարող են իրենց բողոքները ներկայացնել բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցներին:
69. Նախատեսել գործարար շահերի պաշտպանի կողմից գործարար ոլորտին վերաբերող՝ ՀՀ վարչապետին, ՀՀ ֆինանսների նախարարին և այլոց կից խորհրդի նիստերին մասնակցության պահանջ:
70. Նախատեսել, որ գործարար շահերի պաշտպանն իրավասու է անարգել մուտք գործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, առանց հատուկ

թույլտվության այցելել «ձեռնարկատիրական հոդվածներով» կալանավայրերում և քրեակատարողական հիմնարկներում գտնվող մեղադրյալներին և դատապարտյալներին, մասնակցել ձեռնարկություններում պետական մարմինների կողմից անցկացվող ստուգումներին և այլն, մասնակցել ձեռնարկություններում պետական մարմինների կողմից անցկացվող ստուգումներին, ձեռնարկատերերի և նրանց խմբերի իրավունքների պաշտպանության համար դիմել դատարան, բողոքարկել արբիտրաժային դատարանների՝ ուժի մեջ մտած դատական ակտերը:

71. Նախատեսել, որ գործարար շահերի պաշտպանի գործառույթների թվին են պատկանում նաև կոռուպցիան ծնող գործոնների վերհանումը և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության ապահովումը, օրինագծերի նախապատրաստումն ու մշակումը՝ նպատակ ունենալով չեզոքացնել կոռուպցիային նպաստող պատճառներն ու պայմանները, կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված մեթոդական աշխատանքների կազմակերպումը և Բիզնես ոլորտի գործողությունների կառավարումը՝ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համատեքստում:
72. Նախատեսել, որ Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, հասարակական կամ վճարովի հիմունքներով կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված գործարար շահերի բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից, որոնք կաշխատեն մշտական հիմունքներով, ինչպես նաև, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է դիմել փորձագիտական կազմակերպությունների:
73. Նախատեսել, որ գործադիր շահերի պաշտպանի թեկնածուն չպետք է երբևէ աշխատած լինի որպես պետական պաշտոնատար անձ որևէ մակարդակում վերջին 5 տարվա ընթացքում:
74. Նախատեսել, որ գործադիր շահերի պաշտպանին առաջադրվող պահանջները պետք է ներառեն նաև հակակոռուպցիոն և բարեխղճության բարձր արժանիքներ կրելը:
75. Նախատեսել, որ գործադիր շահերի պաշտպանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումը կայացնում է խորհուրդը՝ ձայների մեծամասնության պարագայում, որը ներկայացվում է ՀՀ վարչապետին՝ հաստատման:
76. Նախատեսել նաև գործադիր շահերի պաշտպանի լիազորությունների դադարեցում, եթե վերջինս իր պարտականությունների կոպիտ խախտումներ թույլ տա:
77. Նախատեսել անձեռնմխելիության երաշխիքներ գործադիր շահերի պաշտպանի համար, ինչպիսիք ունի մարդու իրավունքների պաշտպանը՝ հաշվի առնելով ՀՀ

սահմանադրության նորմերի պահանջները՝ օմբուդսմենի հատուկ կարգավիճակի վերաբերյալ:

78. Նախատեսել ոչ թե քրեական, այլ՝ վարչական պատասխանատվություն իրավաբանական անձանց համար:
79. Վերանայել իրավաբանական անձանց պատասխանատվության համար նախատեսված պատժատեսակների համակարգը՝ ներառելով նաև կանխարգելիչ բնույթի պատժատեսակներ, ինչպես, օրինակ, վարչական կամ դատական հսկողությունն է:
80. Ներդնել «Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր» (“Anti-Corruption Compliance Program”) գործիքը, որպես քրեական պատասխանատվությունից ազատման և/կամ մեղմացուցիչ հանգամանք իրավաբանական անձանց համար: Պիլոտային կարելի է սահմանել նման պատասխանատվություն մեծ ձեռնարկությունների համար:
81. Ներդնել մասնավոր դետեկտիվների ինստիտուտը՝ ընդունելով «Մասնավոր դետեկտիվ գործունեության» մասին ՀՀ օրենք:
82. Իրականացնել համապատասխան փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, որպեսզի մասնավոր դետեկտիվների կողմից ներկայացված տեղեկատվությունը դիտարկվի որպես թույլատրելի ապացույց:
83. Իրականացնել համապատասխան փոփոխություններ «Օպերատիվ-հետախուզական գործունեության» մասին օրենքում, որպեսզի հստակ սահմանվի, թե կոնկրետ որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրավունք ունեն իրականացնել մասնավոր դետեկտիվները:
84. Կատարել ուսումնասիրություն և պարզել, թե 2018 թվականի դրությամբ ի՞նչ տեսակի և ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ կոռպերատիվներ են գործում ՀՀ-ում:
85. Մշակել կոռպերատիվների վերաբերյալ մեկ միասնական օրենսդրական ակտ, որը կպարունակի կոռպերատիվների առանձին տեսակների վերաբերյալ դրույթներ:
86. Մշակել ՀՀ-ում գործող կոռպերատիվների առանձին տեսակների կանոնադրությունների նմուշային ձևեր:
87. Որպես միջանկյալ լուծում՝ փոփոխություններ կատարել «Սպառողական կոռպերացիաների մասին» ՀՀ օրենքում և նախատեսել, որ սպառողական կոռպերատիվները կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որը բխում է իրենց կանոնադրական նպատակներից:

## Աղյուսակների և գծապատկերների ցանկ

*Աղյուսակ 1. Եկամտային հարկի ամսական հարկվող եկամտի չափը և հարկի գումարը ըստ նախկին կարգավորումների*

*Աղյուսակ 2. Եկամտային հարկի ամսական հարկվող եկամտի չափը և հարկի գումարը ըստ ներկա կարգավորումների*

*Աղյուսակ 3. Եկամտային հարկի դրույքաչափերը Ռուսաստանի Դաշնությունում*

*Աղյուսակ 4. Եկամտային հարկի դրույքաչափերը Բելառուսում*

*Աղյուսակ 5. Եկամտային հարկի դրույքաչափերը ԵՄՏՄ երկրներում*

*Աղյուսակ 6.*

*Աղյուսակ 7. Բողոքարկման քանակական ցուցանիշները 2011-2016թթ. ընթացքում*

*Գծապատկեր 1. Մաքսագերծողների իրազեկության մակարդակը տրանսպորտային միջոցների ներկրման մաքսագերծման կանոնակարգերի մասին*

*Գծապատկեր 2. Ռիսկերի բաշխումը Վրաստանում ներմուծելիս և արտահանելիս ըստ մաքսային հսկողության գոտիների*

*Գծապատկեր 3: Մպատողական կոտպերատիվների թիվը ըստ գործունեության ոլորտի*